

ՀԱՅԿՈՒՀԻ ՔՅՈՒՓԵԼՅԱՆ



ԵՅԼԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ

4(47.925)

x-71

h2

ՀԱՅԿՈՒՀՀԻ ՔՅՈՒՓԵԼՅԱՆ

ԲԵՅԼԱՆԻ ԲԱՐԲԱՌՈ

Հեղինակային իրատարակություն

ԵՐԵՎԱՆ · 2016

Քյուփելյան Հայկուհի

Ք 711 ԲԵՅԼԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ / Հ. Քյովելեյան. — Եր.: Հեղ. հրատ., 2016. — 344 էջ:

Ուսումնասիրության մեջ ըննարկվում է հայերենի ծայր հարավարևմտյան բարբառներից մեկը՝ Բեյլանի բարբառը։ Ներկայացվում են բարբառի հնչունական համակարգը, պատմական և համաժամանակյա տեղաշարժերն այդ համակարգում, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները։

Բերվում են նմուշներ, ինչպես նաև հայերենի ու բարբառի համեմատական բառազաներ:

Կարող է օգտակար լինել բարբառագետներին, հայերենի պատմությամբ ու տեսությամբ զբաղվողներին և առհասարակ հայերենագետներին:

2S3 811.19'282

QUT 81.2 Z-67

ISBN 978-9939-0-1883-6

© Քուփեյան Հ., 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

Կիլիկյան խմբակցության բարբառների մեջ Բեյլանի բարբառն իր որոշ առանձնահատկություններով հետաքրքրություն է ներկայացնում: Ինչպես զիտենք, կիլիկյան խմբակցության ամենահոնդ հայաբնակ Աղանա քաղաքը 18-19-րդ դարերում թքքախոս դարձավ, որի բարբառի մասին ոչինչ հայտնի չէ: Նույն բախտին արժանացան նաև նրան հարեան միշտ շարք բարբառներ: Շնորհիվ անմատչելի արծվաբների, Բեյլանը և հարեան Ձեյթունը, Հաճընը, Մարաշը պահպանել են իրենց լեզուն, որը այս կամ այն շափով ազդվել է թուրքերենից:

Բարեկեն Եպիսկոպոս Կյուլեսերյանը բանափրական մի հոդվածում նշում է, որ հայը, շուրջ հինգ դար գտնվելով թուրքերի տիրապետության տակ, իր շահի համար ստիպված էր սովորել և խոսել թուրքերեն։ Սակայն հայը իր մայրենի լեզուն չպիտի մոռանար, եթե մասնավոր բռնություն չքաննեցվեր իր վրա։ Պատմվում է, թե ենիշերիների ժամանակ «մինչեւ իսկ հայերենախօս լեզուները կը ծայրատեն եղեք վայրագօրեն։ Աստիւ մնացած է Մարաշի, Այնթապի, Բեյլանի թուրքերէնին մեջ մեծերէ փոքրիկներու եղած սպառնալիքը։ «Տիլինի քեսերիմ հա՛», կամ «Աստամըն տիլինի քեսերիկ» (լեզուդ կիսրեմ կամ մարդու լեզուն կիսրեն)։ Թուրքը կ ընէր այդ բռնադատութիւնը Հայոց եւ ուրիշ փոքրամասնութեանց վրայ զանոնք ընկճելու եւ անոնց վրայ տիրելու համար, որովհետեւ ինքը՝ իբրև զինուորական եւ աւարառու ցեղ քաղաքականապէս ցած էր, քան իր տիրապետած ժողովուրդները։ Եւ այս բռնադատութիւնը ստիպած է, որ քաղաքներու բնակիչները աւելի շուտ մոռնան իրենց մայրենի լեզուն, քան զիղացիները, որոնք այդ տեսակէտով անմիջական ձեշումի տակ չեն, մանաւանդ բոլորովին հայաբնակ շրջաններու մեջ։ Հետեւարար, եղածը թրքախօսութիւն ըլլալէ աւելի բռնութեան տակ հայերենամոռացութիւն էր, ինչ որ աւելի յեսնազոյն ժամանակներու չարիք մըն էր»¹։

Թուրքական միաձուլման քաղաքականությունը Ադանայի բախտին կարող էր արժանացնել նաև Բեյլանը, սակայն մի կերպ այն խուսափել է ձուլման վտանգից:

¹ Բարեկեն Եպիսկոպոս Կիվլիսէրեան, «Տաթեւ» տարեցույց, 1929 թ.

Հայերենագիտությունը թեև բարբառագիտական բավական հարուստ ավանդույթներ ունի, սակայն լեզվի տարածքային որոշ տարրերակներ դեռևս առանձին, մենագրական հետազոտության չեն ենթարկվել: Իսկ այդ միավորներից շատերը կորել են կամ կորչելու վտանգի տակ են, ուստի յուրաքանչյուր հապաղում կարող է անվերադարձ կորուստների տեղիք տալ:

Ուսումնասիրվող բարբառը հայերենի ծայր հարավ-արևմտյան տարածքի միավորներից է:

Այն Բեյլան զավարի և շրջակա գյուղերի բարբառն է, որը, դեռևս անցյալ դարում, մինչև 1970-ական թվականները կենսունակ է եղել Բեյլանցիների ավագ սերնդի մեջ և եղել է ընտանեկան հաղորդակցման հիմնական միջոցը: Սակայն նոր սերունդը արդեն հաղորդակցվում է գրական արևելահայերեն և արևմտահայերեն տարրերակներով:

Բարբառախոսների նվազումը, լեզվական միասնական միջավայրի բացակայությունը, ինչպես և արտաքին ազդեցությունները ոչ միայն սահմանափակում, այլև դադարեցնում են բարբառի կենսունակությունը: Ներկայումս Բեյլանցիները սփոված են տարրեր աշխարհամասերում և այլևս չեն խոսում իրենց մայրենի բարբառով:

Տեղեկանալով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում մի քանի հայրենակիցներ դեռևս խոսում են բարբառով, տողերիս հեղինակը 2001, 2002, 2005 թթ. այցելել է նրանց ու վերջին մոհիկաններից տեսազրություններ ու ձայնագրություններ կատարել:

Աշխատանքի կատարմանը իրենց գրույցներով, ժողովրդական խաղիկներով, հետաքրքիր պատմություններով, բարբառային նյութի իմացությամբ իրենց անմիջական մասնակցությունն են բերել Մարիցա և Հարություն, Մարտիրոս, Հակոբ, Ժիրայր, Հովհաննես Քյուփելյանները, Աբրահամ Աբրահամյանը, Իսկենդեր Աղազարյանը, Արուսյակ Վարդեսարյանը, Ռաֆայել և Հոհիսիմե Վրթանեսյանները, Սանվել Մարաշյանը, Վիկտորյա Գյողելյանը, Նուբար Միսի-Գևորգյանը, Վարդուհի Ֆոդուլյանը և ուրիշներ:

Այսօր մեր հայրենի Բեյլան բաղաքն այլևս անցել է պատմության գիրկը, իսկ բարբառն էլ բոլորովին մոռացվելու ու կորչելու վտանգին է ենթարկված: Մեր այս ամփոփ ուսումնասիրության նպատակն է՝ ներկայացնել բարբառի հնչունարանությունը, բառային կազմն ու բերականական կառուցվածքը, ինչպես նաև տալ բանահյուսական պատառիկներ բարբառով՝ փորձելով ամրողացնել բարբառի գիտական նկարագիրը: Սոռացությունից փրկելու համար աշխատությանը կցում ենք նաև ազգագրական նյութեր հարսանեկան ծեսերից,

շանզյուլումներից, ժողովրդական բանահյուսության նմուշներից և այլն, որոնք նույնպես շրջանառության մեջ կմտնեն որպես նոր համալրումներ ազգագրագետների ու բանահավաքների համար:

ԲԵՅԼԱՆԻ ԲԱՐԲԱՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՇՐՋԱՆԱԵՐԸ

Բեյլանը զավար (սանջակ) է Կիլիկիայում, Աղանայի (հետագայում՝ Հալեպի) նահանգում: Գտնվում է Իսկենդերունից (Ալեքսանդրեթ) մոտ 15 կմ հարավ-արևելք: Զանազան աղբուրներում, գրականության մեջ հանդիպում է Պիլան, Պէյլան, Բաղրասու Բէլսագ, Բաղրասու Բէլսանգ, Բէլան, Բէլանգ, Բէլսա, Բէլսանգ, Բէլսա, Բէլսանգ, Բէլսա, Պաղրասու Պէլսանգ, Պաղրասու Պէլսանկ տառադարձությամբ:

Բեյլանի ենթաշրջանի մեջ մտնում էին հետևյալ հայ գյուղերը. Բեյլան, Սօվուգ Օլուգ, Աթըխ, Նարկիզիք, Ֆարթըլը, Գյօգէլի, Ղանը Դէրէ, Պալլը Ղաստալ, Դէյիրմէն-Դէրէ, Մէզզիք Էօնու, Բէյլ-Դէրէ, Քյոմուր շուխուրու, Չաթախ, Չախալը, Պախրաս, Չինարը, Սալսը, Չարլախ, Ճիզմէլի, Գըրըգ Խան, Խոկենտէրուն, Սօղանձի:

Բեյլան գյուղաբաղաքը՝ համանուն շրջանի կենտրոնատեղին, հիմնվել է մի անձուկ ձորակում, դարի վրա, աստիճանաձև: Իսկենդերունից դեպի Հալեպ ձգվող երկարությին անցնում է այս գյուղաբաղաքի միջով: Բեյլանից 2 կիլոմետր հեռավորության վրա գտնվում է Ասորական դուռ լեռնացքը՝ Դրուն Ասորվոց (Pylae Syriae) կոչված կիրճը, որ այժմ ծանոթ է Բեյլան Կչիսի կամ Պէլի անունով: Հատ Ղ. Ալիշանի՝ թերևս համընկնում է ին շրջանում Պիկտանոս կոչված քաղաքի հետ:

«Քաղաքաւանն Պէյլան կամ Պիլան, որ և Պէլսանկ ըստ Թուրքաց, թուի կոչեցեալն՝ ի հնումն Պիկտանոս, Pictanus, զի՝ ի ճահ զայ տեղին Երուսաղեմեան ին ճանապարհորդեան, ինն մոօն յԱլեքսանդրեկէ և ուր ի Պաղրասայ տարակաց գոլ յերկոսին կողս անձուկ ձորակի կառուցեալ իբրև ի 600 Չ. բարձրաւանդակի, որոյ տրամագիծ է 50 Չ: Աստիճանաձև դար ի դարի վերայ հաստատեալ են տունքն, և պարտէզ ի տափարակս ուրեր, գեղեցիկ տեսարանաւ. ի ստորև հայելի իմն ունելով զգետակն համանուն՝ որ ի Տասս լեռն իշանէ, և շուրջ՝ զզանազան կերպարանն ծառոց և ժայռից. զով և առողջասու օղովք և առատահոս ջրովք. վասն որոյ և ամարանց է բնակչաց Աղեքսանդրեկի»²:

Համապատասխան անունով վայր Կիլիկիայի հայկական թագավորության շրջանում չի հիշատակված, բայց Ղ. Ալիշանը Լեռն 2-

² Ղ. Ալիշան, «Սիսուն»– Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 420:

բդի պայմանագրերից մեկում հիշատակված Բյուլումը հնարավոր է համարում նույնացնել Բեյլանի հետ:

Այստեղից 13 կիլոմետրի վրա գտնվում է Թօփ պողազը, որտեղ Անտիոքի ուղին միանում է Հալեպ-Խսկենդերունի գծին:

Բեյլանի կիրճը, որտեղից տեղի է ունենում քարավանային անցուղարձը, ծովից 670 մետր բարձրության վրա է: Այս կիրճը ձգվում է դեպի հյուսիս, մինչև Բայաս: Այստեղից էր, որ Մեծն Ալեքսանդրը արագ հակընթաց շարժումով անցավ Ամանոս լեռները և հանդիպեց Դարեկին,— այսպես է նշվում «Կիլիկիա» աշխատության մեջ³:

Այս անցը մինչև այսօր կարևորություն ունի: Առևտրական ճանապարհ է դեպի Հայաստան, Միջազգետը:

Բարձունքից աջի առաջ պարզված տեսարանը սքանչելի է: Ամանոս և Տորոս լեռները իրենց բարձրաբերձ սարերով, իսկ Եփրատ գետն ու Միջերկրական ծովը՝ իրենց տարբեր հրապույրներով, պատկերանում են դիտողի աշքին:

Բեյլանը մի գեղազվարձ և սիրուն դիրք ունի: Հսկա ժայռերով պաշարված, բազմաթիվ ծառերով շրջապատված և հորդահոս ջրերով ոռոգված մի առողջավետ ամառանց էր, ուր դիմում էին Խսկենդերունի բարեկեցիկ ընտանիքները:

Այս զավառակի կեսը, որ Ամրդ կոչված դաշտի հյուսիսային մասում է և Գարա Սու գետակով բաժանվում է հարավային մասից՝ հողագործական և անասնաբուժական լավ պայմանների մեջ է: Իսկ մյուս կեսը՝ լեռնային դիրքի վրա՝ լավ մշակված արդյունաբեր հողերից է բաղկացած: Ամեն տեսակ ծառեր աճում են այնտեղ. կաղնիների, սոճիների հետ մեկտեղ բարձրանում են և պտղատու ծառեր: Մանավանդ առատ են թքենիները, որոնք կազմում են Բեյլանի համբավավոր մետարսի հարստության աղբյուրը:

Բեյլանը գրեթե պատմություն չունի և ոչ էլ որևէ հնություն: Հիշատակության արժանի են միայն ձորեզը որմը՝ 1 կիլոմետր երկարությամբ, որի վրա հաստատված է երկաթուղին:

Ծողովրդական ավանդությունը պատմում է, որ Սուլթան Սուլեյմանը Հալեպ գնալիս անցնում է այդ նեղ կիրճով, որտեղ և հարձակվում են ավազակները: Սուլթանը մի կերպ փրկվում է, և այդ վայրի անունը դնում Բելան, այսինքն՝ փորձանը: Ճշմարիտն այն է, որ Սուլթան Սուլեյմանը 1554-ին բնակիչներ բերեց այստեղ և քաղաք հաստատեց:

³ «Կիլիկիա» – Փորձ աշխարհագրութեան Արդի Կիլիկիոյ, Սատենադարան «Արար» – էջ 3:

Բեյլան (Պելեն) անունը ստուգարանում են որպես երկու պէլ, այսինքն՝ կիրճ կամ անցը: Այստեղը սկզբում կոչվում էր Պախրաս Պելի և Այն Յուր Բել:

Բեյլանից շատ հեռու չեն Պախրասի ավանը և ավերված բերդը: 1351 թվականին տակավին շեն էր Պախրասը: Պախրասից դեպի հարավ մեկ օրվա ճանապարհ էր դեպի Դարպասակ բերդը: Ավանդություններին նայելով՝ Դարպասակը այժմյան Սուրադ Փաշա կամուրջի մոտերքն էր, իսկ ումանք այս կամուրջի և Պախրասի մեջտեղ գտնվող Ազ դենիզ (Ճերմակ ծով) լճակում գտել են Դարպասակի վերաբերյալ հնություններ:

Պախրասից ավելի հեռու, Անտիոքյան լճի հյուսիս արևմուտքում գտնվում էր Շիհախահատիս կոչված տեղը, որը անկարևոր մի պահակակետ էր, բայց սահմանագույնի լինելու համար Հերուս թագավորը չկամեցավ հանձնել Բիպարսին և գլխավորապես սրա համար էր, որ տեղի ունեցավ 1266-ի ցավալի պատերազմը:

Հիշյալ լճի մոտերքում կամ Անտիոքի զավառակում պետք է փնտրել Կաստիմը կամ Կասդոնը, որ մի ամուր, եռապարիսպ և բրզավոր բերդ էր հայերի ձեռքում: Կաստիմը 1061-ին շինվել էր հույների ձեռքով, ինտ հաջորդաբար գրավել էին լատինները և հայերը: Անտիոքի իշխաններն իրենց սեփականությունն էին համարում այս բերդը և պահանջում էին հայերից: Լևոնը համաձայնվեց Տաճարական ասպետներին թողնել այն ժամանակ, եթե իր եղբոր թոռան (Ռուբեն-Ռեյմոնդի) իրավունքը հարզվի և Անտիոքի իշխան դառնա, բայց հետո, եթե Տաճարականները ուժ տվին Տրիպոլիսի կոմսին և Ռուբենը իրավազուրկ եղավ, այն ժամանակ Լևոնը ետ առավ Կաստիմը: Սակայն 1213-ին հաշտվեց և նրանց վերադարձեց: Բիպարսը 1265-ին գրավեց լատիններից: Թաթարներն էլ մի փոքր ժամանակ խլեցին այն եզիատացիների ձեռքից (1280):

Այս ենթաշրջանի բնորոշ բարբառը Բեյլանի բարբառն է, որից այս կամ այն չափով շեղվում են մյուս զյուղերի խոսվածքները, բայց ընդհանուր գծերով մնում են նման: «Լեզու հասարակաց տաճկերէն է. բայց Հայր իրենց բնական և մայրենի լեզուաւ կը վարուին, փոքր ինչ աղճաւեալ»⁴:

Կիլիկյան մեր իշխաններն ու արքաները կարողացան երեք երկար դարեր ապրել Կիլիկիա երկրում, որ շրջապատված էր ավելի գորավոր և բազմաթիվ թշնամիներով: Հանձնեցին Կիլիկիոյ դաշտային կարևոր բերդերը, տվին «Դրունք Ամանույան» կոչվող անցքերն ու ամրոցները, արքայական հրովարտակներով հանձնեցին Ֆրանկ ասպետներին,

⁴ Աստուածատուր Վարդապետ Տէր Հովհաննեսեան, «Կարձ ճանապարհորդութիւն Յասորիս», Սիոն – 1868, էջ 172:

որպեսզի կարողանան պահել լեռնային Կիլիկիան, նրա ստվարաթիվ վանքերն ու մենաստանները, ուր հայ մշակույթը բարձր զարգացում ու թոփք էր ապրել Կիլիկյան լեռնամասի այդ անմերձենալի անտառների, ձորերի և լեռնադաշտերի մեջ, եւ ուր շնորհալիներ, լամբրոնացիներ, սկսուացիներ, այգեկցիներ, Սարգիս պիծակներ անդուլ, անդադար, աղոտ մոմի ու ձերի ճրագների տակ բոլորանվեր անձնվիրությամբ դարբնում էին հայ մշակույթը: Մինույն պարագաների տակ մեր իշխանները, արքաներն ու ասպետները ևս, լինի բարձր քաղաքականությամբ, լինի դյուցագնական պատերազմներով, երկար դարեր պահեցին Կիլիկիան իրենց արյունով ու քրտինքով ոռոգելով նրա լեռները, ձորերն ու դաշտերը:

«Հայկական Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն յետոյ, դաշտային հողամասին վրայ գտնուող հայ գիւղացիութիւնը ասպատակող հորդաներու հալածանքէն տարուած, ապաստանեցան լեռներու անառիկ դիրքերու մեջ կամ մութ անտառներու ամայի առանձնութեանց քողածածուկ հովիտներու մեջ կամ սարերու վրայ, որով քանի մը դարեր յետոյ իսկ, մենք ունեցած չենք հայ գիւղացիութիւն դաշտային կոչուած Կիլիկեան հողամասին մեջ:

Կիլիկիոյ հայութեան վերջին արտագաղթէն առաջ, ինչպէս ծանօթ է, հայ գիւղեր չունեինք և չենք ունեցած դաշտային մասին մեջ: Փայտափ և Այսափ մօտերը կային քանի մը հայկական գիւղաքաղաքներ ու գիւղեր, որոնք Տեօրքեօլ-Երզին-Էօզերլի, Նաճարլի, Չօրմարգուան անունով ծանօթ են: Բայց կարծես այս տեղերու բնակչութիւնը, նորահաստատ հայութեան թեկորներ եղած են՝ Սասունէն, Տիգրանակերտէն, Խարբերդէն և այլ տեղերէ, մասնաւորաբար թրքախոս քաղաքներէ հաւաքուած:

Կիլիկեան պատմութեան մեջ այս տեղերուն կը տրուի Ճկեր անունը. այս բառն իսկ հայկական հնչում չունի:

Մեր յիշած այս գիւղերուն բնակչութիւնը թրքախոս եղած է. այս իսկ փաստ մըն է, որ անոնք կիլիկեան շրջանին գոյութիւն չեն ունեցած, մինչ թիշ անդին Ամանոսեան լեռներու վրայ գտնուող հայկական գիւղերը հայախոս են, ինչպէս Պեյլան և Աթըր հայկական գիւղերը, որոնք ունին իրենց գաւառաբարբառը:

Հայ գիւղացիները Կիլիկիոյ դաշտային հողամասէն հեռացած, անառիկ դիրքերու, անտառներու ու ձորերու անմատչելի ծերպերուն վրայ իրենց բոյնը դրած են, ենու մնալու համար հալածանքներէ: Զեյթուն, Հաճին, Վահկայ, Վապան, Անտեռուն և շրջակայքը հայ գիւղացիներով բնակուած են և ունեցած են իրենց յատուկ գաւառաբարբառները, վանքերը, աղօթատեղիները: Անվախ կեանք մը վարելու ներքին ազատ

բնագդէն մղուած, ընտրած են այդ մեկուսացած վայրերը, գեթ պահելու համար իրենց կիսանկախ գոյութիւնը»⁵:

Դ. Ալիշանը գրում է, որ 1773 թ. ոմն օտարազգի, օթևանելով Բեյլանում, գրում է բնակիչների և նրանց լեզվի մասին. «Մահմետականը և Հայր ամեներեան աւազակը են առ հասարակ. սորին վասն դեսպանն ամբողջանեալ ձիաւորեալ ընդ առաջ մեր տարաւ զմեզ ի Բեյլան...: Յելանելն մեր յանառիկ լեառն՝ զնալ ընդ քարավէծ ճանապարհն Բեյլանայ, ջորեպանքն խօսէին ընդ միմեանս, բայց ոչ իմանայար զբարբառ նոցա, զի ոչ Արաբացւց, ոչ Մարաց, ոչ այլ ազգաց և ոչ Հայոց նմանութիւն ինչ ունէր. իսկ մեք զարմանայար ընդ լեզուախօսութիւն նոցա. ապա այլ ազգական լեզուաւ հարցի ցնոսա, թէ յորոց զ ազգաց էք դուք. նոքա պատասխանի ետուն թէ, Հայ եմք և հայերէն խօսիմք...: Ապա ուշ եղեալ մեր բանից նոցա՝ սակաւ ուրեք բառու ինչ հայերէն իմանայար...»⁶:

Բեյլանի բարբառը «Կը» ճյուղի բարբառներից է: Մի շարք գծերով հիշեցնում է Հաճընի բարբառը, բայց նրանից տարբերվում է շատ հատկանիշներով, նկատվում է թերեւ նմանություն նաև Քեսարի և Սվեղիայի բարբառներին: Այս ճյուղի բարբառներից միմյանց համեմատաբար մոտ հարեան են Զեյթունի, Մարաշի, Սվեղիայի և Բեյլանի բարբառները, որոնք պատմականորեն միմյանց հետ առնչվել են: Այսպէս Զեյթունի և Մարաշի բարբառները գտնվել են պատմական Կիլիկիայում, իսկ Սվեղիայի և Բեյլանի բարբառները՝ Կիլիկիային հարեան Անտիոքի շրջանում, Աղանայի վիլայեթում, որը միջին դարերում հաճախ միացած է եղել Կիլիկիայի հետ զանազան կապերով:

Այս բարբառի մասին ամբողջական ուսումնասիրություն չի եղել մինչև հիմա: Միայն 1967 թվականին այս բարբառի գոյության մասին տեղեկանում ենք S. Անդրեասյանի «Սվեղիայի բարբառ» գրքից: Նա կազմել է «Տախտակ Քիսրինըզի և Կիլիկյան բարբառներու միջև հասարակաց բառերու», որտեղ բերել է Բեյլանի բարբառից բառային մի քանի նմուշներ: Նա նշում է, որ «համեմատությունը ալ ավելի Հաճընի և Մարաշի հետ եղած է, քանի որ մեր առջևը ունեցած ենք «Մարաշ» և «Հաճըն» ընդհանուր պատմությունը» գրքերուն լեզվական բաժինները: Իսկ Զեյթունի և Բեյլանի բարբառներուն շուրջ տպված ուսումնասիրություններ չունենալով՝ որչափ որ կրցանք, օգտվեցանք ապրող զեյթունցիներէ և բեյլանցիներէ»⁷:

⁵ Տորո. Յ. Տէր Ղազարեան, «Հայկական Կիլիկիա», Տեղագրություն, 1966, Լիբանան, էջ 43:

⁶ Դ. Ալիշան, «Սիսուան», էջ 420:

⁷ Տ. Անդրեասյան, «Սվեղիայի բարբառ» Երևան, 1967 թ., էջ 286:

Հայկ. ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի կողմից 1977 թ. լույս տեսավ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը», որի նպատակն էր նախապես որոշել լեզվական այն հիմնական հատկանիշները, որոնք պետք է դրվեն ապագա բարբառագիտական ատլասի քարտեզների հիմքում և մյուս կողմից, ապահովել այդ հատկանիշների համար անհրաժեշտ նյութերի հավաքումը:

Բեյլանի բաժնի նյութերի հավաքմամբ զբաղվեց Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող Ա. Հանեյանը 1983 թ.:

ԲԵՅԼԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ ՏԵՂԸ ԿԻԼԿԻԱՅԻ ԵՎ ԱՆՏԻՈՔԻ ԲԱՐԲԱՌԱԽԱԽԵՐԻ ՄԵԶ

Տարագրության ու գաղթականության ալիքը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ընդգրկեց ողջ արևմտյան Հայաստանի զավառները, ու քուրքահայ բնօրրանը դադարեց որպես այդպիսին գոյություն ունենալուց: Այդ շրջանների բարբառները իրենց ընտիր բառերով, բարդություններով, ոճերով ու ասույթներով հայ լեզվի տևական և առատ շտեմարաններ էին, որից օգտվում էր աշխարհաբարը գրականության վարպետների շնորհիվ: Այդ բարբառներից շատերը ուսումնասիրված են, փրկված անհետացումից: Սակայն շատերն են անցան պատմության գիրկը, փակված մնացին ու դատապարտվեցին հավիտենական մոռացման: Այդ վտանգի առջև է կանգնած Բեյլանի բարբառը:

«Կիլիկեան կոչուած հայերենը Միջնադարի արեւմտահայերենն է, որ կ'իշխէր Անիէն մինչեւ Կիլիկիա: Շատ բնական է ներառյել, թէ Քարային Կիլիկիայի հիւսիսային արեւելեան քանի մը քաղաքներուն եւ գիտերուն՝ ինչպէս Մարաշ, Զեյթուն, Հաճըն, նաև հարավային արեւելեան քաղաքներէն և գիտերէն մասնաւրապէս Սուհելիոյ հայ գիտերուն խոսված զաւառաբարբառները շարունակութիւնն ըլլան Կիլիկեան ուսմկօրէնին: Ան ալ՝ իր կարգին՝ շարունակութիւնը այն բարբառին, զոր կիսուէր Բազրատուննեաց անկումէն ետքը Մեծ Հայաստանն դեպ ի Քարային Կիլիկիայի հովիտներն ի վար տարածուող հայ մեծ զաղթականութիւնը:»

Հրաշյա Աճառեան՝ «Հայ բարբառագիտություն» երկին մեջ, էջ 199–200 (Էմինյան Ազգագրական Ժողովածու, հատոր Ը.) կը գրէ. «Այս ընդհանուր անուան տակ կուգենք ամփոփել Զեյթունի, Հաճընի, Մարաշի և ասոնցմէտելի հարաւ Քիլիսի, Փայտա, Ալեքսանտրէդի, Անթարիոյ և Սուհելիոյ

մեջ խոսուած հայերենը: Թէեւ ասոնք իրենց մեջ կը ներկայացնեն բաւական տարբերություններ, սակայն ընդհանուր յատկանիշները ավելի մեծ և հասարակաց ըլլալով՝ կարելի է զանոնք ենթաքարբառներ համարել»: Այս կերպով այս պատկառելի հեղինակությունն ալ կը նդունի, թէ Արեւելեան հայակիլիկիոյ բարբառը՝ յիշուած սահմաններուն մեջ ծագումով մեկ էր, որ յետոյ ստորաբաժնուած է ենթաքարբառներու»⁸:

Բնականաբար, լեռնային ինքնամփոփ զավառներում, ավաններում և գյուղերում զործածվող այս բարբառը ավելի երկար կանք ունեցավ, քան դաշտային քաղաքներում, ուր բարբառը տեղի տվեց թուրքերենի առջև: Լեռնային կենտրոնների իրարից հեռու գտնվելը և չհաղորդակցվելը նպաստեց բարբառը ենթաքարբառների ստորաբաժանվելուն: Այս երևույթը էր Կիլիկյան Հայաստանի դարասկզբի տեղահանություններից ու աղետներից առաջ: Ինչպէս նշում է Գր. Գալուստյանը իր «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն» գրքում, «Մարաշ, Զեյթուն և Հաճըն կը կազմէին զաւառաբարբառներու խումբ մը, իրարմէ թիշ մը տարբեր: Արեւելեան Կիլիկիոյ հիւսիսային բարբառը մասնաւրապէս ազդուած էր թրբերէն՝ փոխ առնելով շատ մը բառեր: Հարաւային շրջանի, մանավանդ Քեսապի կողմերը, զգալի էր նաև Արաբերէնի ազդեցութիւնը: Իսկ Դաշտային Կիլիկիոյ քաղաքներուն եւ գիտերուն մեջ, մանաւանդ վերջին ժամանակները, արդէն դադրած էր այդ զաւառաբարբառներուն զործածությունը»:

Զեյթունի, Հաճընի, Բեյլանի, Մարաշի բարբառների համեմատությունը դյուրացնելու և դրանք որպէս կիլիկյան բարբառներ ներկայացնելու համար բերենք այդ բարբառներից բառերի և ոճերի մի կարճ ցանկ, Տերունական աղոթքը:

Տարակույս չկա, թէ այս բարբառները, նրանց հնչումներն ու շեշտերը ճիշտ ըմբռնելու և բաղդատելու համար դրանք պետք է լսել մարաշցու, զեյթունցու, հաճընցու, բեյլանցու և սվեղիացու բերանից: Սակայն, այստեղ բերված բառերն ու ոճերը, ինչպէս նաև թարգմանությունը ուշադրությամբ բաղդատելով կարելի է հաստատել մեր այն կարծիքը, թէ այս բարբառները ճյուղավորումներն են խոշոր մի բարբառի, որ երկար տարիներ խոսվում էր Կիլիկիոյ մեջ: Գրաբարյան հնաբանություններ, ձայնավորների փոփոխություններ, բաղաձայնների սղումներ ու երկրաբառների փոփոխություններ և բավական շատ այլ ընդհանրություններ կան այս բարբառների մեջ: Թուրքերենի ազդեցությունը բավական ուժեղ է այս բարբառներում, առավելապէս

⁸ Գր. Գալուստյան, «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն», 1934, Նիւ Եռք:

Մարաշի բարբառում: Կարծում ենք հետաքրքրական կլինի ստորև ներկայացվող առօրեական բառերի համադրական աղյուսակը, որը կարող է ակնառու դարձնել այս բարբառներին մերձեցնող և տարբերիչ հնչյունական իրողությունները:

Աշխարհաբար	Մարաշ	Զեյթուն	Հաճըն	Բեյլան
հաց	hog	hog	hog	hog
ջուր	ձօր	ջօյ	ձույ	ձուր
կերակուր	ուտուզ	կէեակույ	ուտելիք	ուդրիք
ապուր	ապուր	ապոյ	ապույ	արուր
զգեստ	լաթիր	լաթէյ	լաթէյ	լաթիր
խոսք	ծրացք	խէոր	զըյից	խուսք
ժամ (եկեղեցի)	իժում	կիղիցէ	իժում	իժում
հայր	տատա,	տատա,	պօպ, հայիկ	դադա,
	պօպ	պօպ		բօք
մայր	մէր	մէյ	մայիկ	մնար
երեխա	պլուզ,	պլուզ,	պլոզ,	պուլուզ,
	պլուզտէք	պլուզտէք	պլոզտէք	պլուզդէք
աղջիկ	ախճին,	ախճն,	աջկընստէք	ախճին,
	ախճինտէք	ախճընտէք		ախճինդէք
աղեկ	բորստ	աղոյ	բոյինտ	բրինդ
էժան	բոռս	էժէն	բոռս	աժօն
անալի	ալլա	անլր	անլի	ալլր
երկու	իրկուք	իյկուք	իյկուք	ըրգուք
երեք	իրիք	իյիք	ժէք	իրիք'
շորս	շիրս	շիյս	շուէյս	շո՛րս
հիսուն	իսուն	հիսուն	իսուն	իսուն
հարիր	հէրիր	հայիս	հէյիյ	հէրիր
ես	իս	իս	ես	իս
դու	տոն	դոն	դուն	տուն
այն	էն	էան	ան	էնի

ինձանով	ինձմէվ	ինձմէվ	ընծիկիննէվ	ընձմօվ
քեզանով	քիզմէվ	քիզմէվ	քինմէվ	քիզմօվ
նրանով	ինիկէվ	ինիկէվ	ինյի հիտ	էնուր հիդ
ուտել-կերա	ուտիլ-կիրո	ուտիլ-կիեօ	ուտիլ-կիյօ	ուտիլ-գիրօ
դնել-դրի	տնիլ-տրայ	դէնիլ-դէյի	դնիլ-դըյի	տընիլ, տըրի
երթալ, զնացի	ըրթիլ-կացայ	իյթոլ-զացի	իշտոլ-զացի	ըրթիլ, կացի
կերթամ	կորթոմ	կոյթոմ	կուշտոմ	գարթօմ
պիտի երթամ	պիտէ ըրթոմ	պիյթոմ	պիշտոմ	բրդ ըրթօմ
ասել	ըսիլ, ըսայ	ասիլ, ասը	ասել, ասի	ըսսիլ
պիտի ասեմ	պիտէ ըսիմ	պիտի ասրմ	պասիմ	բրդ ըսսիմ
վրան	իվրէն	վըրէն	վյան	իրվէն
ներքեր	նիրքիվը, տոկը	իյքրվը, տորը	նիյքէլը, տորը	նիրքիվը, դօքը
քովը	քէօվը, խէչը	քէօվը	քէվը	քօվը, խաչը
հիմա	հրմմօ	հումմոյ	հումմօ	հըմմուգ
հեռու	հիրու	հիրու	հիյու	խարու
առավոտ	առաւոտ	այտու	սապահտան	սաբախտան
իրիկուն	իրկոն	իյկոն	իյկավոն	իրգրվօն
ինչպէ՞ս ես	չոցի՞ս	չոչի՞ս	ինչոցի՞ս	ընչօցիս իս
լավ եմ, աղեկ	ըրբնտ իմ	աղէկ իմ	ըրինտ իմ	ըրինդ իմ
բարի լուս	պարա լաս	բայ լուս	բայի լիս	պարի լիս
բարի գիշեր	ծիզ կիշիր	գիշէյ բայը	(չունեն)	կիշիր պարի
լուս բարի	ծիզ լաս պարա	լուս բայը	(չունեն)	լիս պարի
մնաս բարով	կիցեր պարէվ	կինոս բայը	մնացիր բայէվ	կիցի պարօվ
երթաս բարով	ըրթոս պարէվ	իյթոս բայը	իշտոս բայէվ	ըրթօս պարօվ
շատ ապրես	շոտ ապրաս	շոտ ապէէս	շոտ ապյիս	շօդ աբրիս

մուր գլխիդ	մուր կլոխիդ	մույ գոլխուդ	(չունեն)	մուր կրոխիտ
աշք լույս	էկիդ լաս	էվլեդ լույս	էքիդ լիս	աշքիտ լիս
շնորհավոր տարի	իշնեվիդ տարա	իշնիհառ տայր	խայրըլը տայի	խայրըլը դորի
Աստված պահի	Ասվոծ պէհէ	Ասպօծ պէհէ	Ասվոծ պէհէ	Ասվօծ բնիհէ
հայ ազգը	հեյ օզգը	հեյ օզգը	հե օզգը	հեյ օզկը

Որպես կապակցված խոսքի նմուշ բերենք նաև Տերունական աղոթքը՝ «Հայր մերը» այս բարբառներով:

«ՀԱՅՐ ՄԵՐ»—Ը ՄԱՐՄԱՇԻ ԲԱՐԲԱՌՈՎԿ

«ՀԱՅՐ ՄԻՒ ԻՐԿԻՆՔԻ» ՄԱՐՄԱՇԱՅ ԼԻԶՎԵՎ»

Միր պոպը քի իրկինքն իս, Քինիտ ատունիդ սուրբ թօննօ. Քինիտ թէգէվիւրիւրանդ թող գօ. Քինիտ կոմքիդ թօննօ, չոց քի իրկինքի՝ ինտէն է կիտէնան իվրէն: Միր ամէնավիւր հոցը եռէօր միզ տուր: Հեմ միր պորտքտէքը միզ պաղըշէ, չոց քի մինք է միր պարտակոնտոցը կը պաղըշինք: Հեմ միզ փորձրան մը տանա, հապո չորեն միզ փրկէ: Ինչուրի Քինիտ է թէգէվիւրիւրանը, զորիւրանը, փառը, յախտեանս յախտենից: Ամէն:

«ՀԱՅՐ ՄԵՐ»—Ը ԶԵՅԹՈՒՆԻ ԲԱՐԲԱՌՈՎԿ

«ՀԱՅ ՄԵՅ ԻՅԿԻՆՔԸ» ԾՈՒԹՆՈՅ ԼԻԶՎԵՎ

Ով մեյ պօպը ոյ իյկինքն իս, Քու անունդ սոյք թոննա. Սու թէգէվիւրիւնդ թուղ գոյ. Քու կոմքը թուղ լա, ինչպէս իյկինքը ինտէն էլ իյկեյին վիյօ: Միյ ամէն եօյվէն հոցը եսէյ միզ տույ: Եւ միզ նեյէ միյ պօյտքը, չոց որ մինք էլ կը նեյինք միյ պօյտքի տէկրուն: Եւ միզ փոյձուրան միյ տանը, հապո չոյէն միզ ազատէ. Ուեհետեւ (չիւնքի) Քինն է թէգէվիւրիւնը եւ զօյուրիւնը ու փառը. յախտեանս յախտենից: Ամէն:

«ՀԱՅՐ ՄԵՐ»—Ը ՀԱՃԸՆԻ ԲԱՐԲԱՌՈՎԿ

«ՀԱՅ ՄԵՅ ԻՅԿԻՆՔԸ» ՀԵՃԸՆ ԼԻԶՎԵՎ

Մեյ իյկինքը կինեդ պօպը, Քե անունիդ սոյք թըննօ, Քե բազավուրթինիդ թըզօ, Քե իրատէրիդ իյկինքը ընօծը կիմի, զիտիննա թըննօ, մեյ ամէնավոյ հոցը եսէյ մետ տույ, վէ մեյ սուչէյը մետ պաղըշլամիշ իյօ, ինչոց իյ մենք ա մեյը սուչլու ընեղնուն պաղըշլամիշ կինները: Վէ զմեզ

թէճրիւպէ մի թիյէ: Ամմա զմեզ չայէն խըլայէ: Չիւնքի թինտ է թագավույութիւնը, վէ դուվօթը, վէ փոռքը, եպէտ իւլ ապատ. Ամին:

«ՀԱՅՐ ՄԵՐ»—Ը ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌՈՎԿ

«Եա մեր տուտը, քի էիրկէնք տէնկոս, սէօյ թըղ ըննօ Քը էնէօն, թըղ օգու Քը թըգէվրօթէն, թսրդ ըննօ Քը կօմք՝ չօցը էիրկէնք տըրշան նէ ի գիտէնը. դէօն զմէր ուց տէօր իյսօր, վէ պէղշիշի մէ զմէր պարտքիէր, չօցը քի մընք մըրլօմիքէնց զպարտքիէր քը պէղշիտընը. վէ մը օտուր մէզմի ի փորձընք. իլլա խէլիսիզմի ի չէզվըրօթէն. զիրա քէննի թըգէվրօթէն ու գուվոր վէ սալթանաթ եպէտէն, ամին»:

«ՀԱՅՐ ՄԵՐ»—Ը ԲԵՅԼԱՆԻ ԲԱՐԲԱՌՈՎԿ

«ՀՅԻ ՄԻՒ ԻՐԳԻՆՔԸ» ԲԵԼԵՆԱԼԻԶՕ

Օվ միր բօրը, քի իրգինքն իս. Քինիտ անունիտ սուրփ թըղ ըննօ. Քինիտ թաքանակուրթինը թըղ ըկկօ. Քինիտ գօմքիտ թըղ ըննօ, ընչօց իրգինքին, հինդէտ է իրգըրին իրվէն: Միր ամէնավուր հօցը եսուր միզի դուր, ուր միզի նէրէ միր բօրդը, ընչօց քի մինք զը նէրինք միր բօրդի դէրէրուն, ուր միզի փօրցուրէնի մը դանէ, սօնրօ չարէն միզի ազադէ: Չոնքոն քինիտն է թաքանակուրթինը ուր զօրըթինը ու փոռքը. յախտեանը յախտենից. Ամէն:

Զեյթունի, Հաճընի, Մարաշի լեզվից բոլորովին տարբերվում է Սվեդիայի հայ զյուղերի լեզուն: Բոլորի մեջ էլ ձայնավոր հնչունները փոխվում են, խոսակցության ժամանակ ա-ն հնչում է օ և է: Ը և ո հնչունները հիշյալ բարբառների մեջ փոխվում են յի՝ սուրբ-սույր, զիր-զիյ, բույր-քիյ, զուր-ցոյ կամ ջէօր, ջորի-ջիյէ: Ենթադրվում է, որ Զեյթունի, Հաճընի, Բեյլանի, Սվեդիայի հայ զյուղերի խոսակցական լեզուն ժամանակին նույնն է եղել բայց հետազոտում տարբերվել են միմյանցից: Հաճընցիք ավելի փափուկ հնչում ունեն՝ նույնիսկ իրենց աղավաղյալ հայերենի մեջ: «Հայ սոյք, դույպոն նօմ կայզիդ». (Հայր սուրբ, մեռնեմ կարզիդ): Զեյթունցիք ավելի զորեղ շէշտ են դնում իրենց խոսքի մեջ. «Գացիր ջաղիւրցը, չի պիրիր զալիւրը». (Չաղացը գնացիր, այսուրը չրէրիր): Սվեդիայի հայերը ո-ն փոխում են ու-ի, հուն ասում են հոն-ի տեղ: «Միր լիրրօնքը բունձը ին, հուն ջէօրը շիտ ին, վէ ծեղկընէն ճինս-ճինս ին»: (Մեր լեռները բարձր են, հոն ջրերը առատ են և ծաղիկները զանազան):

Հայ բարբառազիտության մեջ Բեյլանի բարբառին նվիրված մենագրություն առ այսօր գոյություն չունի: Ինչպէս հայտնի է, Հրայա

Աճայանը «Կիլիկիո բարբառ» ընդհանուր անվան տակ ընդգրկել է Զեյթունի, Հաճընի, Մարաշի, ինչպես նաև ավելի հարավ գտնվող Քիլիսի, Փայասի, Ալեքսանդրետի, Անթարիայի և Սվեղիայի մեջ խոսված հայերենը:

Ինչպես ինքն է պարզաբանում. «Թեև ասոնք իրենց մեջ կը ներկայացնեն բավական տարբերություններ, սակայն ընդհանուր հատկանիշները ավելի մեծ ու հասարակաց ըլլալով՝ կարելի է զանոնք ենթարբառներ համարել»⁹:

Քանի որ նրա ձեռքի տակ Կիլիկիայից և նրանից ավելի հարավ, հարավ-արևելք գտնվող հայախոս վայրերից բավարար չափով տերսությ չեն եղել, ուստի նրա այս ենթարբառը վերոհիշյալ խմբավորումը, շատ մոտավոր և պակասավոր էր:

Աճայանը նույնպես ընդգծում է այս պարագան, գրելով. «Վերոհիշյալներուն մեջ Զեյթունի և Մարաշի զավառականները միայն գոհացուցիչ կերպով հետազոտված են» (նույն տեղում, ՀԲ, էջ 199):

Այնուհետև նա, կատարելով համեմատական քննություն Զեյթունի, Մարաշի, Հաճընի և Անտիոքի բարբառների, պայթական բաղաձայնները համադրելով՝ հետևյալ եզրակացությունն է կատարում, որ «Կիլիկիո բարբառների մեջ զիշավոր ներկայացուցիչը Զեյթունն է» (ՀԲ, էջ 200):

Հենվելով միայն Զեյթունի բարբառի բաղաձայնական համակարգի օրինաչափությունների վրա՝ նա Զեյթունի բարբառի հատկանիշները ընդհանուր է համարում Կիլիկիայի բոլոր հայ բարբառների համար: Գրեթե առանց փոփոխության այս բոլորը նա կրկնում է իր «Հայոց լեզվի պատմություն» գրքում (ՀԼՊ, մաս 2, էջ 346–348): Այսպես օրինակ, նա հետևյալ եզրակացություններն է անում. «Կիլիկիո բարբառին ընդհանուր մեկ հատկությունն ալ բարի մը մեջ գտնված բոլոր ձայնավորներուն նմանեցման ձգումն է. օրինակի համար Զեյթունի բարբառով կըսվի՝ զ’օնօց՝ զնաց, քոսօն՝ քսան, զօնզօն՝ կնկան, իսզի՝ ոսկի, ուսկույ՝ ոսկոր, սեռ. իսզիյի՝ ոսկու...» և այլն (նույն տեղում՝ Հ. Աճայան, «Հայ բարբառագիտություն», էջ 201):

Բ) Զայնական փոփոխությանց մեջ ամենեն հատկանշականը ու ամբողջ Կիլիկիոյ մեջ տարածվածը ա ձայնին օ-ի վերածումն է շեշտի տակ: Օր. Զեյթուն՝ օսղ՝ աստղ, այրսղօխ՝ առաստաղ, բանօլ՝ բանալ, Ասրօձ՝ Աստված, իշնօլ՝ իշնել և այլն:

Մարաշում՝ բարօր՝ պարապ, բաղօր՝ բաղաք, զընօ՛ կլինի, մօրթ՝ մարդ, քօր քար և այլն:

⁹ Հ. Աճայան, «Հայ բարբառագիտություն», Մուսկա, Նոր-նախիչևան, 1911 թ., էջ 199–201:

Հաճընում՝ զաշղօմ՝ կերթամ, բիզ’զօմ՝ պիտի զամ, հազօր՝ հազար, հօղ՝ հատ, բօրդը՝ պարտը և այլն:

Անտիոքում՝ էխօր՝ աշխարհ, ըննօ՛ լինի, ըրօ՛ արա, բօրդը՝ պարտը և այլն:

Իհարկե քերականական օրինաչափությունների մասին խոսելիս նշում է, որ նրանց միջև եղած տարբերություններն առկա են, և բավական շատ են դրանք եղանակների, սովորական ներկաների, շարունակական ժամանակների և այլ ձևերում:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ մի խոսք չկա Բեյլանի խոսվածքի կամ բարբառի մասին:

Աշխարհագրական դիրքով Բեյլանը Կիլիկիայի հարավ-արևելքում է գտնվում. թերևս այդ պատճառով Հ. Աճայանը չի հիշատակում վերոհիշյալ բնակավայրերի թվում: Սակայն հարեւան՝ Սուրբ բարբառի մասին խոսելիս նույնպես ոչինչ չկա այս բարբառի մասին, այլ միայն Արամոյի և Շուղրի (Ճիսր-ի-Շուղրուր), Սվեղիայի մասին է հիշատակում (նույն տեղում, ՀԲ, էջ 212):

«Հայոց լեզվի պատմության» մեջ «Սյուրիայի բարբառը» բաժնում ավելացված են Արամոյի կողքին Կնե, Յազուրիկ գյուղերի և Լաթարիայի Ղնեմիթ գյուղի անունները (Հ. Աճայան «Հայոց լեզվի պատմություն» մաս 2, էջ 346–348):

Այս հավելումը արդյունք էր 1946–1947 թթ. հայրենադարձների հետ հանդիպման, որոնցից նա զրի էր առել մինչ այդ իր համար անծանոթ «Սյուրիական խոսվածքներ» (տե՛ս ՀԼՊ, 2-րդ մաս, էջ 348):

Ինչպես նշեցինք, Խորհրդային Հայաստան ներգաղթած հայրենադարձներից հայ լեզվաբանները գրի առան բազմաթիվ բարբառային տերսությունները և դրանց շնորհիվ հայտնաբերվեցին մի շարք նոր շուտումնասիրված հայերեն բարբառներ:

1953 թ. լույս տեսավ Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտություն» գիրքը, ուր «Կա» ճյուղի բարբառների բաժնում, ի թիվս արդեն հայտնի բարբառների, խոսվում է նաև Բեյլանի բարբառի մասին բավական ընդարձակ, որի առանձնահատկությունների նկարագրությանը նվիրել է 6 էջ (Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953 թ., էջ 418–423):

Ինչո՞ւ էր պայմանավորված Բեյլանի բարբառին հատկացված այս ուշադրությունը:

Անշուշտ, այն ուրույն հատկանիշներով, որոնցով նա առանձնանում էր հարեւան կիլիկիան և անտիոքյան խմբակցության մյուս բարբառներից:

Ա. Ղարիբյանը Բեյլանի բարբառը գետեղում է «Կա» ճյուղի

բարբառների մեջ՝ ընդգծելով նաև նրա հնչյունաբանորեն տեղաշարժ-տեղափոխության խմբին պատկանելու հանգամանքը: Ա. Ղարիբյանը այսպիսի խնբավորումը հիմնավորում է այսպես. «Կա» ձյուղի մեջ են դասավորվում այն բարբառները, որոնք ներկան կազմում են «կա», «զա» մասնիկներով, ինչպես Ամասիայի և Բեյլանի բարբառները և այն բարբառները, որոնք իրենց հնչյունական օրենքի համաձայն այս մասնիկները դարձնում են «զօ» (Մարաշ), «զու» (Սվեղիա), «զօ» (Զեյթուն):

Այլ բարբառներում նույնպես հանդիպում ենք «զօ», «զու» մասնիկներով ներկա կազմելու ձեերի, բայց դրանք չեն մտնում «Կա» ձյուղի մեջ, որովհետև իրենց հնչյունական օրենքներով ա-ն չեն փոխում օ-ի կամ ու-ի, հետևաբար «զօ», «զու» ձեերն ստացվել են «զոյ» ձեից, ուստի պատկանում են «կը» ձյուղին: (Ա. Ղարիբյան, ՀԲ, էջ 417):

Նա ընդգծում է նման խմբավորման համար հիմք ծառայող պայմաններից չորս բարբառների՝ Զեյթունի, Մարաշի և Սվեղիայի ու Բեյլանի միմյանց մոտ լինելը:

Մեր կողմից Բեյլանի բարբառի մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշ հարցերի ճիշտ պատասխանը գտնելուն:

Նախ, վիճակագրական տվյալների համաձայն Բեյլանը միայնակ չի ներկայացնում բարբառը, այլ իրեն շրջապատող մի շարք զյուղերի հետ կազմում է մի ամբողջություն, որոնք, միավորվելով ընդհանուր մի շարք հատկանիշներով, նաև ունեն որոշ տարբերություններ: Բեյլանի շրջանի զյուղերն են՝ Արջիս, Սօղանձի, Պալլը Ղաստալ, Գյօզէլի, Դէյրմիւն Դէրէ, Ղանլը Դէրէ, Նարկիզիիր, Ֆարբըսլը, Սովուգ-Օլուզ, որոնցից ամենամեծ համայնքը Բեյլանին է եղել՝ 400 տնտեսությամբ (Ա. Ղարիբյան, ՀԲ, էջ 418):

Մեր պրատումները պարզեցին, որ Բեյլանի ենթաշրջանի մեջ մտնող հայաբնակ զյուղերը կրկնակի ավելին են, քան վերևում նշված 9 բնակավայրերը: Դրանց թվում պետք է ավելացվեն Մէզզիթ-Էօնու, Բեյլի-Դէրէ, Քյօմուր-չուխուրու, Չաթախ, Չախալլը, Պախրաս, Չինարլը, Սախըր, Չարլախ, Ճիզմէի, Գըրըզ-Խան, Խսկէնտէրուն բնակավայրերը:

Գ. Զահորկյանը իր «Հայ բարբառագիտության ներածություն» գրքում, «բարբառների արևմտյան խմբակցության» մեջ զետեղելով Բեյլանի բարբառը, էջ 132-ի հ. 7 աղյուսակում ոչ մի տվյալ բարբառի առանձնահատկությունների մասին չի տալիս: Ուստի Բեյլանի բարբառի մերձավորության չափը բարբառների արևմտյան խմբակցության բարբառների հետ մնում է չպարզված:

«Սվեղիայի բարբառը» գրքի հեղինակ Տիգրան Անդրեասյանը, փորձելով պարզել Սվեղիայի բնակչության ծագումը, աշխատում է

բարբառային նմանությունների օգնությամբ գտնել նրան առավել մերձավոր հարեւան բարբառները: Նա բաղդատումը կատարում է «կիլիկյան» կոչով 4 բարբառներից բաղկած տվյալներով, որոնք են՝ Մարաշի, Հաճընի, Զեյթունի և Բեյլանի բարբառները: Ինչպես տեսնում ենք, Բեյլանի բարբառի հետ զուգաբանություններ անցկացնելով, նա հակված է Բեյլանի բարբառը «կիլիկյան խմբակցության բարբառ համարելու կողմը, թեև նրա կազմած հիշյալ բարբառների համեմատության տախտակում Բեյլանի բարբառից բերված տվյալների տեղը հաճախ մնում է բաց (Տ. Անդրեասյան, Սվեղիայի բարբառը, Երևան, 1967, էջ 294–305):

Մեր ուսումնասիրությունների տվյալներով նույնպես Բեյլանի բարբառի մերձավորությունը ավելի կիլիկյան բարբառների հետ է, քան Քիսրինը (Սվեղիայի):

Տ. Անդրեասյանը ճիշտ է նկատում, որ «Կիլիկյան բարբառները ձայնավորով սկսվող բայերու սահմանական եղանակի ներկա ժամանակի սկիզբը փոխանակ մեկի՝ երկու եղանակից «կը» կամ անոր համարժեքը կը գործածեն»¹⁰:

Նա առավել մերձավորություն է տեսնում Հաճընի բարբառի հետ և ընդգծում է այս երկու բարբառների շարունակական ժամանակի ձևի բացակայությունը, որ առկա է մյուսների մոտ. «Զեյթունի և Մարաշի բարբառներուն մեջ, որ երբ բային սկիզբը կրկնակ կը-եր գործածվին՝ բայց շարունակվող (ընթացիկ) գործողություն կարտահայտե: Հաճըն և Բեյլան ընթացիկ ժամանակ ցուցնող մասնիկ չունին, ինչպես Զեյթուն և Մարաշ կրկնակ զը չպահանջող բայերու պարագային ալ» (նույն տեղում, ՍԲ, էջ 314):

Ուրեմն, Բեյլանի բարբառի բառապաշարի, հնչյունական համակարգի և հնչյունափոխության օրինաչափությունների (հատկապես ձայնավորների) նմանությունը ավելի ճշտորեն թույլ է տալիս Բեյլանի բարբառը կիլիկյան խմբակցության բարբառ համարել և ոչ Բեյլի-Սվեղիայի, ինչպես խմբավորել է Գ. Զահորկյանը ենթադրաբար բավարար օրինակներով չիհմնավորելով նման խմբավորումը:

Բեյլանի բարբառի հետ կիլիկյանների նմանության հաջորդ կարևոր հիմնավորումը պիտի համարել եերբայական -մօն վերջավորության առկայությունը, որը բացակայում է Սվեղիայի բարբառախմբում: Իհարկե, հարակատար դերբայի խմաս հաղորդող այս -մօն ձևույթը միայն կիլիկյանների մենաշնորհը չէ, առկա էր այն և ոչ-կիլիկյան

¹⁰ Տ. Անդրեասյան, «Սվեղիայի բարբառը», Երևան, 1967, էջ 314:

խմբակցության բազմաթիվ բարբառներում էլ, ինչպես օրինակ, Ուրֆայում, Սասունում և այլուր: Պարզապես մյուս ընդհանրությունների հետ միասին այս ձևույթի առկայությունն է լրացնում է նույն միջավայրից բելանցիների ծագման վարկածն ապացուցող կովանների շարքը:

Սվեդիայի (Քիստինըզի) բարբառը, ինչպես ճիշտ նկատում է Սվեդիայի բարբառի գրքի հեղինակը. «Հայերենի ամենն շատ աղավաղված գավառաբարբառն է» (ՍԲ, էջ 15): Ապա ավելացնում է. «Քիսթինըզը ոչ միայն շատ աղավաղված է, այլ, ... յուրահատուկ զանազան օրենքներ, բառեր և ձևեր մշակած և այնքան հեռացած է մայրենի լեզվեն, որ, կարծես թե առանձին լեզու մը եղած ըլլար: Եվ, արդարեւ, Քիսթինըզի խոսողները ժամանակին անզիտակ էին, թե իրենց խոսածը հայերենի մեկ զավառաբարբառն է, և առանձին լեզու մը կը կնկատվի զայն» (Տ. Անդրեասյան, ՍԲ, էջ 15):

Մինչդեռ Բեյլանի բարբառը, տարածական առումով գտնվելով Սվեդիային ավելի մոտիկ, հնչունական ավելի նվազ աղավաղումների է ենթարկվել և ավելի հասկանալի է մնում հայի համար, քան Սվեդիայի բարբառը:

Ինչ վերաբերում է կիլիկյան խմբակցության պատկանելությանը, այդ՝ հնչունաբանական, ձևաբանական օրինաչափություններով այն մոտիկ է այդ բարբառներին (իհարկե, նաև միայն իրեն հատուկ գծերով հանդերձ), ուստի մնում է ենթարկել, որ այն անջատվել է Կիլիկյան թագավորության փլուզումից հետո և զայթել դաշտային անապահով վայրից դեպի լեռնային դժվարամատչելի նոր բնակավայր:

Բեյլանի բարբառի մասնավոր՝ մանրամասն ուսումնասիրությունը կարևոր է այնքանով, որ այն զալիս է լրացնելու կիլիկյան կոչվող Զեյթունի, Մարաշի, Հաճընի բարբառախմբի վերաբերյալ մեր ունեցած գիտելիքները բերելով իր հետ ընդհանուր հայերենի համար որոշ նոր բառեր ու դարձվածքներ, որոնք բացակայում են հիշյալ խմբի մյուս բարբառներում: Միաժամանակ նրա նպաստը սոսկ լեզվաբանական չէ, այլև ազգագրական և բանահյուսական, քանի որ անդարձ մոռացումից փրկվում են երգեր, զրույցներ, ջանցուլումներ և առածներ ու ասացվածքներ, որոնք զրի են առնվել տարեց բարբառախոսներից մեր ուսումնասիրությունների ընթացքում:

Այսպիսով, Բեյլանի բարբառը, որ հայ բարբառագիտության մեջ մինչև այժմ միայն հիշատակվել է ոչ ամբողջական իր առանձնահատկություններով, այլ միայն թոռուցիկ, հպանցիկ ձևով, հիմա լրացնում է այն բացը, որ հայ բարբառների քարտեզագրման նախօրյակին այնքան անհրաժեշտ է ԳԱ լեզվաբանության ինստիտուտին:

Միաժամանակ կիլիկյան խմբակցության բարբառների հետ ունեցած մերձավորության ապացույցները թույլ են տալիս պատմական ենթադրությունը դարձնել ավելի հիմնավոր, բելանցիների՝ Կիլիկիայից գաղթած լինելու վերաբերյալ, քան Սվեդիայի (Քիսթինըզի) ենթաքարբա լինելու վարկածը:

ԳԼՈՒԽ I

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՍՏԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բեյլանի բարբառն ունի 44 հնչյուն, որոնցից տասը ձայնավոր՝ ա, է, ՛, ը, ի, օ, ու, ա՛, ո՛, օ՛ (ա՛, ո՛, օ՛ — առաջնալեզվային բմային ձայնավորներ են ՛-ն՝ է-ի և ա-ի միջինք, բաց է: Համաձայն Լեզվաբանության ինստիտուտի մշակած տառադարձման համակարգի՝ հիշյալ հնչյունը պիտի արտահայտվի Է նշանով: Սակայն Բեյլանի և հարակից զյուղերի ոչ բոլոր բարբառախոսների մոտ է դրսերրվում նման հնչողություն, այն երբեմն արտասանվում է նուրբ երանգային հնչողությամբ, երբեմն արտասանվում է է, երբեմն ա՛):

Բարբառն ունի 34 բաղաձայն՝

Զայնեղ պայթականներ	բ, գ, դ, ձ, զ
Խուլ պայթականներ	պ, կ, տ, ծ, ծ
Խուլ շնչեղ պայթականներ	փ, թ, թ, ց, չ
Զայնեղ շփականներ	վ, զ, ժ, դ, դ,
Խուլ շփականներ	ֆ, ս, շ, խ, հ
Զայնորդներ	լ, մ, յ, ն, ռ, ռ
Քմային ետնալեզվայիններ	գ, կ, ք

Ետնալեզվային պայթաշփական՝ դ/կդ հնչմամբ նկատվում է բուրքերենից և արաբերենից փոխառյալ մի քանի բառերում:

Բեյլանի բարբառում ընդհանրապես բացակայում են և ո երկրաբառակերպները: Թե՛ բառակզբում, թե՛ բառամիջում, թե՛ բառավերջում սրանց փոխարինում են համապատասխան ձայնավորներ:

Թեև հայ լեզվաբանության մեջ այն կարծիքն է արմատացած, որ ընդհանուր պատմական հնչյունափոխության պատճառով զրաբարյան բոլոր երկրաբառները վեր են ածվել երկինշունների կամ պարզ ձայնավորների, ինչպես եւ-յա, ոյ-ույ, եւ-յու, իւ-յու, աւ-օ, և կիլիլյան ու Անտիոքի շրջանի բարբառները հիմնականում պահպանում են այս սկզբունքը, սակայն ունեն նաև երկրաբառային արտասանություններ: Ոչ ընդհանուր գրական լեզուն, ոչ էլ հայերենի տարածքային որևէ

բարբառ չունեն պահպանված նման երկրաբառներ կամ երկրաբառակերպներ: Եվ ահա Բեյլանի բարբառում գտնում ենք ուս կամ ուա երկրաբառները, որոնք այլուրեք դարձել են վա, օր. աստուածատված, զրուած-զրված, հերուան-հերվան, զրուան-զրրվան և այլն: Երկձայնավորները կամ երկրաբառակերպները հատուկ են միայն Արամոյին, Քարուսիեին, Բեյլանին:

Գրաբարյան առաջուան — առէջուան

հերուան — հիրուան

կանուխուան — կանուխուան

քայուածք — քէլուօցք

խոսուածք — խուսուօցք

թխուածք — թքխուօցք

զրուածք — կրրուօցք

Ա. Ղարիբյանը երկձայնավորների գոյությունը այս բարբառներում բացատրում է հնդեվրոպական նախալեզվի հետ նույնը լինելու հանգամանքով. «համարյա հայերենի բոլոր ձայնավորները վերածվում են երկրաբառի և այդ կատարվում է երածշտական շեշտի ազդեցության տակ»¹¹:

Բարբառու պատկանում է միջին հայերենի բաղաձայնական համակարգի տեղաշարժ-տեղափոխության խմբին, այսինքն՝ զրաբարյան խուլերի դիմաց այսուեղ մենք ունենում ենք ձայնեղներ, իսկ ձայնեղների դիմաց խուլեր: Սովորգ-Օլուգ զյուղի խոսվածքում ձայնեղների դիմաց առկա են նաև շնչեղ խուլեր նման Մալաթիայի բարբառին:

Հին հայերենի նման, Բեյլանի բարբառում էլ չկան (եթե չհաշվենք օտար լեզուներից փոխառյալ բառերը) ր, դ, ֆ հնչյուններով սկսվող բառեր:

Վերին բարձրացման կամ փափուկ ա՛, օ՛, ո՛ ձայնավորները հնչույթաբանական, իմաստատարերիչ արժեքից գուրկ են և դիտվում են իրքն համապատասխան ձայնավորների դիրքային տարբերակներ՝ կիրառության բացառիկ նեղ ոլորտներով:

ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի ձայնավորների պատմական փոփոխությունների մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական իրողություն, որով

¹¹ Ա. Ղարիբյան. «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ», Երևան, 1958, էջ 10:

բնութագրվում են բարբառներում տեղի ունեցող ձայնավորների հնչյունափոխական մյուս բոլոր երևույթները: Դրանցից մեկը պարզ ձայնավորների երկրարբառացումն է, երկրորդը՝ բաց (լայն) ձայնավորների արտասանության անցումը ավելի փակ (նեղ) արտասանության, կամ հակառակը:

Ձայնավորների երկրարբառացման մեջ առավել գործուն է ո և է պարզ ձայնավորների փոփոխությունը: Այդ ձայնավորների երկրարբառացումը նախապես տեղի է ունեցել առանց դիրքի սահմանափակման, միայն թե՝ շեշտված վանկում:

Պատմական զարգացման ընթացքում հայերենի որոշ տարածքի բարբառներում սկսված երկրարբառացումը աստիճանաբար վերանում է (ունակության կորստի, այլ բարբառների կամ զրական լեզվի ազդեցության պատճառով և այլն):

Ո-ի փոփոխությունը սկսվում է այս ձայնավորի ավելի նեղ, փակ արտասանության միտումով, որի հետևանքը լինում է այն, որ ո-ն իր արտաքերման սկզբում ստանում է ո (ու) ձայնավորի մի թույլ երանգ: Այդ երանգը սկսում է ավելի ու ավելի ընդգծել, որը շեշտի տակ ո պարզ ձայնավորին տալիս է ուօ երկրարբառի արժեք:

Հայերենի բարբառների կիլիկյան տարածքում, եթք ո-ի երկրարբառային արտասանությունից անցում է կատարվում դեպի մենաբարբառացում, մենաբարբառի մեջ սկսում է աստիճանաբար գերիշխել նրա առաջին բաղադրիչը (ու-ն), որից և մենաբարբառացումը ընթանում է ուօ/ուէ > ու ձանապարհով: Այս տարածքում երկրարբառի պարզման ազդակը թերևս եղել է նախնական ձայնավորի (ո-ի) ավելի նեղ, փակ արտասանության հասնելու ձգումը, որը կատարվում է շրթնայնացման պայմաններում: Այս հիմքի վրա է, որ այս բարբառներում ո-ի դիմաց այժմ ունենք ու/ո պարզ ձայնավոր:

Համարյա նույն տարածքներում, որտեղ ո-ն փոխվում էր ու-ի, ե-ի դիմաց էլ առաջանում է ի: Այդ փոփոխությունը զրանցվում է ինչպես բառասկզբի, այնպես էլ բառամիջի դիրքերում: Պետք է ենթադրել, որ այստեղ էլ ե-ի՝ ավելի նեղ ի ձայնավորի արժեք ձեռք բերելը կատարվել է ե-ի երկրարբառացման միջին օղակով, եթք երկրարբառի առաջին բաղադրիչը գերիշխող դիրք է ստացել երկրորդի նկատմամբ և մենաբարբառումից հետո մնացել է ի-ն՝ երազ-իրօձ, երեք-իրիք, ելանել-իլլիլ և այլն:

Այժմ անդրադառնանք հայերենի ձայնավորների պատմական փոփոխությունների երկրորդ միտումին: Այդ փոփոխությունները

կատարվում են երկու հակադիր ուղղություններով. մի կողմից՝ ավելի լայն բացվածքի արտաքերություն ունեցող ձայնավորները փոխվում են ավելի նեղ արտաքերություն ունեցող ձայնավորների, մյուս կողմից՝ հակառակը, նեղ արտաքերություն ունեցող ձայնավորները փոխվում են ավելի լայն արտաքերության ձայնավորների: Այդ փոփոխությունները Հ. Մուրադյանը անվանում է ձայնավորների համակարգային փոխություններ¹²: Հասկանալի է, որ այդ անցումները ամեն տեղ նույն որոշակիությամբ ու հետևողականությամբ չեն կատարվում: Եթե որոշ վայրերում ձայնավորների փոփոխության այդ հակադիր միտումները ընդգրկում են բոլոր ձայնավորները և նրանց բոլոր դիրքերը, ապա այլ վայրերում դրանք տարածվում են միայն ձայնավորների մի մասի և նրանց որոշ դիրքերի վրա: Ինչքան էլ լեզվի մեջ զարգացման միտումները լինեն ընդհանուր, այնուամենայնիվ նրանք ամենուրեք նույնական լինել չեն կարող, քանի որ գոյություն ունեն ժամանակի և տարածության մեջ:

Լայն բացվածքի ձայնավորների մեջ առաջին հերթին աչքի են ընկնում ետին շարքի ձայնավորները, որոնց փոփոխության հիմնական միտումը ձգուում է դեպի առաջնային շարքի արտաքերություն:

Այս շարքի ձայնավորներից՝ ա-ն նախ փոխում է իր արտաքերության շարքը՝ վերածվելով ա-ի: Հնայունական ա > ա > է հաջորդական անցումները նույն հնչյունափոխական երևույթի տարբեր աստիճաններն են: Դիտելի է, որ այդ անցումներից յուրաքանչյուրում ձայնավորներից մեկը մյուսից տարբերվում է իր արտասանական բացվածքի՝ լայնության կամ նեղության տարբերությամբ: Ա-ն ավելի լայն բացվածքի արտաքերություն ունի, քան ա-ն, իսկ վերջինս էլ ավելի լայն է, քան է-ն՝ ալիր-էլիր, խարշել-խարշիլ, քարշել-քարշիլ:

Ա ձայնավորը ենթարկվում է նաև մի այլ փոփոխության, որի համար էական նշանակություն է ունեցել շրթնայնացումը: Վերջինս, որ նախապես ունեցել է արտահայտության թույլ երանգ, հետագայում ուժգնանալով պատճառ է դարձել ա > օ > ու հաջորդական անցումներին: Այստեղ նույնական ա ձայնավորի փոփոխությունը լայնից գնում է ավելի նեղ բացվածքի արտաքերություն, միայն թե այդ անցումը այս դեպքում կատարվում է նույն շարքում՝ բարձրացման աստիճանների փոփոխությամբ և շրթնայնացման նույն ոլորտում:

¹² Հ. Մուրադյան, «Հայոց լեզվի պատմական բերականություն», հատոր 1, Երևան, 1975, էջ 106:

Ա > օ փոփոխության օրինակներ են տալիս Բելլանի, Հաճընի, Ազուլիսի, Համշենի, Մարաշի և այլ բարբառները: Ա > ու արձանագրվում է Սվեղիայի բարբառում: Օրինակ՝

Բելլան	<i>hog (hug)</i>	Ասլօձ
Մարաշ	<i>hog</i>	Ասլօձ
Զեյթոն	<i>hog</i>	Ասպօձ
Հաճըն	<i>hog</i>	Ասլօձ
Սվեղիա	<i>hknig</i>	Ասղուծ

Թեև վերը նշված բարբառներում ա > օ > ու հնչյունափոխությունը գործում է ոչ միաշափ ինտենսիվությամբ ու ոչ համանման պայմաններում, բայց համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք նույն օրինաշափության կոնկրետ դրսնորումներն են:

Դիտարկենք ձայնավորների փոփոխությունները Բելլանի բարբառում:

Ա ձայնավորի փոփոխությունները

1. Գրաբարի ա ձայնավորի դիմաց Բելլանի բարբառը երկու և ավելի վանկ ունեցող բառերի սկզբում ունի ա, եթե վանկը նախաշեշտ է. արայ-ապօ, ազապ-ազզօր, ազատել-ազօղիլ, ազոխ-ազզոխ, ախոռ-ախուռ, ածան-ածօն, ածելի-ածրիլ, ակռայ-ազռօ, աղալ-աղօլ, աղանձ-աղօնձ, աղանի-աղօվնի, աղրանց-ախպանից, աղրատ-ախկօդ, ամաշեմ-ամշրնօլ, արդար-արթօր, առջե-առջիվ, արեւ-արի:

2. Ա ձայնավորը բառակզբում փոխվում է օ-ի, եթե բառը միավանկ է. ամպ-օմբ, ակ-օգ, աղբ-օխպ, ահ-օհ, ազգ-օզկ, աղտ-օխտ, ալր (չար ոզի) -օլ, աղ-օղ:

3. Միավանկ բառերի բառամիջում ա ձայնավորը դառնում է օ՝ հարսն-հօրս, *hawg-hog*, թաս-թօս, շափ-չօփ, պարտք-բօրդք (բօրջ), լաց-լօց, մազ-մօզ, թաց-թօց, համ-հօմ, մասն-մօս, շատ-շօդ, բան-պօն, լալ-լօլ, տալ-դօլ, թաղ-թօղ, խաղ-խօղ, կաթ-գօթ, մատ-մօդ, մարդ-մօրդ, նազ-նօզ, տանձ-դօնձ, վախ-վօխ:

4. Երկվանկ բառերի վերջին վանկի ա-ն նույնպես օ է: Հիւանդ-հիվօնտ, քաղաք-քաղօք, խաղալ-խաղօլ, աղրատ-ախկօդ, արդար-արթօր, դանակ-տանօգ, ամառ-ամօն, աման-ամօն, բերան-պիրօն, բամբակ-պամբօք, երազ-իրօձ. արձաք-էրձօր, ձերմակ-ջիրմօզ, աշխարհ-աշխօր, օրինակ-նիրնօֆ, ակռայ-ազռօ, քացախ-քացօխ:

5. Գրաբարյան ա ձայնավորին Բելլանի բարբառում հաճախ համապատասխանում է է -ն կամ ա՝ ալիւր-էլիր, արիւն-էրին, արջ-էրջ, ականջ-էնջէջ, արժան-էժօն, արծաք-էրձօր, անել-էնիլ, թազաւոր-թաքանչիր, արժան-էժօն, խարշել-խանչիլ, քարշել-քանչիլ:

Շփականների հարևանությամբ ա ձայնավորին շեշտակիր դիրքում համապատասխանում է ա՝ խաչ-խաչ, կարձ-գայրջ, աչք-աչք, խաչել-խանչիլ:

6. Ա ձայնավորը բառակզբում դառնում է ը. ասել-ըսսիլ, առատ-ըռօդ, անկանել-ընզիլ բառերում:

7. Բազմավանկ այն բառերի մեջ, որտեղ ա -ն գործածված է երկու կամ ավելի անզամ, վերջին վանկի շեշտի հետևանքով նախորդ վանկի ա-ն սղված է կամ նրա դիմաց առկա է ը հնչյունը. ազանելի-հարքնըլիր, ամաշել-ամըլնօլ, առաջեաւ-առշիվ, աղացուր-աղձուր, բանալի-պալինք, թարախել-թարիխիլ, կատաղել-գաղդիլ, հարսանիր-հարսնիր, հաւանել-հավնիլ, ճանապարհ-ջամրօ, ճանաշել-ջանչընօլ, կարկատան-գարզընօն, մատանի-մադնի, բաժանել-պաժնիլ, տապակել-դարգիլ, անանուխ-աննուխ, հիւանդանալ-հիվընտնօլ, մարզարիտ-մարքըրիդ, շալակեմ-շալզիլ:

8. Ան սոսկածանց ունեցող բայերի մեջ, ինչպես նաև -անի, -անիր ածանց ունեցող բառերի մեջ երբեմն ընկնում է ան ածանցը, երբեմն՝ ածանցի ա ձայնավորը՝ անկանել-ընզիլ, անիծանել-անըձիլ, արթնանալ-արթըննօլ, բարձրանալ-պանցըրնօլ, բուսանել-պուսնիլ, գտանել-կրդնօլ, գրղանալ-կուլնօլ, ելանել-իլիլ, թուլանալ-թուլնօլ, պազանել-բարնիլ, մատանի-մադնի, հարսանիր-հարսնիր, մոռանամ-մառնօլ, մեծանամ-մինձնօլ, հասանիմ-հասնիլ, հարցանեմ-հարցնիլ, տեսանեմ-դիսնօլ, բաղանիր-պաղնիր, բաժանել-պաժնիլ:

ՇԵՇՏԻՑ ԿԱԽՎԱԾ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բելլանի բարբառում, ինչպես նշեցինք, կարևոր հնչյունափոխական գործոն է շեշտը, որից շատ հաճախ, կախված է ձայնավորների որակը:

Եթե շեշտագուրկ ձայնավորները ընդհանրապես չեն հնչյունափոխվում, ապա վանկերի շեշտակիր ձայնավորները բառի ձևաբանական, բառակազմական փոփոխությունների հետևանքով սղվում են, վերածվում ը-ի կամ մի այլ ձայնավորի: Բելլանի բարբառի ձայնավորների հնչյունափոխությունը ներկայացնելու ընթացքում նպատակահարմար ենք գտնում կանգ առնել նաև բառի ձևաբանական,

բառակազմական փոփոխությունների հետևանքով բարբառի հնչյունական փոփոխությունների վրա:

9. Բեյլանի բարբառում հոգնակի կազմելու, հոլովման, ինչպես և բարդման ու ածանցման ժամանակ երկու և ավելի վանկ ունեցող բառերի սկզբի ա-ն մնում է անփոփին:

ախուռ - ախուռնիր - ախուռին
ազո - ազորդէք - ազոյին-ազոյօվ

աղօնծ - աղընծիլ - աղօնծին
ամօն - ամըննիր - ամօնին, ամընդիրդէք (ամանեղեն)

ախօդ - ախզըդնիր - ախզըդին
ախճին - ախճինդէք - ախճընին, ախճինըթին
անուն - անընդէք

Ե ձայնավորի փոփոխությունը

Ե երկբարբառը որպես այդպիսին չի պահպանվել Բեյլանի բարբառում:

10. Գրաբարյան է հնչյունի դիմաց Բեյլանի բարբառում բառասկզբում, բառամիջում և բառավեջում ունենք ի. երազ-իրօծ, երեք-իրիք, երես-իրիս, երեց-իրից, ելանել-իլիլ, ես-իս, երբ-իփ, եփ, երբանից-իփուց, եփուց, երդումն-իրթում, երկան-իրզօնք, փեսայ-փիսօ, սետ-սիվ, մերմիր, թեթեւ-թիթիվ, թեւ-թիվ, երեկ-իրէգ, երկար-իրզօր, երկինք-իրզինք, ել-իլ, ցերեկ-ցիրիգ, երեցկին-իրիցզին, երեկոյ-իրզուն, եկ-իզօ:

11. Գրաբարյան ե-ի դիմաց բարբառը է ունի միայն մի քանի բառերում. երգ-էրք, երգել-էրքիլ, մեղայ-մէղօ, մեռօն-մէռօն, զենուլ-զէնիլ, զեղ-կէղ, դեղին-տէղին, սեղան-սէղօն, երբ-էփ, երբանից-էփուց:

12. Կան բառեր, որտեղ գրաբարյան ե-ն հնչյունափոխվում է ը-ի. երկու-ըրզու, իրեշտակ-հըրըշօզօզ, ճեղբել-ճըխիլ, խեղդել-խըխտիլ, երթալ-ըրթիլ մեզէն-մըզնէ, քեզէն-քըզնէ:

13. Ե-ն հաճախ սղվում, դուրս է ընկնում, երբ բառերը բազմավանկ են և իրար են հաջորդում ե-ով կազմված երկու և ավելի վանկեր. աւերել-ավիիլ, կեղենել-գեղվիլ, աւելել-ավիլ, հայելի-հէյլի, ճեղբել-ճըխիլ, խեղդել-խըխտիլ:

14. Բեյլանի բարբառում, և ընդհանրապես կիլիկյան բարբառներում, գրաբարյան է լծորության դիմաց ունենք ի. ազատեմ-ազադիլ, անցանեմ-անցընիլ, ասել-ըսախիլ, եփեմ-իփիլ, խմել-խումիլ, ծախել-ձախիլ, սիրեմ-սիրիլ և այլն:

15. Գրաբարյան ե-ի դիմաց ա կամ ա կա՝ եղբայր-ախպայր, տէզր-դպայքըր, բեռն-պան, սիսեռն-սիսան, քեռի-քանոի, լեառն-լան, լեղի-լաղի բառերում, ու կա եղունգ-ուղունգ բառում: Սա միջին հայերենի ձև է, որ բնորոշ է շատ բարբառների:

Ե ձայնավորի հնչյունափոխությունը

16. Գրական հայերենի է ձայնավորի դիմաց Բեյլանի բարբառում բառասկզբում է կա. էշ-էշ, էգ-էկ բառերում:

17. Է-ի դիմաց բառամիջում է կա հետևյալ միավանկ բառերում. դէմ-տէմ, կէս-զէս, ձէթ-ծէթ, մէկ-մէզ, մէշ-մէչ, շէն-շէն, պէս-պէս, վէր-վէր, տէր-դէր, սէր-սէր:

18. Բառավերջի բաց վանկի է-ին Բեյլանի բարբառում համապատասխանում է է-ն. չէ-չէ, Արփինէ-Արփինչ, մարզարէ-մարքարչ և այլն:

19. Բառամիջում հայերենի է ձայնավորի դիմաց է կա նաև մեկ և կես, ինչպես և բազմավանկ բառերի շեշտված վանկերում. անէծր-անէծր, բգեզ-բբգէզ, ամմէն-ամմէն, տնօրէն-դրնօրէն:

20. Է > ը հնչյունափոխություն ունենք թէ-թը շաղկապում:

21. Բացառություն է կազմում կէս բառը, որտեղ բառամիջում ունենք է > ի հնչյունափոխություն՝ կէս-զիս-զիսսին-զիսսըմօն, կէսօր-զիսսավոր:

Հիմնականում շեշտակիր է-ն գործառվում է որպես թերույթ՝ բացառական հոլովում, այսպես՝ այօրվանից-ըստօրվլնէ, ինձանից-ընձննէ, քաղաքից-քաղրէն և այլն:

22. Միավանկ բառերի բառասկզբի է ձայնավորը բառի աձման դեպքում մնում է անփոփին. էշ-էշին-էշդէր-էշըթին:

23. Երկու և ավելի վանկ ունեցող բառերի սկզբի է-ն բոլոր դեպքերում մնում է անփոփին.

էիր - էրրին - էլիրմօղ, էրիգ - էրզօն - էրիզդէք
էնգէճ - էնզըճին - էնզըճդէք
էրին - էրինին - էրինդէք - էրինիլ:

24. Միավանկ բառերում է-ն շեշտը կորցնելիս հնչյունափոխվում է ի-ի. կէս-զիսիլ, ձէթ-ծիթին, ծիթիլ, շէն-շինիլ-շինըթին, սէր-սիրիլ-սիրմօն:

Ը ձայնավորի հնչունափոխությունը

25. Հին հայերենի ը ձայնավորին Բելլանի բարբառում բառակզբում համապատասխանում է ը, որը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ: ընդունել-ընթունիլ, ընտրել-հրնարիլ, ընկոյզ-ընզիլ:

26. Բառամիջում զաղտնավանկի ը-ն սովորաբար մնում է ը՝ գլուխ-կրօխ, դրախտ-տըրօխտ, դրացի-տըրօցի, խնամի-խրնամի, ծանր-ձօնդըր, մտանել-մրդնոլ, կրակ-զորօգ, դմակ-տըրմօց, զրել-կըրիլ, թրանել-թըրնիլ, լսել-լըսսիլ:

27. Բառակզբում սկ, սպ, սու հնչունակապակցություններից առաջ լսվող ը-ն պահպանվում է՝ սկսանել-ըսզրսիլ, ստանալ-ըսդանոլ, սպանանել-ըսրաննիլ, սպասել-ըսրասիլ, ստեղծել-ըսդէնձիլ:

28. Բառավերջում ընդհանրապես ը-ն հնչում է ը, սակայն իբրև որոշիչ հոդ գործածվելիս երբեմն փոխվում է ի-ի, երբեմն՝ ու-ի, երբեմն՝ ու-ի: Օրինակ՝ փայտը-փայդի, լեռը-լարի, խոտը-խոյդի, հացը-հօցու, հիւրը-հոյը (տե՛ս ձայնավորների ներդաշնակություն՝ էջ 51):

Նոյնը պատահում է նաև մի/մը անորոշ հոդի մեջ՝ փայտ մը-փայդ մի, հիւր մը-հոյը մոյ, դանակ մը-տանօգ մու:

29. Ը-ի դիմաց ու կամ ու կա խմել-խումիլ, շնորհը-շոյնը բառերում:

Ը-ի դիմաց ի կա կշտանալ-զիշդանոլ և նշան-նիշօն բառերում:

30. Ը ձայնավորը Բելլանի բարբառում բարի աճման ժամանակ բոլոր դիրքերում էլ մնում է անփոփոխ:

ըրինդ - ըրինդին - ըրինդդէք - ըրինդրթին:

ընքանալ - ընքանալոր - ընքանալորդէք - ընքանալորթին,

ընքարօք - ընքարօքին - ընքարօքդէք - ընքարօքրթին

ընզիզ - ընզոզին - ընզիզդէք:

31. Ի տարբերություն զրական հայերենի, ուր ը-ի շեշտազրկության պատճառով վերջինիս գործառությունը խիստ սահմանափակ է, Բելլանի բարբառում, ինչպես և շատ այլ բարբառներում, ը-ն բառամիջում հանդես է զայլիս իբրև լիահունչ ձայնավոր: Այս երեսույթը կարելի է բացատրել ինչպես հին հայերենին ու բարբառներին բնորոշ երկրորդական շեշտի, այնպես էլ բաղաձայնական կուտակումները ը-ի միջնորդությամբ սահունացնելու միտումով: Ը-ն իբրև լիահունչ ձայնավոր է հնչում մեկուկես վանկանի բառերում, շեշտահաջորդ դիրքում՝ բարձր-պօնցըր, սանր-սօնդըր, ծանր-ձօնդըր, մանր-մօնդըր, տեզըր-դարըր և այլն:

Ի ձայնավորի հնչունափոխությունը

32. Գրաբարի ի ձայնավորի դիմաց Բելլանի բարբառում միավանկ և բազմավանկ բառերի սկզբում կա ի. իմ-իմ, ինչ-ինչ, իշանել-իշնոլ, ինն հարյուր-իննրեկրիր, իշխան-իշխօն, իրաւ-իրօվ, ինք-ինք, իրեար-իրօր:

Բառակզբում ի-ի դիմաց ը կա. ինձ-ընձի, ինձէն-ընձնէթ:

33. Գրաբարի ի ձայնավորի դիմաց Բելլանի բարբառը ի ունի միավանկ և բազմավանկ բառերի մեջ շեշտի տակ և անշեշտ դիրքերում՝ զին-կին, զինի-կինի, զիշեր-կիշիր, զիտենալ-կիդնոլ, զիր-կիր, հինգ-հինկ, աղջիկ-ախճին, զետին-կիդին:

34. Գրաբարյան ի-ի դիմաց ի կա միավանկ և բազմավանկ բառերի վերջում. ձի-ծի, զինի-կինի, հոզի-հիկլի, հայելի-հէլլի, բարի-պօրի, տարի-դօրի, մատանի-մադնի, անորի-անթի:

Բառակզբում և բառամիջում ի-ի դիմաց ը կա՝ ինձ-ընձի, ինձէն-ընձնէթ, պիտի-բրդի:

35. Շեշտի տակ մի արգելականի ի-ն հնչունափոխվում է ը-ի՝

ա) երբ արգելականին հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ. մի՝ խոսիր - մը խուսօ, մի՝ կարդա - մը զարթօ, մի՝ քայլիր - մը քէլէ, մի՝ մտանիր - մը մըդնօ, մի խմիր - մը խումէ, մի՝ մնա - մը մընօ,

բ) երբ արգելականին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, ի-ն ընկնում է՝ մի՝ ազատիր - մ'ազադէ, մի՝ ուտիր - մ'ուդէ, մի երթա - մ'երթա, մի՝ ասիր - մ'ասէ, մի՝ անի - մ'էնէ, մի՝ ավլիր - մ'ավլէ:

36. Միավանկ բառերի բառակզբի շեշտավոր ի ձայնավորը շեշտակորույս լինելով դառնում է ը. ինն-ըննին-ըննիրու, ինչ-ընչ-ընչիր-ընչօ՞ց:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— բացառություն է կազմում իմ բառը, որտեղ ի-ն մնում է անփոփոխ. իմ-իմիս:

37. Երկու և ավելի վանկ ունեցող բառերի սկզբում բարբարի անշեշտ ի ձայնավորը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ. իրիր-իրիքնուց, ինոդ-ինօդին-ինօդըրին, իրիցզընիզ-իրիցզընզօն-իրիցզընզըրին, իրզին-իրզինըրին-իրզինըրի, իրօձ-իրօձնիր-իրօձին-իրօձիլ:

38. Միավանկ, մեկ և կես վանկ ունեցող բառերի բառամիջի ի ձայնավորը, շեշտակորույս լինելով, դառնում է ը. իմիր - իրլրդէք - իրլանի, էլիր - էլլրին, էլլրդէք - էլլրիլ, արիվ - արրվին - արրվիլ, անթի

- անթըլին - անթըլէք - անթընօլ - անթըրին:

39. Բազմավանկ բառերի շեշտագուրիկ ի ձայնավորը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ:

հերիսօ - հերիսօնիր - հերիսէլին

ծրմիրուգ - ծրմիրուգին - ծրմիրուգնիր

կիղին - կիղնին - կիղննիր

40. Բազմավանկ բառերի շեշտագոր ի ձայնավորը բոլոր դեպքերում, կապված շեշտի տեղափոխման հետ, սղվում կամ վեր է ածվում ը-ի:

ա) հոգնակի թվում՝

դաշիր - դաշորնիր

ցիրին - ցիրըննիր,

սնդիկ - սընդրկնիր

պիպիգ - պիպրգնիր

բ) հոլովման ժամանակ՝

ախմին-ախմընին, էրիգ-էրգօն, մադնի-մադնըլին, հարնըլիք-հարնըլըին, հրննըդի-հրննըդըլին

զ) բառակազմության ժամանակ՝

ախմին-ախմինըթին, պիպիգ-պիպրգնօլ, աղվիր-աղվըրնօլ, սըխդիր-սըխդըրիլ:

Ո ձայնավորի հնչյունափոխությունը

41. Գրաբարյան ո-ի դիմաց Բեյլանի բարբառում միավանկ և բազմավանկ բառերի սկզբում կա ու և ո՛ ողողել-ուղըիլ, ոջիլ-ուշիլ ուն-ուր, ուսպ-ո՞սր, ուլլո-ո՞սպիո, ունսման-ուլնամօն, ոջլոտ-ուչրլոդ, որդնել-ո՞րթուղիլ:

42. Գրաբարյան ո-ի դիմաց բարբառում միավանկ և բազմավանկ բառերի սկզբում կա ի. ով - իվ, ուսկի - իսգի:

43. Բեյլանի բարբառում միավանկ և բազմավանկ բառերի մեջ գրաբարյան ո-ին համապատասխանում է ու, ո՞ւ. սոխ-սո՞խ, ախոռ-ախուռ, փոր-փո՞ր, փող-փո՞խը, մոմ-մում, խոտ-խո՞ղ, խոզ-խո՞զ, գող-կո՞ղ, հոտ-հո՞ղ, թողուլ-թուղիլ, կոճակ-գուջօգ, դողացուցանել-տուղընիլ, գողանալ-կուղնօլ, գովել-կուվիլ, ծոմ-ձում, նոր-նո՞ր, չոր-չո՞ր, խոշոր-խո՞շիր, խմոր-խո՞մոր, խո՞միր:

44. Հաջորդական ո ունեցող բազմավանկ բառերում նախաշեշտ ո-ն սովորաբար դառնում է ը կամ սղվում է. բորբոսիմ-պօրպըսիլ, ոյորեմ-ուլըրիլ, ողորմիլ-ուղըրմիլ, սովորիմ-սօրվիլ, ժողովեմ-ծողվիլ, թորշոմիմ-քումիլ և այլն:

45. Գրաբարյան ո ձայնավորին ի է համապատասխանում բազմավանկ բառերի շեշտագոր վանկում. խնձոր-խընծիր, խմոր-խո՞միր, խոշոր-խո՞շիր, հողի-հիկլի, օրորել-իրրիլ, մատնոց-մադնից, կորկոտ-գուրզիդ, հողի-հիկլի, քորել-քիրիլ, քոր-քիրվըրուր, հոտել-հիդդիլ:

Օ ձայնավորի հնչյունափոխությունը

46. Հայերենի Օ-ին (գրաբարյան աւ) Բեյլանի բարբառում բառակզբում համապատասխանում է օ-ն. օրինել-օրինիլ, օտար-օդօր:

47. Օ-ին ու կամ ո՞ւ է համապատասխանում բառամիջում. աղօթ-աղուտկ, ցող-ցո՞ղ, հօտ-հո՞տ, մօրուք-մո՞րուք, զօտի-կուտի, թօթվել-թութվիլ:

48. Օ-ին բառակզբում համապատասխանում է նաև ու՝ օղակ-ուղօգ, իսկ ձայնորդ ր-ից առաջ՝ ո՞ւ. օրորոց-ո՞րոցցը, օրինակ-ո՞րնօգ, օրէնք-ո՞րէնք:

Օ-ի կորուստ է տեղի ունեցել անօրի-անթի բառում:

49. Միավանկ, ինչպես և բազմավանկ բառերի բառակզբի օ-ն, որն արդյունք է ա հնչյունի հնչյունափոխության, բոլոր դեպքերում մնում է անփոփոխ:

օզկ - օզկին - օզկդէք - օզկըրթին

օգ - օզին - օզիր

օմք - օմքին - օմքիր - օմքիլ:

50. Բեյլանի բարբառում միավանկ բառերի մեջ բարբառային օ պարզ հնչյունը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ անկախ վանկերի հավելումից. ցօն-ցօնին-ցօնիլ, քօք-քօքին-քօքդէք-քօք բնիիլ, հօրու-հօրսին, հօրսդէք-հօրսըրին, շօհ-շօհին-շօհիր-շօհիլ:

51. Բազմավանկ բառերի բարբառային օ-ն (շեշտված և անշեշտ) ձևաբանական, բառակազմական փոփոխությունների ժամանակ մնում է անփոփոխ:

դըրրօգ - դըրրօգին - դըրրօգնիր - դըրրօգիլ

պամպօգ - պամպօգին - պամպօգնիր

տանօգ - տանօգին - տանօգնիր - տանօգիլ

պօնցըր - պօնցըրին - պօնցըրնիր - պօնցըրնօլ:

ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը

52. Գրաբարյան բառասկզբի ու ձայնավորին Բեյլանի բարբառում միշտ համապատասխանում է ու-ն կամ ու-ն. *ուրբար-ուրփօթ, ուխտել-ուխդիլ, ուսուցանել-ուոցընիլ, ուղորդ-ուղդոր, ուրագ-ուրօր, ուրախ-ուրօխ, ուտեմ-ուղիլ:*

53. Գրաբարյան ու ձայնավորի դիմաց միավանկ և բազմավանկ բառերի մեջ կա ու. *կուշտ-գուշտ, թուղթ-թուխտ, հում-հում, խունկ-խունգ, ջուր-ձուր, հունվար-հունվօր, մուտ-մուդ, մօրուր-մօրուր, յունխունխու, Յիսուս-Ճիսուս:*

54. Գրաբարյան ու-ի դիմաց բարբառու ու կամ ու ունի և բառավերջում. *լեզու-լուզոմ, կատու-զադու, երկու-ըրգու, թթու-թթու:*

55. Բացի այդ օրինաչափ երևույթներից, ու-ն ենթարկվել է մի քանի մասնակի փոփոխությունների.

ա) ու-ի դիմաց օ՝ զլուխ-կրօխ

բ) ու-ն դուրս է ընկել. *ուղարկել-ուրգիլ:*

56. Միավանկ բառերի բառասկզբի ու ձայնավորը բառի ձևաբանական, բառակազմական փոփոխությունների հետևանքով. շեշտը կորցնելով՝

ա) հնչյունափոխում է ը-ի. *ուխտ-ըխտավօր-ըխտավօրին-ըխտավօրդէք-ըխտավօրըթին:* Այս հնչյունափոխությունը կա նաև Վանի, Սուշի, Սասն բարբառներում:

բ) անփոփոխ է մնում՝ *ութ-ութին-ութնօց, ուշ-ուշանալ-ուշացմօն, ուշը-ուշիլ-ուշըին:*

57. Բազմավանկ բառերի բառասկզբի շեշտազուրկ ու-ն բոլոր դեպքերում մնում է անփոփոխ. *ուրփօթ-ուրփօթին-ուրփօթնիր, ուրախ-ուրօխըթին:*

58. Միավանկ բառերի ու ձայնավորը բառի աճման հետևանքով հնչյունափոխվելով դառնում է ը.

ա) հոգնակի թվում. *թուղթ-թրղթէք, խունգ-խրնզիր, ծուխ-ձրիիր:*

բ) հոլովման ժամանակ՝ *թուղթ-թրղթին, նուռ-նըռօն, ծուգ-ծրգին:*

գ) Բառակազմության ժամանակ՝ *մուդ-մրդնօլ, ձուր-ձրիիլ, ձուխ-ձրիիլ:*

59. Բազմավանկ բառերի շեշտակիր ու ձայնավորը, շեշտակորուս լինելով, հնչյունափոխում է ը-ի կամ սղվում է:

ուսում-ուսըմին-ուսըմնիր-ուսսիլ

անուն-անըննիր-անընի

մորուր-մուրուր, մուրընիր-մուրըիր

60. Բառավերջի ու ձայնավորը Բեյլանի բարբառում, ձայնավորից առաջ, հնչյունափոխում է վ-ի. *լեզու-լուզոմ-լիզվին-լիզվընի, թթու-թթութին-թթութընիր-թթութիլ:*

ԳՐԱԲԱՐՅԱՆ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ
ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այ (Ե) Երկբարբառ

61. Գրաբարյան այ Երկբարբառի դիմաց Բեյլանի բարբառում բառասկզբում առկա է էպարզ ձայնավորը. *այլ > էլ, այս > էս, այդ > էդ, այն > էն, այշափ > էտչօփ, այդքան > էտքօն, այնտեղ > էտդաղ, այր > էրիգ, այրել > էրիլ, այծ > էձ, այզի > էկիի:*

62. Միավանկ բառերի մեջ կա է կամ այլ. *հայր > հնըր, լայն > լէն, մայր > մնըր, ձայն > ծէն, փայտ > փնդդ, քայլ > քէլք, ծայր > ձէր, փայլ > փէլք, սայլ > սէլ, տայգը > դնարը:*

Այ Երկբարբառի դիմաց բարբառը է կամ այ ունի նաև բազմավանկ բառերի ինչպես շեշտված, այնպես էլ շեշտազուրկ վանկերում.

Երկայն > իրգէն, քայլել > քէլիլ, կայծակ > զէծօգ, խայթել > խէթիլ, եղբայր > ախպար, մայրութիւն > մնարըթին, լայնանալ > լէննօլ, վայելել > վէլիլ, լայնութիւն > լէնըթին, ձայթել > ձէթիլ, փայլել > փնդիլ, հայել > հնիլ, այրել > էրիլ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— «Վայելել» գրական փոխառությունը բարբառում հանդիպում է և՝ հնչյունափոխված, և՝ չհնչյունափոխված՝ վէլիլի, վէլիլ ձևերով:

63. Բառավերջին այ-ի դիմաց բարբառում, բոլոր դեպքերում առկա է օ ձայնավորը. *փեսայ > փիօ, մեղայ > մէղօ, աբեղայ > ապէղօ, խաբէրայ > խափէփօ, սատանայ > սադանօ, տղայ > դրդօ, քահանայ > քահանօ:*

64. Բեյլանի բարբառում կան գրաբարից և գրական լեզվից անցած բառեր, որոնց մեջ այ Երկինչյունը դառնում է էլ. օրինակ՝ *հայ > հնյ, խայտառակ > խէդառօգ, հայելի > հէյլի:*

Աւ երկարբառ

65. Բառասկզբում աւ հնչյունախմբի դիմաց կա իվ. աւել > իվի, աւելնորդ > իվիլնորք, աւելցնել > իվիլցնիլ բառերում:

66. Բառասկզբում և բառամիջում աւ հնչյունախումբը նույնությամբ պահպանված է բաց վանկում. աւագ > ավօր, աւագ > ավօզ, աւետարան > ավեղարօն, ձգնաւոր > շըքնավուր, աւերել > ավրիլ, հաւանալ > հավնիլ, հաւատ > հավօդ, կեսար > զիսասվուր, աւանակ > ավանօգ, աւել > ավիլ, սաւան > սավօն:

67. Փակ վանկում աւ երկարբառին համապատասխանում է օ-ն՝ յաւր > յօր, մաւտ > մօդ, հաւտ > հօդ, աւր > օր, աւց > օց:

68. Երկու և ավելի վանկ ունեցող բառերի բառամիջում աւ երկարբառին համապատասխանում է ու-ն՝ խաւսել > խուսիլ, խաւսք > խուսք, կարաւտ > գարուդ, ծնաւլ > ձընուդ, մաւրուք > մմիւրոք, հաւրարոյր > հուրքիր, ամաւր > ամուր, աւրաւրոց > ուրուցք:

69. Բառավերջում գրաբարյան աւ հնչյունախմբին համապատասխանում է օվ-ը՝ ցաւ > ցով, հաւ > հօվ, պառաւ > բառով, լաւ > լօվ, կարաւ > գարօվ, կտաւ > զրոյօվ, ծարաւ > ձարօվ:

Եա երկարբառ

70. Գրաբարյան եա երկարբառին Բեյլանի բարբառում շեշտված վանկերում համապատասխանում է է կամ ա. լեառն > լար, լառ, լեարդ > լրք, վառեալ > վառէզ:

71. Փակ վանկում եա-ի դիմաց ու կա՝ իւրեանք > իրունք, իւրեանց > իրունց բառերում:

72. Գրաբարյան անցյալ դերբայի վերջավորության եա երկարբառի դիմաց բարբառու ունի ի. զրեալ > կըրիլ, քերեալ > պիրիլ, կերեալ > զիրիլ, ածեալ > ածիլ, նստեալ > նըտիլ, տարեալ > դարիլ, հասեալ > հասիլ, մեռեալ > մլոիլ:

73. Գրաբարյան է խոնարհման բայերի հրամայական եա վերջավորության դիմաց բարբառու ունի է՝ քընեա՛՝ քընէա՛՝ զրեա՛՝ կըրէ՛, սիրեա՛՝ սիրէ՛:

Իւ երկարբառ

74. Բառասկզբում իւ հնչյունակապակցությունը Բեյլանի բարբառում

կրել է հետևյալ փոփոխությունները.

ա) իւ > յա. իւդ > յադ, իւղալի > յաղլը, իւղել > յաղիլ,

բ) իւ > ի. իւրեան > իրին, իւրեանք > իրունք, իւրեանց > իրունց, ձին > ծին, հիւս > հիս, ձիւք > ծիք, արիւն > էրին, մրջին > մըրչին, եղբայրութիւն > ախպարքին, ալիւր > էլիր, սղութիւն > սրդրին, նեղութիւն > նէղըթին, սատանութիւն > սադանըթին, հարիւր > հէրիր:

75. Բառավերջում իւ հնչյունակապակցությունը պահպանվել է նույնությամբ. պատիւ > բողիվ, կոփի > զրոփիվ, հաշիւ > հէշիվ:

76. Կան բառեր, որոնց մեջ իւ-ը գրվում է նույնությամբ. հիւանդ > հիվօնս, դիւան > տիվօն, արծիւ > արձիվ:

77. Իւ երկարբառը դարձել է ը. արիւնել > էրրնիլ բառում:

78. Բարբառում իւ երկարբառը կարող է դարնալ է՝ զիւդ-կէդ, իւդ-յէդ: Այս ձևերը բնորոշ են նաև Վանի, Սասունի բարբառներին:

Ոյ երկարբառ

79. Փակ վանկում ոյ-ի դիմաց կա ի. քոյր > քիր, լոյս > լիս, զրոյց > զրիցը, ընկոյզ > ընզիզ, բոյն > փին, փիննիզ, թոյլ > թիլ, երբեմն է՝ ու հանզոյց > հանկուց:

Եւ երկարբառ

80. Եւ հնչյունակապակցության դիմաց Բեյլանի բարբառում թէ՝ փակ, թէ՝ բաց վանկերում կա իվ. սեւանալ – սիվնօլ, երեւանալ – իրիվնօլ, անձրեւ – անծրիվ, արեւ – արիվ, տերեւ – դիրիվ, թեւ – թիվ, թերեւ – թիրիվ, կեղեւ – զիղիվ, ձեւեմ – ծէվիլ:

Եօ երկարբառ

81. Եօ երկարբառը առկա է եօթն բառում, որը հնչում է յօ: Այդպէս են հնչյունափոխում և յօթ-ով կազմված բոլոր բարդ բառերը:

Ուա, ուե, ուի երկարբառներ

82. Գրաբարյան ուա, ուի երկարբառներին Բեյլանի բարբառում համապատասխանում են վօ, վի. աստուած > ասվօձ, աստուած, լեզուանի > լիզվնի, լիզուանի, թթուաշ > թթթվօշ, չուան > չըվօն, զուարթ > զրվոթ,

բուրուառ > բուրվօն, առաջուան > առէշվօն, առէշուան, հազուիլ > հարվիլ, զատուիլ > իզողվիլ, ծեծուիլ > ձիձվիլ:

83. Ուե հնյունակապակցությանը համապատասխանում է լի. թթուել > թլթվիլ:

Եայ եռաբարբառ

84. Եայ-ը Բեյլանի բարբառում եռաբարբառային հնչում չունի: Այն չի հանդիպում և բառամիջում:

85. Բառավերջում եայ-ի դիմաց բարբառը ունի չ՝ արծաթեայ > էրծօթէ, հողեայ > հօղէ, փայտեայ > փնադէ, երկաթեայ > իրգօթէ, թղթեայ > թղխօթէ:

Եաւ եռաբարբառ

86. Եաւ-ը Բեյլանի բարբառում եռաբարբառային հնչում չունի:

87. Այս հնյունակապակցությամբ Բեյլանի բարբառում միայն երեք բառ կա, որոնց մեջ ես-ին համապատասխանում է ի. սեաւ > սիվ, առաջեաւ > առչիվ, բարեաւ > պարիվ:

ԲԱՂԱՋԱՅՆԱԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԶԱՅՆԵԴ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Բ բաղաձայն

88. Գրաբարի բ ձայնեղ պայթականի դիմաց Բեյլանի բարբառում կա խուլ պայթական պ. բաժան > պաժօն, բակլայ > պակլօ, բաղանիք > պաղնիք, բանալի > պալինք, բարակ > պարօգ, բարեաւ > պարիվ, բարձ > պօրց, բարձր > պօնցըր, բաց > պօց, բախտ > պօխտ, բաժանել > պաժնիլ, բամբասանք > պամբասօնք:

89. Բառամիջում բ ձայնեղ պայթականի դիմաց բ կա մ և ն ոնզայիններից հետո. բամբակ > պամբօց, համբարձում > համբօրցում, բամբասանք > պամբասօնք:

90. Բ ձայնեղ պայթականը պ-ի է վերածվում բառամիջում՝ բառաբրդությունների ժամանակ. բերանաբաց > պիրօնպօց:

91. Բառամիջում, խնչպես և բառավերջում բ-ի դիմաց խուլ պայթական պ կա լր հնյունախմբի մեջ, որն ամբողջապես հնյունափոխվել է խայ-ի:

Բ ձայնեղ պայթականի խլացման այս օրենքը գործում է բոլոր այն դեպքերում, երբ ձայնեղ պայթական բ-ն հանդես է զալիս խուլ պայթականների և խուլ շփականների հետ. աղբ > օխպ, աղբանց > օխպանից, եղբայր > ախպայր:

92. Բառամիջում, խնչպերջում բ-ի դիմաց շնչեղ խուլ փ կա թ ձայնորդից հետո. ուրբաթ > ուրփօթ, սրբութիւն > սրբփութին, սրբել > սրբփիլ, սուրբ > սուրփ:

93. Բառամիջում բ ձայնեղ պայթականը երկու ձայնավորների միջև դառնում է փ. խարել > խափիլ, խարերայ > խափելփօ:

94. Բ-ի դիմաց փ կա նաև բոլոր այն դեպքերում, երբ բ-ն նախորդում է թ շնչեղ խուլին. երկրշարթի > իրիքշօփթի, չորերշարթի > չիրիքշօփթի:

95. Բ ձայնեղ պայթականի դիմաց բառավերջում բոլոր դեպքերում (բացի 95-րդ կետից) բարբառու ունի փ. զուր > քուրփ, երբ > իփ:

Գ բաղաձայն

96. Գրաբարի ձայնեղ պայթական գ-ն հնչում և գրվում է խուլ պայթական կ կամ կ. զազարն > կարօթ, զաղտուկ > կաղորուգ, զլիխվայր > կրլիսրվել, զուխ > կրլոխ. զուանել > կրլնօլ, զող > կրնղ, զեղ > կրնաց > կրնօց, զոտի > կուտի:

97. Բառամիջում զ ձայնեղ պայթականը հնչում և գրվում է զ ն ոնզայինից հետո. զանգ > զօնզ, զանզակ > զօնզօզ:

98. Բառամիջում զ ձայնեղ պայթականը հնչում և գրվում է թ կամ թ.

ա) երկու ձայնավորների միջև. ազանելի > հաքնըլիք, զազարն > կարօթ, բազաւոր > թաքնափնիք, բազուի > բաքույի, տայզր > դաքրը, պազանել > բարնիլ:

բ) ձայնավորից հետո. ձզնաւոր > ջըքնավուր,

զ) թ-ից հետո. կարգել > զարքիլ, Մարզար > Մարքօր, մարզարիս > մարքըրիդ, Մարզիս > Մարքիս:

99. Բառավերջում գ-ն հնչում և գրվում է թ կամ թ/բոլոր դեպքերում. հոզ > հոյթ, անհօզ > անհոյթ, պատարազ > բաղարօթ, երզ > էրթ, կարզ > զօրք, ձազ > ծօրք, ուրազ > ուրօթ, փափազ > փափօթ:

100. Բառամիջում և բառավերջում գ-ն հնչում և գրվում է կ ն ոնզայինից հետո. զանզատ > կանկօտ, զանզատել > կանկըտիլ, ժառանգ > ժառօնիլ, հանզիստ > հօնկիստ, հանզոյց > հանկուց, հինգ > հինկ:

101. Բառամիջում նույն հնյունական դիրքում ն ոնզայինից հետո թ է

հնչում և գրվում անգամ > անրօս բառում:

102. Գ-ն դուրս է ընկել՝ կանգնել > զինոլ բառում:

Դ բաղաձայն

103. Գրաբարի ձայնեղ պայթական դ-ն բառավագրում Բեյլանի բարբառում հնչում է և գրվում խուլ պայթական տ. դադար > տաթօր, դարձ > տօրց, դդում > տըրում, դոդ > տուդ, դրացի > տըրօցի, դանակ > տանօգ, դգալ > տըկօլ, դուրն > տուր, դուրս > տուրս, դնել > տընիլ:

104. Բառամիջում դ ձայնեղ պայթականը երկու ձայնավորների միջև դառնում է թ. դադար > տաթօր, դդում > տըրօւմ:

105. Բառամիջում դ-ին համապատասխանում է տ բարդ և ածանցված բառերի երկրորդ բաղադրիչ մասում. անդարձ > անտօրց, չդոդալ > չըստուիլ, անդադար > անտաթօր:

106. Բառամիջում, ինչպես նաև բառավերջում դ-ն հնչում և գրվում է թ թ ձայնորդից հետո. անարդար > անարթօր, անմարդ > անմօրթ, արդար > արթօր, բուրդ > պուրթ, զարդ > զօրթ, զարդարանք > զարթարօնք, զարդնուլ > արթըննօլ, մարդ > մօրթ, վարդ > վօրթ, ուղղորդ > ուղուրթ, շարդել > ճարթիլ, կարդալ > զարթիլ, վարդապետ > վարթարիդ:

107. Բառամիջում, ինչպես և բառավերջում դ ձայնեղ պայթականը ն ոնգայինից հետո դառնում է տ. զընդել > կընտիլ, զունդ > կունտ, ծնունդ > ձընունտ, հիւանդ > հիվօնտ, հնազանդ > հնազօնտ, պինդ > բինտ:

108. Դ-ն հնչում և գրվում է տ դդ հնյունախմբի մեջ, որն ամբողջովին հնյունափոխվել է խտ-ի. խեղդել > խրխտիլ, բախտ > պօխտ:

109. Բարբառում, առանց բացառության, բոլոր դեպքերում 2-րդ դեմքի դիմորդ դ հոդին համապատասխանում է խուլ պայթական տ-ն. աշրդ > աշքիտ, ձեռդ > ծիրքիտ, ուտրդ > ուդրիտ, զլուխդ > կըլօխիտ, զուրդ > ձուրիտ, բերանդ > պիրօնիտ:

110. Բառամիջում դ է ավելացել ն և թ բաղաձայնների միջև. սանր > սօնդր, մանր > մօնդր, ծանր > ձօնդր:

Դ բաղաձայնը

111. Հայերենի ձ ձայնեղ պայթականը Բեյլանի բարբառում հնչում և գրվում է ծ. ձագ > ծօր, ձայն > ծէն, ձեզէն > ծիզնէն, ձեռն > ծիրը, ձեր > ծիթ, ձիւն > ծին, ձուկն > ծուգ, ձեւ > ծիվ:

112. Բառամիջում ու բառավերջում ձ ձայնեղ պայթականը անփոփոխ է մնում ն ոնգայինից հետո. աղանձ > աղօնձ, աղանձել > աղընձիլ, անձրեւ > անձրիվհանուր, բանձր > թօնձր, թանձրանալ > թօնձրնօլ, ինձէն > ընձնէն, իւանձել > խօնձիլ, խնձոր > խընձիր, պապանձիլ > բաբընձիլ:

113. Չ ձայնեղ պայթականը հնչում և գրվում է ծ բարդված ու ածանցված բառերում. անձայն > անձէն, բաղցրաձայն > բօխցրծէն:

114. Բառամիջում ձ-ն հնչում և գրվում է ց թ-ից հետո. բարձել > պօրցիլ, փորձանք > փուրցօնք, բարձր > պօնցր, համրածումն > համրօցում, դարձուցանել > տօրցընիլ, բարձրանալ > պօնցրընօլ:

Դ բաղաձայնը

115. Հայերենի չ չ ձայնեղ պայթականին Բեյլանի բարբառում բառավագրում համապատասխանում է խուլ պայթական ձ. ջոկ > ձօգ, ջուկհակ > ձուկհօգ, ջուր > ձուր, ջրադաց > ձադօց, ջրիկ > ձըրիգ, ջարդել > ձարթիլ:

116. Բառամիջում չ չ ձայնեղ պայթականը հնչում և գրվում է ճ բարդ և ածանցված բառերի երկրորդ բաղադրիչ մասում. աղաջուր > օղձուր, անջրաղաց > անձաղօց, բաղդիջան > պատլրծօն:

117. Բառամիջում և բառավերջում ջ-ն հնչում և գրվում է ջ ն ոնգայինից հետո. նահանջ > նօհօնջ, տանջանք > դննջօնք, տանջել > դօնջիլ, բանջար > պէնջօր, մունջ > մունջ, ականջ > էնգէճ:

118. Բառամիջում և բառավերջում ջ-ն հնչում և գրվում է չ չ հնչունախմբի մեջ, որն ամբողջովին հնյունափոխված է խճ-ի. աղջիկ > ախճին, առողջ > առուխճ, առողջութիւն > առըխճըթին:

119. Բառամիջում մնացած բոլոր դեպքերում առկա են չ չ ձայնեղ պայթականի խացման դեպքեր ձայնավորներից հետո, ձայնավորների միջև և թ-ից հետո. առաջեաւ > առշիկ, առաջի > առշի, իջանել > իջնօլ, իջուցանել > իջրընիլ, մեջք > մէջք, միջնորդ > միջնուրթ, միջնեկ > միջնօց:

120. Բառավերջում բոլոր դեպքերում ջ-ին համապատասխանում է չ աջ > էջ, մեջ > մէջ:

121. Բառամիջում և բառավերջում ջ-ին չ համապատասխանում նաև թ-ից հետո. արջ > էրժ, թրջել > թըրջիլ, վերջ > վիրժ:

Պ բաղաձայն

122. Հայերենի խուլ պայթական պ-ին բառասկզբում համապատասխանում է թ. պազանել > բօքիլ, պակաս > բազոս, պահել > բնիլ, պապ > բօք, պառաւ > բառով, պատարագ > բադարօք, պտուտել > բրդրիլ, պատիծ > բադիչ:

123. Բառամիջում պ-ն դառնում է թ, եթե նրանով սկսվող բառը կազմում է բարդված կամ ածանցված բառի երկրորդ բաղադրիչ մասը. անպատիւ > ամբողիկ, անպակաս > օմբազոս (թ-ի ազդեցությամբ ն-ն դառնում է մ):

124. Պ խուլ պայթականը սպ, շպ հնչյունախմբի մեջ փոխվում է թ-ի. սպասիլ > ըսրասիլ, սպանել > ըսրաննիլ, ուսպն > ուսպ:

125. Մնացած բոլոր դեպքերում բառամիջում բարբառին հատուկ է պ խուլ պայթականի ձայնեղացումը: Այն ձայնեղանում է երկու ձայնավորների միջև, ձայնավորներից, թ ձայնորդից առաջ. ապա > հարօ, բոպիկ > պիբիկ, կապել > զաբիլ, ապրանք > աբրօնք:

126. Բառավերջում ևս խուլ պայթական պ-ն հնչում և գրվում է ձայնեղ թ. ամպ > օմբ:

Ը բաղաձայն

127. Հայերենի խուլ պայթական կ-ին Բեյլանի բարբառում բառասկզբում համապատասխանում է գ. կաքն > զօթ, կանզնել > զինօլ, կարճ > գանցօ, կնքել > զընքիլ, կէս > զիս, կէսաւր > զիսսավուր, կոճակ > զուզօգ, կեղենել > գանդիլ, կարգել > զարդիլ:

128. Բառամիջում կ-ն հնչում և գրվում է գ բարդ և ածանցված բառերի երկրորդ բաղադրիչ մասում. անկնունք > անզընունք, մարդակեր > մօրթազիր, հաւկիր > հօվզիր, կերակուր > զիրագուր:

129. Խուլ պայթական կ-ին Բեյլանի բարբառում բառամիջում մյուս դեպքերում համապատասխանում է գ-ն.

ա) Երկու ձայնավորների միջև, ձայնավորից հետո. լալական > լալզօն, կերակուր > զիրագուր:

թ) թ ձայնորդից հետո. երկաթ > իրզօք, ուղարկել > իսրզիլ, երկին > իրզինք, զարկանել > զարզիլ, երկայն > իրզէն, երկու > ըրզու:

զ) ն ոնզայինից հետո. ընկեր > ընզիր, անկանել > ընզիլ:

130. Խուլ պայթական կ-ին սկ, շկ հնչյունակապակցությունների մեջ համապատասխանում է գ. սկսանել > բսզրսիլ, ուկի > իսզի, ուկր > ուսզիու, հասկանալ > հասզրնոյ:

131. Բառավերջում կ խուլ պայթականի դիմաց Բեյլանի բարբառում առկա է ձայնեղ գ-ն. ակն > օզ, բամբակ > պամբօզ, զատիկ > զոդիզ, ձուկն > ծուզ:

132. Կ խուլ պայթականը ենթարկվում է մի քանի մասնակի հնչյունակիոնությունների.

ա) կ-ի դիմաց թ կա. կարաւան > բէրվօն (թուրք. kervan)

թ) կ-ի անկում է նկատվում. կնքամայր > ընքամնար, կնքահայր > ընքարօք բառերում:

Տ բաղաձայնը

133. Հայերենի խուլ պայթական տ-ին բառասկզբում Բեյլանի բարբառում համապատասխանում է դ. տայզր, տազր > դաբրոր, տալ > դոլ, տանջանք > դանջօնք, տապակ > դաբօզ, տապակել > դաբզիլ, տասն > դոս, տեսանել > դիսնոյօլ, տաւար > դավօր, տղայ > դրդօ, տուն > դուն, տակ > դօզր:

134. Բառամիջում տ-ն բարդ և ածանցված բառերի երկրորդ բաղադրիչ մասում դարձել է դ. անտէր > անդիր, այնտեղ > էնդնադ, ուտնատեղի > ուդոցդիդ:

135. ա) Խուլ հնչյունակապակցության մեջ տ խուլ պայթականը մնում է անփոփոխ. սխտոր > սըխտիր, տախտակ > դախտօզ, ուխտ > ուխտ, ըխտավօր, անբախտ > ամպօխտ, բախտ > պօխտ:

թ) Ստ հնչյունակապակցության մեջ տ խուլ պայթականը դառնում է դ. վասդզիլ, հաստ > հօսդ, յատակ > իսդօզ և այլն:

136. Բառամիջում տ-ի դիմաց կա ձայնեղ պայթական դ. գէտին > կիդին, գոտի > կուդի, գոտանել > կրդնոյօլ, կտրած > զրդրօձ:

137. Տ-ն դուրս է ընկել աստված > ասվօձ բառում:

Ծ բաղաձայնը

138. Հայերենի խուլ պայթական ծ-ին Բեյլանի բարբառում բառասկզբում համապատասխանում է ձ. ծագել > ձարիլ, ծանք > ձօնդրը, ծնունդ > ձընունդ, ծակ > ձօզ, ծամել > ձօմիլ, ծառ > ձօն, ծնանիլ > ձըննիլ, ծում > ծում:

139. Բառասկզբում ծ-ն հնչում և գրվում է ձ բարդ և ածանցված բառերի երկրորդ բաղադրիչ մասում. չծամել > չըճամմիլ, չծնանել > չըճըննիլ:

140. Բառամիջում խուլ պայթական ծ-ն հնչում և գրվում է ձայնեղ պայթական ձ՝ ածանել > ածիլ, անիծանել > անըծիլ, հեծանել > հիծնօլ, պարծանք > բարձօնք:

141. Բառավերջում խուլ պայթական ծ-ն հնչում և գրվում է ձ. կոկիծ > զրսզիծ, այծ > էծ:

142. Ծ խուլ պայթականը բարբառում կրել է մի քանի մասնակի փոփոխություններ.

ա) ծ-ն հնչում և գրվում է ց. պրծանել > փրրցընիլ

բ) ծ-ն հնչում և գրվում է դ. ծածկել > դածզիլ: Այս ծ > դ փոփոխությունը բացատրվում է ծ բարդ բաղաձայնի ծ > տ + ս կազմությամբ. ծածանել > տատանել, սասանել, ուր ս-ն ընկել է, իսկ խուլ տ-ն վերածվել դ-ի:

Ճ բաղաձայնը

143. Հայերենի ճ-ին Բեյլանի բարբառում բառասկզբում համապատասխանում է ջ. ճակատ > ջազօդ, ճանաչել > ջանընօլ, ճանապարհ > ջամրօ, ճանկ > ջօնգ, ճրագ > ջըրօր:

144. Բառամիջում ճ խուլ պայթականը դառնում է ջ բարդ և ածանցյալ բառերի երկրորդ բաղադրիչ մասում. անճրագ > անջըրօր, անճանապարհ > անջամրօ:

145. Բառամիջում խուլ պայթական ճ-ին համապատասխանում է ջ. կոճակ > զուջօգ:

146. Բառավերջում բոլոր դեպքերում ճ-ին համապատասխանում է ձայնեղ պայթական ջ. կարճ > փայրջ, ճանճ > ջանչ:

ՇՆՈՒՐԻ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Փ բաղաձայնը

147. Հայերենի շնչեղ խուլ պայթական փ-ին Բեյլանի բարբառում բառասկզբում համապատասխանում է փ. փայտ > փայդ, փոխանորդ > փուխնորժ, փոխել > փայխիլ, փոր > փուր, փաթաթել > փաթթիլ, փեսայ > փիսօ, փերք > փիրք:

148. Բառամիջում ևս իին հայերենի փ-ին Բեյլանի բարբառում համապատասխանում է փ-ն. եփել > իփիլ, իսփանել > իսրփիլ:

149. Փ-ին փ է համապատասխանում և բառավերջում. չափ > չօփ, ափ > օփ, երփ > իփ, խոփ > խոփի:

Ք բաղաձայնը

150. Հայերենի շնչեղ խուլ պայթական ք-ն հնչում և գրվում է ք.

ա) բառասկզբում. քահանայ > քահանօ, քաղցր > քօխցրը, քոյր > քիր, քեզեն > քրզեն, քիթ > քինթ:

բ) բառամիջում. աղքատ > ախրօդ, այղքան > էտրօն, կնրամայր > ընքնամայր:

գ) բառավերջում. աղքանը > արրօնը, արեւելք > արիվիլք, զարդարանք > զարքարօնք, երեք > իրիք, խելք > խիլք, մէջք > մէչք, աչք > աչք, միտք > միդք:

դ) Կան բառեր, որոնց վերջում բարբառում ք է ավելանում՝ բանալի > պալինք, պատկեր > բաղզիրը, կշիռ > զրշիռը, ջրաղաց > ձաղօցը, բարեկենդան > պարզինդօնք, զրոյց > զըրիցը:

ե) բառավերջի ք-ին համապատասխանում ք և (հայցական հոլովի՝ Աւետիք > Ավետիս և չորք > չուրս բառերում: Այս երևույթը նկատվում է ժողովրդախոսակցական լեզվում, այլ բարբառներում ևս:

Թ բաղաձայնը

151. Հայերենի խուլ շնչեղ պայթական թ-ին Բեյլանի բարբառում օրինաշափորեն համապատասխանում է թ-ն.

ա) բառասկզբում. թաթ > թօթ, թէ > թը, թեթել > թիթիլ, թողուլ > թուղիլ, թաղ > թօդ, թանձր > թօնձրը, թէն > թիվ:

բ) բառամիջում. խայթել > խէթիլ, անորի > անթի, ամօթանք > ամթթօնք, աղքատութիւն > ախքրդութիւն

գ) բառավերջում. խայթ > խէթ, ամօթ > ամութ, զազաթն > կարօթ, կաթն > զօթ, ձիւթ > ծիթ, երկաթ > իրզօթ, արծաթ > էրծօթ:

Չ բաղաձայնը

152. Հայերենի շնչեղ խուլ պայթական շ-ն Բեյլանի բարբառում բոլոր դեպքերում հնչում և գրվում է շ.

ա) բառասկզբում. շած > շօծ, շամաքել > շամքիլ, շաւ > շօվ, ցորեան > շիրին, շաւեցուցանել > շավցընիլ:

բ) բառամիջում. երիցակին > իրիցզին, անցուցանել > անցընիլ, դրացի > տրրացի:

գ) բառավերջում. բաց > պօց, երէց > իրից, իրեանց > իրունց, ծոց > ձմնց:

Զ բաղաձայն

153. Հայերենի շնչեղ խուլ պայթական չ-ն Բեյլանի բարբառում բոլոր դեպքերում հնչում և գրվում է չ.

ա) բառասկզբում. չարչարանք > չարչարօնք, չօր > չո՛ր, չորանալ > չիրնօլ, չուան > չըվօն. չար > չօր, չափ > չօփ:

բ) բառամիջում. ամաչել > ամըչնօլ, աչք > ա՛չք, չարչարանք > չարչարօնք, խաչապաշտ > խա՛չաքօշդ:

գ) բառավերջում. ինչ > ինչ, իսաշ > իսա՛շ, կանաչ > գէնէնչ, խայթիչ > խա՛յթիչ:

154. Բարբառում չ-ն դուրս է ընկել թոշել > թըտոհիլ բառում:

ԶԱՅՆԵԴ ՇՓԱԿԱՆՆԵՐ

Վ բաղաձայն

155. Գրաբարյան վ ձայնեղ շփականին Բեյլանի բարբառում համապատասխանում է վ.

ա) բառասկզբում. վազել > վազզիլ, վաստակ > վասդօզ, վնաս > վընօս, վայելել > վէլիլ, վարդ > վօրթ, վանք > վօնք:

բ) բառամիջում. յունվար > հունվօր, սովորել > սօրվիլ:

գ) բառավերջում. ծով > ձուվ, կով > գուվ, սով > սուվ:

Զ բաղաձայնը

156. Հայերենի գ ձայնեղ շփականին Բեյլանի բարբառում համապատասխանում է գ.

ա) բառասկզբում. զանգակ > զանգօզ, զատիկ > զօդիզ, զարդ > զօրթ:

բ) բառամիջում. ազատ > ազօդ, մազեայ > մազզէ, զերեզման > կիրիզմօն:

գ) բառավերջում. խոզ > խո՛զ, աւազ > ավօզ, մազ > մօզ, ընկոյզ > ընզիզ:

157. Չ-ն ընկել է զարդնուլ > արթըննօլ բառում:

158. Հայերենի ժ ձայնեղ շփականը ն' բառասկզբում, և' բառամիջում, և' բառավերջում հնչում և գրվում է ժ. ժամ > ժօմ, բաժանել > պա՛ժնիլ, ոյժ > ուժ:

Երազ > իրօձ բառում կա զ-ձ անցում, իսկ իսէժ > իրիզ և պատիժ > բաղիզ բառերում՝ ժ-զ անցում: Սա, կարծում ենք, հետևանք է պարզ հնչունների բարդեցման՝ դ + զ = ձ, դ + ժ = զ:

Ղ բաղաձայն

159. Բեյլանի բարբառում բառասկզբում դ չկա:

160. Բառամիջում դ-ն հնչում և գրվում է դ. աղանձ > աղօնձ, աղօթք > աղութք, դեղին > տեղին, աղալ > աղօլ, ծաղիկ > ձաղիզ, կատաղել > գադղիլ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բառամիջում, հնչունական նման դիրքում բառասկզբի խուլ ս-ի ազդեցությամբ ձայնեղ դ-ի դիմաց կա և խուլ իւ. սեղմել > սըխմիլ:

161. Բառավերջում. թաղ > թօղ, գող > կո՞ղ, դող > տող, խաղող > խաղուղ, աղ > օղ, ասող > ըսսօղ, գիղ > կէղ, տեղ > դաղ և այլն:

162. Բառավերջում և բառամիջում դ-ին համապատասխանում է իւ դր հնչունակապակցության մեջ, որն ամբողջովին հնչունափոխվում, դառնում է խաղ. դ-իւ, բ-պ. աղբ > օխաղ, աղբանց > ախապանից, եղբայր > ախպայր:

163. Դ-ին համապատասխանում է իւ դը հնչունախմբի մեջ, որն ամբողջովին հնչունափոխվել է խճ-ի. աղջիկ > ախճին:

164. Նույն օրինաչափությամբ դ-ն շփականների, խուլ պայթականների ու շնչեղ խուլերի ազդեցությամբ հնչում և գրվում է իւ. աղքատ > ախքօտ, աղքատութիւն > ախքքդթին, խեղդ > խըխտ, խեղդել > խըխտիլ, թուղթ > թուխտ, շող > շո՞ւխի՛ բառերում:

165. Գրաբարյան բառասկզբի *J*-ն բարբառում դարձել է *h*, օրինակ՝ *յաղթել* > *հախթիլ*, *յիշատակ* > *հիշադոգ*:

Յառաջ բառում *J*-ն ընկել է՝ *առէ*, նույնպես՝ *Յարութիւն* > *Արթին*, *Յակոր* > *Ազիփ*:

Բեյլանի բարբառում ևս, որպես կանոն լսվում է *J* ձայնակապը, ինչպես՝ *զարթօյինք դի*, *կորրյինք դի*:

ԽՈՒԼ ՇՓԱԿԱՆՆԵՐ

Ֆ բաղաձայնը

166. Այս հնչյունով բառ Բեյլանի բարբառում չկա: Ֆ հնչյունով է զրվում միայն այլ լեզուներից կատարված փոխառությունը՝ *ֆալքր-ձակատազիր*, *ֆալզր-զրբաց*, *ֆայդո-օզուտ*, *ֆորթանօ-փոթորիկ* և այլն:

Ս բաղաձայն

167. Հայերենի խուլ շփական ս-ին համապատասխանում է ս բոլոր դիքրերում:

Շ բաղաձայն

168. Հայերենի խուլ շփական շ-ին Բեյլանի բարբառում բոլոր դեպքերում համապատասխանում է շ-ն:

Խ բաղաձայն

169. Հայերենի խուլ շփական իւ-ին համապատասխանում է իւ բոլոր դեպքերում:

Հ բաղաձայն

170. Հայերենի *h* խուլ շփականին համապատասխանում է *h* բառասկզբում և բառամիջում:

171. Հ-ն դուրս է ընկել ձանապարհ-ջամբո, շնորհր-շունդորի, պահր-րօր, աշխարհ-աշխօր բառերում:

Երբեմն *h* է ավելանում որոշ բառերում՝ *արքած-հարփօծ*, *ապա-հարօ*:

172. Հայերենի *h* խուլ շփականին բարբառում որոշ դեպքերում համապատասխանում է *j*. *h-j*, որը լայնորեն դիտվում է նաև Մշո բարբառում և Կամոյի խոսվածքում՝ *թագուիի-թագույի*, *դեհ-թիյ*, *Մարրուիի-Մարրույի*, *Տիրուիի-Տիրույի*, *Սրբուիի-Սրբույի*, *Սրբուիի-Սրբույի*:

Հայերենի *h* խուլ շփականին որոշ դեպքերում համապատասխանում է *խ. հեռու-խարու*, *հեռացնել-խարվեցընիլ*:

Լ բաղաձայն

173. Հայերենի լ-ին բարբառում բոլոր դեպքերում համապատասխանում է *լ*:

Ս բաղաձայն

174. Հայերենի մ ձայնորդին Բեյլանի բարբառում համապատասխանում է մ թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում, և թե՛ բառավերջում:

Ց կիսաձայն

175. Ց-ն ա ձայնավորի հետ միասին կազմում է յա հնչյունախումբը, որը Բեյլանի բարբառում կա մեծ մասամբ փոխառյալ բառերում. *յարօվերը*, *յախօ-օձիր*, *յազմօ-զլիսաշոր* և այլն:

176. Բառամիջում և բառավերջում ևս յ կիսաձայնը առկա է փոխառյալ բառերում, դարձյալ ա ձայնավորի հետ կազմելով յա, յէ հնչյունախումբը. *հայդ-նվեր*, *զանյաթ-արհեստ*:

177. Բառասկզբում յա հնչյունախումբի *J*-ն հայերեն բառերում կրել է հետևյալ փոփոխությունները.

ա) *J*-ն փոխվել է *ի-ի*. *յստակ-յսդօգ* բառում:

բ) *J*-ին համապատասխանում է *h*. *յիշատակ-հիշադոգ* բառում:

Հորանջը ծածկող կիսաձայն *J*-ն հաճախ փոխարինվում է շրթնատամնային վ-ով, օրինակ՝ *իսկլէլիին դենիզը* (նավահանգստի ծովը) *իսկլէլիին* բառի փոխարեն, *պաշիւլիին* (թրք. basga-ին)՝ պիտի լիներ

պաշխային: Նույն ձևով՝ սինիկօվ (սինիով), հիկլիկօվ (հողիով) հիկլիյօվ—ի փոխարեն:

178. Մնացած բոլոր դեպքերում յ կիսաձայնը հանդես է զայիս երկրարբառների կազմում, որի մասին խոսել ենք «Գրաբարյան երկրարբառների փոփոխությունները» բաժնում:

Ն բաղաձայն

179. Հայերենի ն ձայնորդին համապատասխանում է ն բոլոր դեպքերում:

180. Այն բառերում, որտեղ գրաբարում բառավերջում կա ն, բարբառում այդ ն-ն դուրս է ընկել. *ակն-օզ, ամառն-ամօռ, ափն-օփ, ասեղն-ասսիդ, զազարն-կարօթ, ոսպն-ուսր, ոտն-ուդր, մատն-մօդ, հարսն-հօրս, ձուկն-ծուզ, եօքն-յօք*:

Ն-ն դառնում է լ հետևյալ բառերում՝ *անլի-ալլի, բանալի-պալինը, կլանել-զրլիլ* բառերում:

Ն-ի հավելում կա մեծ-մինձ, *քիթ-քինթ* բառերում:

Ո բաղաձայն

181. Բեյլանի բարբառում բառասկզբում ո կա հին փոխառյալ *ռահեօն, ռահօն, ռոհօն-ռեհան* բառում:

Մնացած բոլոր դեպքերում բառասկզբում ո կա նոր փոխառյալ բառերում. օրինակ՝ *ռոստ ըկկիլ-հանդիպել, ռայզիլ-խայտառակ*:

182. Բառամիջում և բառավերջում գրաբարյան ո-ին բարբառում համապատասխանում է ո. *թռչել-թռոնիլ, դառնալ-տառնօլ, յառաջ-առէց, յառաջեալ-առչիվ, ամառն-ամօռ, ծառ-ձօռ*:

Ռ բաղաձայն

183. Բեյլանի բարբառում *ր-ով* սկսվող բառ չկա:

Բառամիջում և բառավերջում բոլոր դեպքերում *ր* ձայնորդին համապատասխանում է *ր*:

185. Ռ ձայնորդը դուրս է ընկել երբ-իի, ջրաղաց-ձաղօց, քարշել-քաշիլ, իրբ-իր, իրամել-համմէ բառերում:

ՓՈԽԱԶԴԵՑԱԿԱՆ ԵՎ ԴԻՐՔԱՅԻՆ ՀՆՁՅՈՒՍՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Փոխազդեցական հնյունափոխությունը առավել բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին և բարբառներին: Այս մասնակի հնյունափոխություն է՝ պայմանավորված միևնույն բառի մեջ հնյունների փոխազդեցությամբ: Սովորաբար այս բաժնում բննարկվում է 6 երևոյթ առնմանումը, տարնմանումը, դրափոխությունը, արագաբանությունը, հնյունների հավելումն ու կորուսը:

ՀԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդյոք գոյություն ունի՝ ձայնավորների ներդաշնակություն Բեյլանի բարբառում:

Ձայնավորների ներդաշնակությունը Բեյլանի բարբառում նկատվում է հատկապես ներկայի զա եղանակիչի գործածության ժամանակ: Թվում է, թե այն գոյություն ունի, սակայն ոչ հետևողական: Ծանր ու թեթև ձայնավորների հետ կատարվում է համաձայնություն: Դժվար է ասել, թե ձայնավորների ներդաշնակության հակումը թուրքերենի ազդեցության հետևանք է, թե՝ ոչ: Ըստ Հ. Աճառյանի՝ Կիլիկիո բարբառում առկա է՝ ձայնավորների նմանեցման ձգուում, ինչպես Զեյթունի բարբառի *գ'օնօց-զնաց, քոսոն-քսան, զօնզօն-կնեկան* ձերի նման, նշենք, որ նույն երևոյթը նկատվում է նաև Բեյլանի բարբառում (տե՛ս և էջ 19):

Գը մընօն, զա քալէ, զի դիսնօ, զա հարցընէ, զա զանցընի, զի սիրվի, զա խառնէ, զա ձալլէ, զա քէհիմ, զա զ'էնիմ, զի կիդնօ, զի պիրին, զահենօն, զիլիմ:

Դժվար է եզրակացնել, թե եղէ՞լ է նախապես ձայնավորների ներդաշնակություն և այժմ քայրայվել է անհետևողականության պատճառով, թե՝ նոր է սկսվում այդ երևոյթը և իր ավարտին չի հասել:

Ը որոշիչ հոդը կարող է ենթարկվել ներդաշնակության օրենքին՝ արմատական:

1. ու ձայնավորին, այսպես՝ *թթու-թութու, ձկալ-ջուվօլ, խմոր-իմումոր, իմումիր, ուղղորդ-ուղղորդ*:

Ասվօծ աբուրու ում դրվիր է, իշտոհը՝ ում:

Ունրու շինիմ ըստինիրէն աշքը շին հանէ:

Օմք օրու խէվին առավող է:

2. Ի ձայնավորին, այսպես՝ ներսը-նիրսի, վերևը-իվիրի, զիշերը-կիշիրի:

ԲԱՂԱՋԱՅՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Բաղաձայների կրկնության երևույթը գրական հայերենում տարածված չէ: Կան ընդամենը երկտասնյակից քիչ ավելի բառեր, որոնց մեջ բաղաձայների կրկնությունը զանազան հնչունական երևույթների արդյունք է:

Լկել, զննել (զնին-ից), քննել (քնին-ից), թթվել, 22նջալ, թ22ալ, խ22ալ, ֆ22ալ, դոռալ, դոռալ, գոռալ և այլն բնաձայնական ծագում ունեցող բայեր են, որոնց մեջ բաղաձայների կրկնությունը իմաստի սաստկացման նպատակ ունի:

* Սակայն Բեյլանի բարբառում բառամիջյան բաղաձայների կրկնությունը այլ կարգի երևույթ է: Բարբառում միջայնավորային դիրքում որոշ պայթական և կիսաշփական հնչուններ կարող են կրկնվել: Այս երևույթը գործում է հատկապես երկվանկ բառերում միջայնավորային դիրքում: Այս երևույթը տարածված է նաև Բեյլանին հարևան կամ մոտիկ մի շարք այլ բարբառներում ևս, ինչպես՝ Քեսարի, Տիգրանակերտի, Սասունի և կիլիկյան այլ բարբառներում: Հաճախ բարբառում հանդիպում ենք կրկնակ բաղաձայների, որոնք ոչ թե իմաստի սաստկացման արդյունք են, այլ առնմանության կամ հնչունների կրկնության հետևանք են, արժենալ-էժժիլ ու ձայնորդի կորստյան պատճառով նրա տեղում ժ-ն կրկնվել են:

Այսօր-էստոր, արժել-էժժիլ, զատ-իզզոդ, զալ-ըկկիլ, հալվել-հալլօվ, երևալ-իրվըննօլ, լինել-ըննօլ, փիսիկ-փրսախզ, իսան (թուրք.)-իսսօն, ասել-ըսսիլ, լեզու-լուզզոն, ասեղ-ասսիդ, հյուսված-հիսսիմօն, հյուսել-հիսսիլ, ուզել-ուզզիլ, կտտել (վառվել)-զըդիլ, հիմա-հըմմօ, արդի, հիմիկվա-հըմմրդու և այլն: Սա բացատրվում է հարևան արաբերենի ազդեցությամբ: Հատկապես կրկնվում են շփականները՝ սս, 22, զզ և ձայնորդներից՝ նն: Այս կարծիքին են նաև Ա. Հանեյանը, Անդրեասյանը ու որիշներ:

ԴՄԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Այս երևույթը բառի մեջ որևէ հնչունի կամ հնչունախմբի դիրքային փոփոխությունն է՝ մյուս հնչունի կամ հնչունախմբի ազդեցությամբ:

անհամ-ահնօմ (նհ-հն)

անհամանալ-ահնըմնիլ (նհ-հն)

ակոայ-առօց (կո-ոց)

ականջ-էնգէձ (կն-նգ)

ականջ դնել-էնգըձիլ (կն-նգ)

կօզուե-գ՛ուրդ (զտ-դր)

բանալիք-պալինք (նլ-լն)

լուանալ-վըլանիլ (լու-վըլ)

լվացք-վըլօցք (լվ-վլ)

վերայ + զլուխ - իրվէկըլօխ (վր-րլ)

լուալ-վըլիլ (լու-վըլ)

վերադ-իրվէդ (վր-րվ)

տարզալ, գդալ - տըկօլ (գդ-տկ)

գդալի աման - տըզլամօն (գդ- տկ)

տոպրակ-դըրրօզ (պր-րբ)

փշրանք-փըրրօնք (շր-րշ)

երշիկ-իրիշկիտ (շի-իշ)

մկրատ-մըրզօդ (կր-րզ)

Գրիգոր-Քիրքօր (րի-իր)

բարավան-քէվրօն (րվ-վր)

իշմ - մինչ(ն) երեկո - իշմիրզուն (մի-իմ)

ՀԱՎԵԼՈՒՄ

Հնչունի հավելման երևույթը բառի մեջ նոր հնչունի ավելացումն է: Բեյլանի բարբառում կատարված հնչունական հավելումները հետևյալ տեսքն ունեն՝

Ը – ձգել-ըծկիլ, ոաստ-ըռօստ, լաց-ըլիլ, զալ-ըկկիլ, զալիք-ըկկըլիք, ոահօս (թրք. rahat) – ըռահօթ (հանգիստ)

ՈՒ – զլորել-կուլտուրիլ, ոուփ-ոուուփ, թռո-թռոոր, թռոտել-թռուքրդիլ, ճվճակալ-ջուլջուկիլ

Ժ – ընտրել-հընդըրիլ, օրորոց-հիռլուցը

Ն – մեծ-մինձ, կարկաչել-զարգընջիլ, հայել-հէնիլ, քիթ-քինք, հինա-հիննօ, երևալ-ըրվըննօլ, մեկ այլ- մինգէլ/միգէլ, հոտոտել-հինթիթիլ, ամաչել-ամչընօլ, ճանաչել-ջանչընօլ, բարձր-պօնցըրը

Բ – դմակ-տըմրօզ, համարել-համբըրիլ

Թ – աճոել-էջրրիլ, ճայթել-ջկրրիլ

Դ – մանրել-մօնդրրիլ, սանր-սօնդրը, հավաքել-հավրրիլ, երկայն-իրգէնդ, ծանր-ձօնդրը, մանր-մօնդրը, թռնիր-թանդրը, հոտել-հիդդիլ, փտել-փրդդիլ

Ի – զատ-իզօդ, ժամ-իժօմ, վրան-իրվէն/իվրէն, վրա-զլուխ – իրվէ-կըլօխ, վայելել (սազել) – իվլիլ, զատել-իզօդիլ, իրել-իիրիլ ժամկոչ-իժամկոչց, վայրիվերո-իվիրիվէր, լազան-իլէհէն (թր. lehen), շնորհավոր-իշնէվուր

Ռ – խախուտ-խարխուտ, ֆէս-ֆէրս, թռնել-թըրրիլ

Ս – ասեղ-ասսիդ, հյուսել-հիսսիլ, հյուսված-հիսսիմօն, ասել-բսսիլ, ուսուցանել-ուսսրցընիլ, քսել-քրսսիլ

Զ – մազեր-մազզիր, լեզու-լնազգոն, ուզել-ուզզիլ, ազոխ-ազզոնի, վազել-վազզիլ

Ք – լեցնել-լրնքցընիլ

Տ – կթել-զըտրիլ

Ը – քայլել-քէլլիլ, փլել-փըլլիլ

Ո – եռալ-քըռոիլ

Չ – հաչել-հէչչիլ

Մ – ձգմել-ջրմմիլ

Կ – հողի-հիկիլ, այզի-էկկիլ

Ց – ցույց տալ - ցրցընիլ

ԱՆԿՈՒՄ (ԿՈՐՈՒՄԸ)

Անկումը հնչյունափոխական այն երևույթն է, երբ բառի մեջ ընկնում (սղվում) է որևէ հնչյուն՝

ՈՒ – ուղարկել-ղըրզիլ

Ր – արձակել-ածզիլ, երբ-էփ, երբվանից-էփուց, իրբ-իբ, ջրաղաց-ձաղօցը, պարպել-բարցընիլ, քարշել-քնաշիլ

Տ – աստղ-օսդ, աստուած-ասվօձ

Գ – հավանգ-հավօն

Ա – ծիծաղել-ծիծողիլ, հարսանիր-հարսնիր

Ն – կանգնել-զանզիլ

Ի – կնանիրդէր-զընզըրդէր

Հ – աշխարհ-աշխօր

Ո – անոթի-անթի, անոթենալ-անթընիլ

Յ – յիշել-յիշիլ, յիշատակ-յիշադօգ, յառաջ-առէչ

ԱՌՆՍԱՆՈՒՄ

Առնմանությունը հնչյունական այն երևույթն է, երբ բառակազմում եղած որևէ հնչյունի ազդեցությամբ բառակազմի մեկ այլ հնչյուն փոխում է իր որակը և նույնանում ազդող հնչյունին:

անբախտ-ամպօխտ (ն-մ)

անալի-ալլը (ն-լ)

կլինի-զըննօ (լ-ն)

մի բան-փօմ մը (մ-ն)

ՃՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ, ՎԱՆԿԱՍԴՈՒՄ

Ճնչյունների ամփոփում է դիտվում այն երևույթը, երբ բազմավանկ բառերում վանկերից մեկը սղվում է և հարմարեցվում արտասանությանը: Այս երևույթը Հ. Աճարյանը կոչում է արագաբանություն:

անանուխ-աննուխ

արածել-արձիլ

ավաշել-ավշիլ

բնակալ-պընզօլ

երիկամ-իրզօմ

կլանել-զըլլիլ

կնրահայր-ընքարօր

կնքամայր-ընքամնըր

մեկ այլ օր-միզէլնօր

աշակերտ-շազիրդ (թերևս փոխառյալ ձև է)

Բարբառում այս երևույթը հանդիպում է նաև հատուկ անունների մեջ, այսպէս՝ Աստուր անձնանունը Աստուր-ի սղված տարբերակն է, իսկ վերջինս կ սկիզբ է առնում Աստուածատուր ձևից:

ԳԼՈՒԽ II

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱԲԱՐԴՈՒՄ

Նոր բառեր կերտելու միջոցներն են բառաբարդացումն ու ածանցումը: Յուրաքանչյուր բարբառ ունի իր նախասիրած ածանցները կամ համադրական ու հարադրական բարդություններ կազմելու իր միջոցները: Բեյլանի բարբառը համադրական բարդության անհոդակապ միջոցն է գերադասում և թիշ դեպքերում է դիմում ա հոդակապին: Իսկ հարադրական ձևերից գերադասում է կրկնավոր բարդությունները, որոնք ցույց կտրվեն ստորև:

ա) Անհոդակապ բարդ բառեր

պօն-կուրծ – բանուզործ

գէսաղօր – կիսակատար

գէսաղօ – թէրակղզի (թրք. ada – կղզի)

հավզիր – հավկիր

հոմիս – համտէս

հուրրիր – հորարույր

հօրսընքիր – հարսնարույր

մուրրիր – մորարույր

բարմնը – սկեսուր

բարնօր – սկեսրայր

թէրմնը – մոր մայրը

թէրրօր – մոր հայրը

մինձօր – հոր հայրը

դայընօր – (թրք. աներձազի հայրը)

դայնանա – (թրք. աներձազի մայր)

դօձանա – (թրք. մեծ մայր)

սիվիրիս – սևերէս

արխանօ – աղբ + թրք. հանե – տուն – աղբատուն, զուզարան

էշնահաղօգ – էշնահատակ (անխմաստ մահ)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պարոն բառից կրճատված պար մասնիկով են կազմված բարմնը-պարոնի մայր, սկեսուր կամ պարօն մայր. (հմ. Թբիլիսիի բարբառի, աղջիկ պարօնը՝ պարոնուհու փոխարեն):

Որպես կանոն՝ իսկական բարդության երկու բաղադրիչների միջև մտնում է ա հոդակապը՝

բ) ա հոդակապով բարդություններ

սանագօր – սանահայր

ընքարօր – կնքահայր

ընքամնը – կնքամայր

վարժարիդ – վարժապէտ

զ) ցուցական, չափ ու բանակի դերանուններով կազմված բարդություններ.

էսղրդը – այսչափ (թրք. kadar – չափ)

էտղրդը – այդչափ

էնղրդը – այնչափ

դ) նախդիրներով և դերանուններով կազմված բարդություններ.

հինքէս – այսպէս – ի անդ + էս

հինդէթ – այդպէս – ի անդ + էդ

հիննէն – այնպէս – ի այն + էն

ե) Կրկնավորներ, որոնց երկրորդ բաղադրիչը հնչունափոխված է՝ ափըն-ցրփըն

միս-մինավիր

մօրթ-մարթասօնք

պօղ-պահչաղէք

հըմլօղիլմօ-հիմակուիհմա

սուդ-մուդ

զօր-զարգրդօն

ճըս-ճըպլօխ

զ) Երկու հոմանիշների միացությամբ կազմված բարդություններ.

տուու-տորզից – դուու ու դրկից

տէղ-տարմօն – դէղ ու դարման

խաղը-խայդազօգ – խաղը ու խայտառակ

դէր-դիրազօն, էրին – արցունք

է) Կրկնավորներ, որոնց երկրորդ բաղադրիչում ավելանում են ձ, չ, փ հնչունները՝ էրօվ-չէրօվ, աղօվ-չաղօվ, ըսսօց-չըսսօց, սուդ-փուդ, էճուկ-ձուճուկ այլն:

ը) բառին սաստկացնող իմաստ հաղորդող վանկի կամ ձայնավորի կրկնությամբ՝ իփ-իրգէնդ, նուփ-նուր, պաս-պարօզ, ուփ-ուդուրք, ափ-աշկարո, գլփ-գլնէնչ, տէս-տէղին, ջիփ-ջիրմօզ, սիփ-սիկ, գնս-գնրմիր:

թ) հականիշների միացությամբ՝
իվիլ-բազու, մինձ-բրդիկ, իվեր-իվիր, իրգէն-գնրոց, նիրս-տուրս,
իդիվ-առջիվ:

ժ) բնածայնական կրկնություններ՝
զընկըռզընկըռ — սազի ձայն
թըսթըս — դանդաղ
թըրթըր — ժամացույցի ձայն
թըփրոթրփրո — ոտքի ձայն
լախըռ-լուխուր — երերալ
լափ-լուփ — արագ ուտել
խըշըր-խըշըր — տերեկի ձայնը
զըռզըռ — կոկոալ, կոռալ
չախուր-չուխուր — դազզակի ձայնը
չարըր-չուրուր — կոտրվելու ձայն, կրակոցի ձայն
ջամբուլ-ջումբուլ — ջրի ձայնը
դանդըր-դունդուր — ինչ-որ առարկայի ընկնելու ձայնը
դըռդըռ — շատախոս
փաթ-փութ, փարըր-փութուր — կրակոցի, զլորվելու ձայն
քըթըր-քըթըր — չոր հացի ձայն ուտելիս

քըսքըս — դանդաղ
մըզմըզ — դանդաղ, բծախնդիր
մըշըր-մըշըր — բնելու ձայն
չըրչըր — կոտրելու ձայն
վըզվըզ — արագ-արագ, հաճախակի
վըզըր-վըզըր — իրար հետևից
դանգ-դունգ — կոչնակի ձայնը
ֆուֆըշ — օձի ֆուֆըշը
ֆըրըլ-ֆըրըլ — դառնալ, պտտվել
թըխ-թըխ — զարնել
զըզ-զըզ — կծել, ատամ
համ-համ — ուտել
հօփ-հօփ — գնալ, շալակել
հաֆ-հաֆ — հաշել
ձըս-ձըս — կրակ, լույս

շըզ-շըզ — այրել
ձօր-ձօր — մանկանը խաղացնել
մէն-մէն — կանգնել
համմա — ուտելիք
չըր-չըր — ժամացույց
չըր-չըր — կոտրել
բըխ-բըխ — մորթել
բուլ-բուլ — հրացան
դըն-դըն — նվազ

ԱԾԱՆՑՈՒՄ

Հայտնի է, որ հայերենում զգացվում է նախածանցների պակասություն, ուստի և Բեյլանի բարբարի նախածանցների սղությունն է հիմնականում պայմանավորված է դրանով և ոչ՝ նախասիրությամբ:

Իբրև նախածանց գրաբարում լայնորեն գործառնում են նախդիրները, որոնք «նույնախիք դեր կատարել են նաև գրաբար փուլից առաջ ապացույցն այն է, որ գրաբարում պահպանվել են մթագնված նախդիր-նախածանցավոր կազմություններ, ինչպես՝ *առ-ա-ստաղ, առ-ա-սպել* (ստաղ և սպել միավորները գրաբարի համակարգում այլևս ձևույթի արժեք չունեն և մեռած են). այս բառերը, ինչպես տեսնում ենք, կազմված են առ նախդիր-նախածանցով»¹³: Այս բառը արբաստօխ ձևով պահպանվել է Բեյլանի բարբառում:

Ծանոթանանք նախդիր-նախածանցավորների գործառնությանը Բեյլանի բարբառում:

Առ -աջ – «աջակողմ, սկիզբ», Բեյլանի բարբառում՝ առաջ:

Զ-ատ – «անջատ, առանձին», Բեյլանի բարբառում՝ իգող:

Զ-արդ-ար-եմ – «այձնել, ձոխացնել», Բեյլանի բարբառում՝ ջարթըրիլ:

Չ – ժխտական ածանցը՝ «չիք, ոչ իք, պակասություն», Բեյլանի բարբառում՝ չըքօ-չկա:

Բեյլանի բարբարը բավական հարուստ է գործուն վերջածանցներով.

ատ/օդ – հաւատ կամ յաւ-ատ, բարբառում՝ հավօդ

ակ/oզ – օրին-ակ- «նախատիպ, տիպ ըստ կարգի», բարբառում՝ ուրնօզ, ջաշօզ (ճաշակ), զուշնօզ (կոչնակ):

¹³ Մ. Հ. Սուրայյան, «Բառազիտություն», «Հայոց լեզվի պատմական քերականություն», հատոր 2, Երևան, 1975, էջ 58:

ւ/վ – գործուն ածանց չէ, պահպանվել է հատուկենտ բառերում՝ թե-թե-
և, Բեյլանի բարբառում՝ թիթիվ:

աւ/օվ – հանդիպում է մի քանի բառերում՝ իր-աւ «արդար», Բեյլանի
բարբառում՝ իրօվ:

անի – խըլանի (խելացի)

է – էրձօթէ (արձաթյա), իրզօթէ (երկաթյա), փանդէ (փայտե)

էրէն – հէյէրէն

ընի – թըլընի, թըթընի

թին, թթին – պօշըթին (դատարկություն), ըրբնդըթին (լավություն),
դոնշըթին (հարևանություն), բազոսթին (պակասություն), գըդրջըթին
(քաջություն), անպօխութին (դժբախություն), թացըթին (թացություն),
սուղըթին (թանկություն), աղվըթին (գեղեցկություն), կուղըթին
(զողություն), պօլըթին (առատություն)

ին – փօխտին (ժամանակին), լիսսին (առավոտյան)

ինք – պալինք (բանալի), դրափոխություն՝ բանալիք

իք – հարսնիք

իկ – հացիկ (մնկ.), սրուսրոիկ (սարտու), բըղրդիկ (փորքիկ), փօշիկ
(պոչիկ), մօնդըրդիկ (մանրիկ),

ից – շարից (շարոց), շնիկից (շինելիք)

ընիցք – ձաղգընիցք (ձաղկանոց)

լո – ուղըլօ (ուտելու), հարվըլօ (հազնվելու)

կէկ – մինձկէկ (մեծավուն), անուշկէկ (քաղցրավուն), խմչիրկէկ
(խոշորավուն)

կօն/զօն – ուզունզօն (ուզող), ձրձօն (ծծկան), մինձազօն (մեծական)
օն – հէծօն

օղ – ըսսօղ (ասող), լըսսօղ (լսող), խուսսօղ (խոսող)

ուօցք – խօսուօցք (խոսվածք), քէլուօցք (քայլվածք)

ուր – փսխուր (փսխվածք)

դուր – հաֆքըրուր (հավաքույթ), զըռվըրուր (կոհիվներ), ջըխքըրուր
(ճեղքածքներ), խըսդըրուր (պատովածք)

օնց – թըթօնց (ոնզախու), իրիսօնց (երեսանց)

օնք – համրօնք (համրվածք),

ուկ/ուգ – հարսնուկ (հորեղբոր կին), նանուկ (հորեղբոր կին),
մօնդըրուկ (մանրուր), իվիլցուգ (ավելցուկ), զաղտուգ (զաղտնի)

մօն – հընդըրմօն (ընտրված), ջըխըրմօն (ճեղքած), նըսդըրմօն
(նստած), հասնըրմօն (հասած), իիսսիմօն (իյուսված), ձաղգըրմօն (ձաղկած),

պուսնումօն (բուսած), մանմօն (մանած), բարմօն (նետած), թըրմըշտրմօն
(թառամած),

ուան/օան – առէշուան (առաջվան), հիրուան (հերվան), կանուխուան
(շուտվա), իրէգուան (երեկվա), իրզուան (երեկոյան)

ուօցք – խօսուօցք (խոսվածք), քէլուօցք (քայլվածք), լէդուօցք
(լեղապարկ)

ավուր/վիր – ա-ն սույն ածանցի մեջ դիտված է իբրև հոդակապ,
հանդիպում է միայն բարբառային կամ միջին հայերենյան բառերի
մեջ՝ ծիկիր (ձիավոր), մէդէկիր (մեղավոր), ըխտավուր (ուխտավոր), ուր,
որոշ դիրքերում, օրինաշափորեն այն կարող է սղվել՝ առաջ բերելով աւոր
ածանցի տր/վօր կամ վուր փոփոխակը՝ ձուցիր (ծոցվոր, հղի)

ուդ – խըլլիդ (խլնքու), մէզզ ուդ (մազու), լէգիդ (լակու)

ցի – լըրընցի (լեռնական)

Բեյլանի բարբառը նախընտրում է բառերը գործածել – իգ
փոքրացուցիչ, փաղաքշական մասնիկով, օրինակ՝ լիքք բառը ավելի շատ
գործածական է լընքիգ, խուփ բառը՝ խըփիգ, հօցք՝ հօցիգ, մէրկ-մըրզիգ:

Փոխառյալ ածանցներ

Որքան կ բարբառը ձգտել է խուսափել թուրքերեն լեզվի բառերին
դիմելու և առավել ևս բառաստեղծ ածանցներին, բնականաբար չի
հաջողվել, և թուրքերենի համաբանությամբ հայերեն բառերին ու
արմատներին կցում է թուրքերեն ածանցներ կամ հակառակը: Բերենք
դրանցից ամենատարածվածները, որոնք հիմնականում վերջածանցներ
են.

լի (փոխ. թրք. li) – հավէճլի (պղպէղու), յաղլի (յուղու – yağlı)

լիք (փոխ. թրք. lik) – ձէհէննէմլիք (դժոխը), ուղըլիք (ուտելիք), պըշզըլիք
(զզվելիք), վախնըլիք (զարհութելիք), պըռնըլիք (բռնակ), կուվըլիք (գովելիք),
ըկկըլիք (զալիք), համրըլիք (հաշվելիք)

լըխ (փոխ. թրք.) – քարլըխ (քարաստան), սարրլըխ (դեղնություն),
ձառլըխ (ձառաստան)

միշ (փոխ. թրք. mis) փոխառյալ ածանցով կազմված բառեր

սէվինմիշ գֆանք – ուրախանում է

տուշնիմուշ գֆանք – մտածում է

պէրլէմիշ գֆանք – սպասում է

ա) Հայերեն արմատ + թրբ. ՏԻՑ՝ ան ժխտական ածանցով՝ չափսրգ – անչափ, հիյթուղղանհող, մուրութուղղանհորուր, հօմսրգ – անհամ, դունսրգ–անտուն, դանդուղգ–անհարկի:

Շատ հաճախ ան ածանցի փոխարեն գործածվում է ՀՐ/ՀԻ, չու ժխտական ածանցը՝

ՀԻ ՓԻԽՎՈՂ – անփոփոխ, ՀՐՄԱՐԳՈՂ–անդարձ, ՀՐՎԱԽՈՂ–անվախ, ՀՐԹՐՆԴՈՂ – անշարժ, ՀՌԼԽՈՍՍՈՂ–անխոս, ՀԽՎԼՈՂ–անվայել, ՀՐԽՎԱՍՈՂ–անսպառ, ՀՐՍՎՐԼԻՐ–անասելի

բ) Հայերեն արմատ + լի (թրբ. ԼԻԿ) – ուստ՝ մի բանի շատ տեղ՝ ձառլի–ձառանց, կրրզմանլիս–զերեզմանց, մումլուի–մոմակալ քարլիս–քարանց, քարաստան:

գ) Հայերեն արմատ + լի (թրբ. ՅԱՂԼԻ)

յաղլի/յաղլը – յուղու, հավէճլի–պղպեղու, կծու:

դ) թուրքերեն բառ + հայերեն ածանց՝ ՔՅՈՒԹՐԹԻՆ – թրբ. ԿՈՒ–ՎԱՍՈՒ + ԲԹԻՆ–ՎԱՍՈՒԹՅՈՒՆ

ՊՈՆՉՐԹԻՆ – հարևանություն

ՊՈՉՐԹԻՆ – դատարկություն

ե) Գրական հայերենի բարդ կամ ածանցավոր բառերը բարբառում մեծ մասամբ արտահայտվում են հարադրությամբ, որի բաղադրիչներից մեկը թուրքերենից փոխառություն է՝

ԵՂԲՈՐԴԻ – ախազօր ԷՎԼՈՂ (թրբ.)

ԵՂՉԵՐԱՎՈՐ – պույնուզ (թրբ.) ընանօղ

ԵՂՋՈՒՐԱՀԱՐԵԼ – պույնուզօվ զրրվրդիլ

ՀՐԱՄԱՀԱՎԱՐ – գֆնլդուր հավքիլ

ԵԽԱԳՈՒՆ – իրէք իրէնզ ընանօղ

ԵՂՆԵՂ – իլլիլ–իշնիլ

ՀՐԱՄԱՎԱՉՄ – գֆնլդուր իրէնզ ընանօղ

ՀՐՈՉԱԿԱԼԻՐ – բայրուի դանօս

ԱՆԲԱԳՈՒՆ – մշտական գլուխուզ

ՄՇՏԱԴԱԼԱՐ – դէկամետր

ԱՆՊՈՒՐԱՆԱԼԻ – ինքոր չըննօղ

ԱՆՊՈՒՐԱՆԱԼՈՒ – անքոր հիդրուր

ԱՆՎԱՐՈՒՄ – անվար դորդոր

ԱՆՎԱՐՈՒՄ – անվար դորդոր

ԱՐԺԻՎԱՆԱԼ – տուլ մընիլ, դէրսիզ ըննիլ

անտառապահ – օրմանի բէկչի
Աստվածատուր – Ասդումմի դրվլրմօն
արագաթիո – չափըխ թրրող
արյունաթախ – էրինի թէթխլրմօն
զբաղմունք – կլէնմիշ ըննիլ
արեշատություն – իրգէնդ օմնուր
անցուղի – ասնըլու յօլ
դժգույն – բէնզը քարմօն
դեռարդորշ – նուր ձրլուող
զլխաշոր – կրխու աղլէխ
զորավիզ – զրրնօզ զանզիլ

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

ընծի մաշօ կրիր – ինձ հյուծախս դարձրիր
տէղինի քիշող – դեղնավուն զույնի
մէշը սրրսրոիզ մըդնօլ – մէշը սարսուռ մտնել
պարօզ ցօվ – բոքախս
իսզի կիսի – ոսկու պես
իրվէկրօխ – հագուստ–կապուստ
Պաղտոսը թէլ քիշտիցի – Բաղդադ հեռազիր տվիլ
դափու տէնի – զաղափարակից (թրբ. gafadenki)
իսոզ իրիս – մաքուր երես
ինքիր կրխուն – ինքնուրույն, միայնակ
վայ ըննօ իրվէդ – վայն ընկնի վրադ (անեծք)
լուս ու լրսէղէն – շատ գեղեցիկ
խաղը ու խայդառօզ ըննիլ – խայտառակվել
մըղդրաը ծօզ – ծիծեռնակ – Երուսաղեմ ուխտի զնացած, մահտեսի
դարձաը իրվէդ – տարոսը քէզ (մաղթանք)
կօլ դարի – եկող տարի
կօմ պըռնիլ – երգեցողության ժամանակ դամ (ձայն) պահել
կէմ կէհիլ – կամնել
Ճաղօցին քօր – ջրաղացի քար
կըժօստ ավիլ – 1. կարձացած ավել, 2. կարձահասակ
պօն–կինդ – բան ու գործ
հիկկի դօլ – հոգի տալ
հըկկու հօց – հոգեհաց

հուր կիրծիլ – ոստայնանկություն անել
հաճը լէլէգ – արագիլ
ձագօդակիր – ձակատագիր
մայիս տընիլ – կտավը ձերմակացնելու համար թրիքի լուծույթի մեջ
դնել

բացիրսօն հօց – բաղարջ
թէքը փէկին – տրամադրությունը տեղը
գէնէնչ – գանգիր կուդի-ծիածան
բրզիզ-բրզիզ էնիլ – պատառուել
փորք դրվիլ – փառաբանել
իրը էնիլ – տիրություն անել
զրոնօգ զանզիլ – զորավիզ լինել
խոզի քաշչիլ – արտագրել
արցունք թափիլ – արտավել

Կապակցությունը կազմվում է կիսով չափ թուրքերենից փոխառյալ
բառով.

դուդօխը զօխ – շրթունքը կախ, նեղացած
դուդօխը գանխիլ – դժգոհել, նեղանալ
խրսդո էնիլ – բաժանել
չօմչա գէլին – խուճկուլու
յօն-յօն թէլիլ – կողք-կողք քայլել
տամարլանմըշ ըննիլ – արմատանալ
քօքէն հանիլ – արմատախիլ անել
դովալամըշ էնիլ – վոնդել, արտարսել
իզին դոլ – թույլատրել
պույնուզ ընանօղ – եղջերավոր
թահմին էնիլ – ենթադրել
մօն դրվիլ – եզրափակել, ավարտել
ախապար տառնիլ – եղբայրանալ
գոնդիրին դապմըշ ըննօղ – դրամապաշտ

ինքոր էնիլ – դրժել
մօհնուրլէմիշ էնիլ – դրոշմել
թիթրէմիշ ըննիլ – դողդողողակ
ուէզիլ էնիլ – խայտառակել
իթօհօր էնիլ – անսալ

տինլէմիշ էնիլ – լսել, ունկնդրել
տուլ մընիլ – այրիանալ
միսաֆիր ըրթիլ – հյուրընկալվել
վազիֆէվէն ընզիլ – պաշտոնանկ լինել
շաշըրմըշ էնիլ – շփոթվել

նէֆրէթ էնիլ – ատել
թէկտիր էնիլ – սաստել
լէքլէմիշ էնիլ – արտավորել

սարիօշ ըննիլ – հարբել
հութուլէմիշ էնիլ – արդուկել

թիքսինմիշ ըննիլ – զզվել
սէվինմիշ ըննիլ – ուրախանալ

էյէնմիշ ըննիլ – զբաղվել
թէսէլի էնիլ – միսիթարել

յաշամըշ ըննիլ – ապրել
լայրդ ըննիլ – արժանանալ

շաշըրմըշ ըննիլ – այլայլվել
մասխարօ էնիլ – այպանել, ծաղրել

թէրբիյէնիլ – դաստիարակել
իֆտարօ քարիլ, մէխսկ տընիլ – ամրաստանել

ինանմըշ ըննիլ – հալատալ
դապու էնիլ – ընդունել

պօշանմըշ ըննիլ – ամուսնալուծվել
թօքէ էնիլ – ապաշխարել

իմրէնմիշ ըննիլ – սրանչանալ
կօնէնմիշ ըննիլ – վայելել

մէշխուզ ըննօղ – բազմագրադ
դայըպ ըննիլ – կորել

տութուշմուշ ըննիլ – բոնկվել
խույլանմըշ ըննիլ – զայրանալ, բարկանալ

չընկըրդէթ հանիլ – բոցկլտալ
տէրմօն էնիլ, ըրընդցընիլ – բուժել, լավացնել
իհթիրօզ էնիլ – բողոքել

կէլիմը հաֆքիլ – բէրքահավաք
մէյոն հանիլ – բացահայտել
պէռ պարցընիլ – բէռնավորել

արխաղօշ ըննիլ – բարեկամանալ

իվիր իլիլ – բարձրանալ
մափուսը զինիլ – բանտարկվել
մափուսը տընիլ – բանտել
տաղըթմըշ էնիլ – բաշխել, բաժանել
ափիս-սափիս խուսիլ – բարբաջել
զօրպլթմըշ էնիլ – բարդացնել
էմիյէթ էնիլ – ապավինել, վստահել
սմարլամըշ էնիլ – ապսպրել
դարշը տընիլ – ապստամբել
սիլէկմիշ էնիլ – ապտակել
յարդրմ էնիլ – աջակցել, օգնել
թէրլիք էնիլ – առաջարկել
պօլրին ըննիլ – առատանալ
մէրհամէթ էնիլ – կարեկցել
սուոլ էնիլ – հարցնել
շափրիք քիշտիլ – ծափ տալ
սըրալամըշ էնիլ – դասավորել
ժիվիլտէմիշ ըննիլ – դայլայլել, ճովողել
դուճախլանմըշ ըննիլ – գրկախառնվել
հուշնիմ էնիլ – գրոհել, հարձակվել
ճէպը տընիլ – գրապանել
գուրբնիմիշ ըննիլ – գոռոալ (ամպերը)
ֆիրլէմիշ էնիլ – գրզոել
պուղլանմըշ ըննիլ – գոլորշխանալ
դըմօթը կիդնիլ – գնահատել
շիշմանլանմըշ ըննիլ – գիրանալ
մուհամիր ըրրիլ – գաղթել
թիրսինմիշ ըննիլ – գանել, զգլել
սուրբնիք էնիլ – լոել
դումբէգ քիշտիլ – բամբակահարել
գուրբը քիք գապան շնեալ – բառապարան բանը – բանապարան
հիկոր նիր – որուի
ժնանին դնեալ – բանուի բնուրին մօնին
մօնութնիր – մնուի մոնութնիր
մօնութնիր – մնուի մոնութնիր
մօնութնիր – մնուի բոնութնիր
գալումանընդ – մնունդ դնութնիր
մնունդանընդ – մնունդ մօնութնիր
մնունդանընդ – մնունդ մօնութնիր
մնունդանընդ – մնունդ գոնութնիր

ԳԼՈՒԽ III ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գոյականը Բեյլանի բարբառում ներկայանում է երեք կարգերով՝ թվի, հոլովի և առկայացման:

ԹՎԻ ԿԱՐԳԸ

Ինչպես ամենուրեք, Բեյլանի բարբառում նույնպես, թվի թերականական կարգը եղակի և հոգնակի թվերի իմաստային-ձևաբանական հակադրությամբ է արտահայտվում։ Հոգնակին արտահայտվում է մի քանի ձևույթներով։ Երկակիության միջին հայերենի ձևույթը չի պահպանվել։

Բեյլանի բարբառը հայոց լեզվի մյուս բարբառների համեմատությամբ հարուստ չէ հոգնակերտ մասնիկներով։ Բարբառում գործածական հոգնակերտ մասնիկներն են՝

–դէք, –ինք, –էնք, –օնք և –իր/էր, –նիր/նէր, որոնք դրվում են թե՝ միավանկ, թե՝ բազմավանկ բառերի վրա։

Դէք – ախաղրդէք (եղբայրներ), դրդէք (տղաներ), պըլզդէք (երեխաներ), ախճինդէք (աղջիկներ), հեղդէք (հայեր), դօնշուդէք (հարևաններ), ագորդէք (ակռաներ), բօրդէք (հայրեր), ցէրրդէք (ձեռքեր), ամօնդէք (ամաններ), փօնդէք (բաներ), թիվդէք (թևեր), ձօրդէք (խոսակցություններ), զրույցներ), խրսրմդէք (բարեկամներ), փանողդէք (բանողներ), լարդէք (լեռներ), քարդէք (քարեր), պախչադէք (պարտեզներ), գրնզրդէք (կանայք), ըրրվրդէք (րույրեր), ծիրքինդէք (ձերոնք)։

Իր/էր – հոգնակերտ մասնիկը դրվում է միավանկ բառերի վրա։ Օրինակ՝ սօր-սօրիր (սարեր), քօր-քօրիր (քարեր), քիր-քիրիր-քիրէք (քույրեր), մինձ-մինձիր-մինձէք (մեծեր)։

Նիր/նէր – հոգնակերտ մասնիկը դրվում է բազմավանկ բառերի վրա։ Օրինակ՝ ամօն-ամըննիր-ամըննէր, հալօվ-հալվըննիր-հալվըննէր, իլօշ-իլօշնիր-իլօշնէր, ախճին-ախճիննիր-ախճիննէր։

Բարբառում հաճախ հոգնակերտ մասնիկները փոխարինվում են մեկը մյուսով կամ նույն անունը երկու տեսակ հոգնակի կարող է ունենալ։ Սակայն հոգնակերտ մասնիկների գործածության մեջ հաճախ ակնբախ է

սահմանագատությունը: Հաճախ դէք հոգնակերտ մասնիկ են ստանում արյունակցական և ազգակցական հարաբերություններ ցույց տվող հետևյալ բառերը դպրո-դպրոդէք (տեղբեր), ախարդէք (եղայրներ), մըրքիրդէք (մորաքույրներ), գընզրդէք (կանայք), դօլդէք (տալեր - ամուսնու քույրերը), քիր-քրովրդէք, ախաճին-ախաճինդէք:

Հավաքական իմաստ արտահայտելու համար կիրառվում են -ինք, -ինք, -օնք մասնիկները, օրինակ՝ վարժարիդինք (վարժապետենք), բարօնք (պապնք), մըրքիրդինք (մորաքույրենք), Բիորուսինք (Պետրոսենք):

-Ինք, -օնք մասնիկներով կազմված հոգնակի սեռական հոլովը որպես ազգանուն է ծառայում, եթե նրա հատկացյալն է հիշյալ ընտանիքին պատկանող մի անձ. օրինակ՝ Բիորուսինց Սէթրօզը, Թուրքիանց Մայրումը, Մարդունց սինց Ափրոհումը և այլն:

Դերբայները անունների նման կարող են գործածվել հոգնակի -դէք մասնիկով՝ խըմողդէք (խմողներ), ուզգողդէք (ուզողներ): Ծուրքերենից փոխառյալ բառերի, ածականների վրա կարող են դրվել՝ ք'օյլուդէք (զյուղացիներ), խըսրմդէք (բարեկամներ), աղվիրդէք (զեղեցիկներ):

-Դէք-ի առաջացումը կապված է իին -տի հոգնակերտի հետ, որը բարբառում հնչում է դի/դէ, ապա, մթազնելով այս ձևույթի հոգնակերտ իմաստը, ընդունել է նոր՝ ք ձևույթը, այսինքն՝ դի/դէ + ք -Դէք:

- Դօնք առաջացել է տի + ան + ք -ԴԻԱՆՔ, իսկ քանի որ բարբառում աձանավորները հնչյունափոխվում են օ-ի, ուստի՝ դիանք-դանք-դօնք:

Այս հոգնակերտ մասնիկը դրվում է ազգակցական կապ ցույց տվող բառերի վրա՝ գընզրդէք-գընզրդօնք (կանայք), քրովրդէք-քրովրդօնք (քույրեր), ախարդէք-ախարդօնք (եղայրներ), խընամըդէք-խընամըդօնք (խնամիներ) և այլն:

ՀՈՒԱՌՈՒԹՅՈՒՆ

Բեյլանի բարբառում գործածական են որոշյալ, անորոշ և դիմորոշ հոդերը:

Գրաբարում ս, դ, ն հոդերը ունեին ցուցական իմաստ: Անորոշությունը արտահայտվում է մը դերանվամբ: Բեյլանի բարբառում իմաստային տարրերակում է կատարվել և գործածվում են որպես ստացական ս, տ(դ), ն հոդերը կամ որոշչային արումով:

Այսպէս՝ մարուս (մորս), բօրիս (հորս), քիրուտ (քրոջ), տօրիս (դրանդ), հէղմընիտ (հետներդ), բօրիտ (հորդ), քիրուն (քրոջը), էմմուն

(քրք. էմմի – հորեղորը), հայփուն (քրք. հեր – բոլորին):

Եթե անունը ձայնավորով է վերջանում, գրական հայերենի նման բառին կցվում է ն որոշիչ հոդը, օրինակ՝ իսզի-իսզին (ուլին), ազրօ-ազոս (ակոան), ծի-ծին (ձին), դրդո-դրդօն (տղան), փիսօ-փիսօն (փեսան), հիկկի-հիկկին (հոգին):

Եթե անունը բաղաձայնով է վերջանում, բառին կցվում է ը որոշիչ հոդը՝ ծինը (ձայնը), լիսար (լույսը), ծինը (ձյունը), ձօռը (ծառը), տանօզը (դանակը), պամբօզը (բամբակը), էրինը (արյունը), իրիսը (երեսը), քիվը (քերը), աշըրը (աշըրը) և այլն:

Աշխարհաբարի մի անորոշ հոդը հնչյունափոխված մը, մի, մու ձևով կցվում է բառավերջին՝ ձօռին իրվէն զադու մու դիս (Ծառի վրա մի կատու տեսա): Սարքիսը խլանի մօրթ մըն է (Սարգիսը խելացի մի մարդ է):

Մը է գործածվում, եթե բառի վերջին ձայնավորն է ա կամ ը. օր՝ մարը մը, ձայրը մը և այլն:

Մի է գործածվում, եթե բառի վերջին ձայնավորը ի կամ ա է. օր՝ ախմին մի, փանդիր մի:

Մու է գործածվում, եթե բառի վերջին ձայնավորն է օ կամ ու. օր՝ տանօզ մու, պուլուզ մու, ըոզօզ մու: Այսինքն՝ տեղի է ունենում ձայնավորների ներդաշնակություն (տես նաև էջ 58):

Դիմորոշ հոդը անխտիր բոլոր տեսակի անունների հետ չի գործածվում: Այս գործածվում է

ա) անշունչ առարկաներ ցույց տվող անունների հետ՝ դունը (տունս), դունըտ (տունդ), դունը (տունը), տանօզը (դանակս), տանօզըտ (դանակդ), տանօզը (դանակը):

բ) վերացականություն արտահայտող անունների հետ՝ խիլքիս (խելքս), խիլքիտ (խելքդ), հիկկիս, հիկկիտ, պօխտըրս, պօխտըրտ:

գ) մարդկանց միջև եղած կապով, առնչությամբ, որոնք խոսողի բարեկամն են, ընկերը՝ արխադոշըրս, խըսրմդէքս, դօնշուդէքս:

Դիմորոշ հոդ չի գործածվում ընտանեկան և ազգականական անունների հետ. հոդի փոխարեն նման անունների սկզբում դրվում են ստացական դերանուններ, վերջում էլ որոշիչ հոդ են ստանում՝ իմիս բօրը, իմիս քիրը, քինիտ պուլուզդէքը, քինիտ ախմինը:

Թեպետն նման դեպքերում դիմորոշ հոդ գործածողներ են լինում, բայց դա հնչում է խորթ և դիտվում բռնազբուիկ կերպով գործածված՝ ախմինիտ, փոխանակ՝ քինիտ ախմինը:

Բայց և այնպես կան պարագաներ, եթե դիմորոշ հոդ գործածվում է

ընտանեկան ազգականական անունների հետ: Օրինակ՝ շատ սովորական է՝ դրդու իգիք (տղաս եկավ): Կամ՝ «Էղի ի՞վ Շ (այն ո՞վ է) հարցումին պատասխանել՝ քրօչու դրդոն Շ (տեզորս տղան է):

Դիմորոշ հոդի գործածության օրինակներ. Զաղիգրս չիրցով (ծաղիկս չորացավ): Իմիս բօրք վօղը շնիկը բրդ բրթո (Իմ հայրը վաղը քաղաք պիտի զնա): Քինիտ թուխտդէքը իգին (Քո թղթերը եկան):

Ինչպես նկատում ենք, հոդերից առաջ հանդես է զալիս ի՞ն, օրինակ՝ ծէնիտ (ձայնդ), մարիտ (մայրդ), մարիս (մայրս), մուրօզիս (մուրազս), մուրօզիտ (մուրազդ), մազզիրիտ (մազերդ), ախապարիտ, իրիսիտ և այլն:

Հաճախ հոդերը կարող են դրվել անուններից բացի այլսայլ բառերի վրա ևս, անզամ կապերի վրա, օրինակ՝

Ասվօծ հեղմընիտ ըննօ (Աստված հետներդ լինի):

Ինչ էնինք, դադէրմընիս հինթէս է աղէր (Ինչ անենք, բախտներս է այսպես եղել):

Մը-ն մակրայի վրա դրվելով սաստկացնում է նրա իմաստը՝

Լով մը ձեձրցի (Լավ ծեծեցի):

Քիչ մը շող աղօվ (մի քիչ շատ եղավ):

ՀՈՒՊՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բեյլանի բարբառը ունի հետևյալ վեց հոլովները՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական:

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է:

Եզակի սեռական-տրականը կազմվում է բառի ուղիղ ձևի վրա հոլովման վերջավորությունները ավելացնելու միջոցով և ի տարբերություն գրական հայերենի, ստանում է ն որոշյալ հոդը՝ քօր-քարի(ն), քիր-քիրու(ն), աղվիր-աղվիրին, դուն-դրննին, շուն-շըննին, ամիս-ամսրզօն, դաքրր-դաքրուչ, մուրքիր-մուրքօրը:

Տրական հոլովը բոլոր դեպքերում, թե՛ եզակի, և թե՛ հոգնակի թվում, ձևով նման է սեռականին:

Թե՛ անձնանիշ, և թե՛ իրանիշ անունների եզակի և հոգնակի հայցականը նման է ուղղականին՝ քիրը (քույրը), բօրք (քարը):

Եզակի բացառական հոլովը կազմվում է՝ -էն, -ն՛ վերջավորություններով՝ քարէն (քարից), աշքէն (աշքից), փիրնէն (փերանից), էկկիվէն (այզուց), ախապօն՛ (եղբորից), լուզզուվէն (լեզվից),

բարունն՛ (հորից), ցէրքէն (ձեռքից), մարթունն՛ (մարդուց), քընթէն (քթից): Իս զա նկօմ բէլլանէն (Ես զայիս եմ բէլլանից):

Կենդանի եակների անունները գործիական չունեն, փոխարենը գործածվում է գոյականի սեռական հոլովը՝ հետ կապով:

Իրանիշ գոյականների եզակի գործիականը կազմվում է օվ վերջավորությամբ քարօվ քիշտից պուլուզին (Քարով խփեց երեխային): Դրդոն տանօզօվ զա խաղօր (Տղան դանակով էր խաղում):

Բարբառը ներգոյական հոլով չունի: Իբրև ներգոյական օգտագործվում է սեռական-տրականը մէջ կապով՝ էկկիին մէջը, փիրնին մէջը, առղին մէջը (առվի մէջ), սըրլըլին մէջը (կծուճի մէջ): Դըննին մէջը լիս զա վառի (Տան մէջ լոյս է վառվում):

Եզակի հոլովման հարացույցը կլինի հետևյալը՝

ուղր.	բաղօր (քաղաք)
սեռ.	բաղրի(ն)
տր.	բաղրին
հայց.	բաղօրը
բաց.	բաղրէն
գործ.	բաղրօվ

Հոգնակի սեռականը կազմվում է՝

ա)՝ -ղէր հոգնակերտ մասնիկի դեպքում ուղղականի՝ -ղէր վերջավորությունը փոխվում է՝ -ղուց-ի՝ քարդէր-քարդուց (քարերի՝ Քարդուցը իրվէն զա զըլօր (Քարերի վրա լաց էր լինում):

բ)՝ իր/էր, նիր/նէր կազմությամբ հոգնակի դեպքում սեռականում ավելանում է ու հոլովիչը. մարկրու(ն), քիրէրու(ն), ամըննիրու(ն), իլօջնիրու(ն):

Հոգնակի ց հոլովման դեպքում բացառական և գործիական հոլովների վերջավորությունները ավելանում են սեռականի, իսկ ու հոլովման դեպքում՝ ուղղականի վրա:

Եզակի և հոգնակի թվերի հոլովման հարացույցը:

Եզակի թիվ

ուղղ.	<i>րօռք</i>	<i>թիրք</i>	<i>ախայնքք</i>
սեռ.	<i>րօրի(ն)</i>	<i>թիրու(ն)</i>	<i>ախայօրի(ն)</i>
տր.	<i>րօրի(ն)</i>	<i>թիրու(ն)</i>	<i>ախայօրի(ն)</i>
հայց.	<i>րօռք</i>	<i>թիրք</i>	<i>ախայնքք</i>
բաց.	<i>բարէն</i>	<i>բօրնէ</i>	<i>ախայօրնէ</i>
գործ	<i>բարօվ</i>		

Հոգնակի թիվ

ուղղ.	<i>բարդէքք</i>	<i>թիրէր</i>	<i>ախպրդէքք</i>
սեռ.	<i>բարդուց</i>	<i>թիրէրուն</i>	<i>ախպրդուց</i>
տր.	<i>բարդուց</i>	<i>թիրէրու(ն)</i>	<i>ախպրդուց</i>
հայց.	<i>բարդէքք</i>	<i>թիրէքք</i>	<i>ախպրդէքք</i>
բաց.	<i>բարդուցնէ</i>	<i>թիրէրնէ</i>	<i>ախպրդուցնէ</i>
գործ.	<i>բարդուցօվ</i>		

ՀՈԼՈՎՈՒՄ

Բեյլանի բարբառն ունի ուր հոլովում՝ *ի, վա. ու, ուն, ուշ, օ, օն, ց:*

Եթե զոյականների հոգնակի թվի կազմության մասին խոսելիս նշեցինք, որ միևնույն բառը կարող է ստանալ և՝ մեկ, և՝ մյուս հոգնակերտ մասնիկը, ապա մի հոլովիչով հոլովվող բառը երբեք այլ հոլովիչ ընդունել չի կարող: Այս օրենքից բացառություն է կազմում դարձք (տեզք) բառը, որը հոլովվում է երկու կերպ՝ և՝ *ի* հոլովմամբ, և՝ *ուշ* հոլովմամբ:

Ի ՀՈԼՈՎՈՒՄ

Բեյլանի բարբառում գոյականների մեծ մասը ենթարկվում է *ի* հոլովման: Ի հոլովման են պատկանում.

ա) մեկ և ավելի վանկ ունեցող այն բոլոր բառերը, որոնք վերջանում են *ի-ով*՝ *ծի* (*ձի*), *իսզի* (*ուզի*), *իիկի* (*հողի*), *իրնամի* (*ինամի*), *իելի* (*հայելի*), *սինի* (*սինի*), *դիլի* (*աղվես*) – *դիլրիլին*, *գանչի* (*այծ*) – *գանչիլին*, ուր վ-ն ձայնակապ է:

Բացառություն են կազմում *ի-ով* վերջացող ժամանակ ցույց տվող բառերը, օրինակ դօրի (*տարի*), ըրգուշափրի, *իրիքշափրի*, *չորեքշափրի*, *իինկշափրի*, *զիրազի* և այլն:

- բ) ազգությունների անունները՝ *հեյ, թուրք, վըրացի*:
- գ) կենդանիների անունները՝ *խոնց, ուց, ակուզ, զարու, գուլ, էշ, փրսիզ, ջալֆին* (*վառեկ*), *ջամուզ* (*զոմեշ*):
- դ) մարդու մարմնի մասերի անունները՝ *կրծոխ, էնզէճ, ջազող, փոքր, փոքիլիք, իրիս, սիրդ:*
- ե) արյունակցական հարաբերություն ցույց տվող բառերը՝ *պուլուզ, րօք, ախայնք:*

զ) մի շաբք միավանկ և ավելի վանկ ունեցող բառեր՝ *մութ, ձուռ, բառով, ամութ, ինօտ:*

է) անձնանունները՝ *Անուշ-Անուշին, Գարարիդ-Գարարիդին, Արթին-Արթինին, Թարույի-Թարույէվին, Սըրփույի-Սըրփույլին, Հայրարիդին, Մարիվին, Յէրանույլին* (*վ-ն ձայնակապ է*):

ը) տեղանունները՝ *Աթըխին, Սօվոլըխին, Բէրուղին, Քէսարին, Յէրէվանին:*

Ի հոլովման վերջավորությունները ավելանում են բառերի եզակի ուղղական հոլովի վրա:

ուղղ.	–	<i>ձուր</i>	<i>պուլուզ</i>
սեռ.	<i>-ին</i>	<i>ձրրի(ն)</i>	<i>պըրլրզի(ն)</i>
տր.	<i>-ին</i>	<i>ձրրի(ն)</i>	<i>պըրլրզի(ն)</i>
հայց.	–	<i>ձուր</i>	<i>պուլուզ</i>
բաց.	<i>-էն</i>	<i>ձրրէն</i>	<i>պըրլրզէն</i>
գործ.	<i>-օվ</i>	<i>ձրրօվ</i>	

ՎԱ (ՎՕ) ՀՈԼՈՎՈՒՄ

Վա հոլովմամբ հոլովվում են ժամանակ ցույց տվող բառեր և այն բարդ բառերը, որոնց բաղկացուցիչ մասերից մեկը ժամանակ ցույց տվող բառ է: Այդ բառերն են՝ ամօռ-ամըռվօն, *կիշիր-կիշիրվօն*, *ցիրիգ-ցիրիգվօն*, *դօրի-դարվօն*, *վօխոդ-վօխոդվօն*, *իրգուն-իրգուան*, *իրգրվօն*, *շափօռ-շափրրվօն*, *ըրգուշափրի-ըրգուշափրվօն*, *իրիքշափրի-*

իրիշափթռվոն, ամիս-ամսրվոն, զօղիզ-զօղգրվոն, ցրմիր-ցրմըրվոն, տահար (ժամ) – տահարվոն: Վա հոլովմամբ չեն հոլովվում ամիսների անունները, թեև ժամանակ են ցույց տալիս: Նրանք ենթարկվում են ի հոլովման: Վա հոլովման վա վերջավորությունը պահպանվում է բոլոր թեր հոլովների եզակիում, բացի հայցականից և դրանց վրա ավելանում են մյուս հոլովների վերջավորությունները.

ուղղ.	ամիս	վօխող
սեռ.	ամսրվոն	վօխողվոն
տր.	ամսրվոն	վօխողվոն
հայց.	ամիս	վօխող
բաց.	ամսրվնէ	վօխողվրնէ
գործ.	ամսրվով	վօխողվով

ՈՒ

Ու արտաքին հոլովման ենթարկվում են միայն գոյականաբար գործածված բոլոր անորոշ դերբայները՝ ըրթոլ, իլլիլ, մրդնոլ, զարթոլ, կըրիլ, արոնիլ, իսադոլ: Հոլովիչը ավելանում է բառի եզակի թվի ուղղական հոլովի վրա:

ուղղ.	զարթօլը	բրթօլը
սեռ.	զարթրլու	բրթրլու
տր.	զարթրլու	բրթրլու
բաց.	զարթրլէն	բրթրլէն
գործ.	զարթրլով	բրթրլով

ՈՒՆ

ՈՒՆ ներքին հոլովման է ենթարկվում մօրթ (մարդ), թիր (բույր), դէրբօր-դէրբարուն, ընքարօր-ընքարօրուն բառերը

ուղղ.	մօրթը	թիրը
սեռ.	մօրթուն	թիրուն
տր.	մօրթուն	թիրուն
հայց.	մօրթուն	թիրուն

բաց.	մօրթէն	թիրէն
գործ.	մարթօվ (մարթիվ)	

ՈՒՉ

ՈՒՉ հոլովման ենթարկվում է միայն տալ/դոլ և տեզր/դարր, դէր-դէրուչ ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերը.

ուղղ.	դոլ	դարր
սեռ.	դոլուչ	դ արրուչ
տր.	դոլուչ	դարրուչ
հայց.	դոլ	դարր
բաց.	դոլունէ	դարրունէ

Օ

Օ ներքին հոլովման ենթարկվում են մար (մայր), հար (հայր), ախալըր (եղայր), բարմար-բարմօր, թիր-թօրը, հուրդիր-հուրդօր, մուրդիր-մուրդօր բառերը:

ուղղ.	մար	հար	ախալըր
սեռ.	մօրը	հօրը	ախալօրը
տր.	մօրը	հօրը	ախալօրը
հայց.	մարը	հարը	ախալըրը
բաց.	մօրնէ	հօրնէ	ախալօրնէ

Օ ներքին հոլովման են պատկանում նաև ություն (թին) ածանցով կազմված բառերը՝ ախալըրթին-ախալօրթօն, իր գանթին-իրգանթօն, խէվթին-խէվթօն, ըխտիյարթին-ըխտիյարթօն, յիզիտթին-յիզիտթօն, խըլանրթին-խըլանրթօն:

ՕՆ արտաքին հոլովման ենթարկվում են զընիգ (կին), էրիգ (ամուսին) և գրաբարյան միավանկ նույն վերջացող մուկն, ձուկն, նուռն, դուռն, ծունկն, լեռն բառերը.

ուղղ.	զընիգ	էրիգ	մուգ	թօրր
սեռ.	զընզօն	էրզօն	մուզօն	թօրրօն
տր.	զընզօն	էրզօն	մուզօն	թօրրօն
հայց.	զընզօն	էրզօն	մուգ	թօրր
բաց.	զընզօննէ	էրզօննէ	մուգէն	թօրրէն
գործ.			մուզօվ	թօրրօվ

ՑՈՒՈՎՈՒՄ

Ց հոլովման Բեյլանի բարբառում ենթարկվում են դէք, դօնք հոգնակերտ մասնիկ ունեցող գոյականները: Այս բառախմբի սեռականը կազմվում է ուղղականից դէք > դուց և դօնք > դօնց՝ թ > ց հերթագյությամբ, այն գրաբարյան թ > ց թէրման բարբառային համապատասխանությունն է՝ քարդէք-քարդուց, պըլլզդէք-պըլլզդուց, իշնամրդոնք-իշնամրդոնց, ախպըրդոնք-ախպըրդոնց, էնունք-էնունց, էսունք-էսունց, փիրոնդէք-փիրոնդուց, դրնդէք-դրնդուց, զօվդէք-զօվդուց, կուդդէք-կուդդուց: Բացառականը և գործիականը կազմվում են սեռականից համապատասխան հոլովական վերջավորություններով:

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԻՆ

Բառապաշտի թուրքացման պայմաններում տուժել է նաև ածական անունը: Ածականների զգալի մասը թուրքերեն փոխառյալ բառերն են. սկսած համեմատության աստիճաններ կազմող դահա (թրք. daha-ավելի) բառից, վերջացրած գույներ նշանակող բառերով՝ մասի (կապոյտ), մախիրի իրէնգ (մոխրագույն), մօռ (մուգ կապոյտ) և այլն:

Բեյլանի բարբառում ածականը դրվում է գոյականից առաջ. գոյականի հետ թվով չի համաձայնում, իոդ չի ստանում, չի հոլովվում: Այն հոլովվում է միայն գոյականաբար գործածվելիս և ենթարկվում է ի հոլովման:

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Ածական անունները Բեյլանի բարբառում լինում են երկու տեսակ.

ա) որակական, բ) հարաբերական:

Որակական ածականը Բեյլանի բարբառում ևս ունի համեմատության երեք աստիճան՝

ա) դրական,

բ) բաղդատական

գ) գերադրական:

Դրական աստիճանը բառի ուղիղ ձևն է. չօր պուկոգ-չար երեխա, իրգին մօրթ-երկար մարդ, գարջ ֆրստոն-կարձ հագուստ, մօնդր ախճին-մանր աղջիկ, բարօր մօրթ-պարապ մարդ, լընդիգ չնորօ-լեցուն պայուսակ, պարի մօրթ – բարի մարդ, պարօգ-բարակ, հօսդ/հաստ, գարջ/կարձ, խուշիր/խոշոր, պօնցըր/բարձր, ցօձ/ցած, ուղուրթ/շիտակ, ձուռ/ծուռ, ձօնդրը/ծանր, մինձ/մեծ, թիթիլ/թէթին, պօց/բաց, դաձուգ/ծածուկ, բրգդիգ/պզտիկ, աժօն/էժան, խարու/հեռու, շնոր/շուր, տար, բօղ/պաղ, խըլանի/խնլացի, անխիլր/անխելր, ախզօղ/աղքատ, անուշ, լնոյի/լեռի, անշըննորիր, իսրօգ/իստակ, աղողիդ/աղտոտ, դօլոյ (թրք. հեշտ), բազօս/պակաս, յաղլը (թրք. յուղալի), ահնօմ/անհամ, ալլը/անալի, սուրփ/սուրբ, ըրինդ/լավ, անթի/անոթի, լնն/լայն, նէդ/նեղ, իփմօն/եփած, հում, հաստուն/հաստուն, խօց/խակ, նոր/նոր և այլն:

Որակական ածականների բաղդատական աստիճանը կազմվում է և շարահյուսական (նկարազրական), և վերլուծական եղանակով:

Որակական ածականի բաղդատական աստիճանի կազմության շարահյուսական եղանակը արտահայտվում է՝

ա) ածականի և համեմատելի առարկայի բացառական հոլովի միջոցով, օրինակ՝ էս դունք էն դրննէն մինձ է: (Այս տունք այն տնից մեծ է): Մինձ ախճինը բրգդիգ ախճընէն ըրինդ է: (Մեծ աղջիկը փոքրից լավն է):

բ) դահօ/էլ բառի միջոցով, որը փոխառություն է թուրքերենից և դրվում է ածականի ուղիղ ձևի վրա՝ սկզբից: Օրինակ՝ Պարի մօրթը դահօ ըրինդ է: (Բարի մարդը ավելի լավն է): Խըլանի ախճինը դահօ մինձ է: (Խելոք աղջիկը ավելի մեծ է): Միր պըլլզդէքը դահօ ըրինդ ին թուրքուց պըլլզդէն: (Մեր երեխանները ավելի լավն են թուրքերի երեխաններից):

զ) Երեմն բաղդատականը կառուցվում է իվրեն/իրվեն (վրան) բարի օգնությամբ՝ Սայրումիս իրվեն Արթինըս հինկ դարիօվ դահօ մինձ է: (Սարփամիս վրա Արթինս հինգ տարով ավելի մեծ է):

Որակական ածականի գերադրական աստիճանի իմաստը նույնպես վերլուծական կառուցվածքով է դրսենրպում, որի ժամանակ հայերեն ամմրնօ բառն է մասնակցում՝ դրվելով բացառական հոլովով. Էն պուլուզը ամմրնէն չօր է: (Այն երեխան անենաշարն է): Ամմրնէն խրլանի մօրթը իզիք: (Ամենախելացի մարդը եկավ):

Իբրև գերադրական աստիճան բարբառում գործածվում են թուրքերենի էնկ (ամենա), հայփուն (ամենա) և հայփուննէ (ամենից) մասնիկները՝ էնկ ըրինդ մօրթը – ամենալավ մարդը, հայփուն պօնցրը (ամենաբարձրը), հայփուն մինձը, հայփուննէ բրդղիզը (ամենից փոքրը), հայփուննէ աղվիրը (ամենից լավը):

Իբրև հարաբերական ածական Բեյլանի բարբառում օգտագործվում են գոյականների ուղղական, բացառական հոլովները՝ էրծօթէ մադնի, իսզի ախճին, իրզօթէ ամօն:

Բեյլանի բարբառում, ինչպես և կիլիկյան այլ բարբառներում, գործառվում են մասնիկներ, որոնք դրվելով ածականի վրա, ավելի են շեշտում և սաստկացնում նրա որակական հատկանիշը: Օրինակ՝ ջիփ-ջիրմօգ իրիս, ջիփ-ջիրմօգ ջամրօ, սիփ-սիփ լաթիր, չօփ-չօր հավօ, իփ-իրզէն, նոյի-նոյիր, պաս-պարօգ, ուփ-ուդուրթ, ափ-աշկէրօ, գէփ-գէնէնչ, տէս-տէղին, գայս-գայրմիր:

Հարաբերական ածականները բարբառում գրականի համեմատ առանձին տարբերություններ երեան չեն հանում. բառօվ (պառավ), տաղրօծ (հոգնած), գայրմիր (կարմիր), գէնէնչ (կանաչ), տէղին (դեղին), ջիրմօգ (ձերմակ), սիփ (սև), խլոյն/խլոտ, զարրուգ/ամուսնացյալ, ծիյէվուր/ձիավոր, տիվահօր/դիվահար, մինավիր/մենավոր, տաղրօծ/հոգնած, մըրզիզ/մերկ, մավի/կապույտ, էրծօթէ (արծաթյա), իրզօթէ (երկարյա), փայնդ (փայտե) և այլն:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒԻՆ

Բեյլանի բարբառում թվականները միշտ դրվում են գոյականից առաջ. չեն հոլովվում, թվով գոյականի հետ չեն համաձայնում:

Գոյականաբար գործածվելիս թվական անունների եզակիները ենթարկվում են ի, իսկ հոգնակիները ու հոլովման:

Բեյլանի բարբառում կան հետևյալ թվականները.

ա) քանակական

բ) դասական

գ) բաշխական

դ) բազմապատկական:

Բեյլանի բարբառում ես քանակական թվականները լինում են պարզ, բարդ և բաղադրյալ:

Պարզ քանակական թվականներն են՝ մէզ, ըրգու, իրիք, չուրս, հինկ, վից, յօթը, ութու, իննի, դոսու, բրսոն, հէրիր, հազօր: Ինչպես տեսնում ենք, դրանցից մի քանիսը գործածվում են հոդով՝ դոսու, իննի (ինը), յօթը, ութու:

Քըսօն, յառոտուն, քանոտուն, իստուն, վացցուն քանակական թվականները ածանցավոր են, կազմվում են՝ սուն > ցուն վերջածանցով: Ածանցները դրվում են թվականական հնյունափոխված հիմքերի վրա:

Ինչպես արևմտահայ խմբակցության մյուս բարբառներում, այնպես էլ Բեյլանի բարբառում 70, 80, 90 թվականների անվանումները փոխ են առնվազագույն թուրքերնից՝ 70 – յէթմիշ, 80 – սաքսան, 90 – դոխսան:

Բարդ քանակական թվականներն են՝ դոսնըմէզ, դոսնըրգու, դոսնըրիր, դոսնըչուրս, դոսնըհինկ, դոսնըվից, դոսնըյօթը, դոսնըրիզը, բրսոնըհինկ, յառոտունմէզ և այլն, որոնք կազմվում են կցական եղանակով:

Բաղադրյալ թվականների մեջ մտնող բարդ թվականները կազմվում են բարդ թվականի և հազարավորի միջև դնելով ուր շաղկապը, որը, սակայն, չի դրվում հազարավորի և հարյուրավորի մեջ. հազօր ուր դոսնըհինկ, հազօր հէրիր բրսոնըչուրս, հազօր հէրիր յառոտունիրիք:

Բեյլանի բարբառը դասական թվականների համար հատուկ ձև չունի: Դասականները կազմվում են թուրքերնից փոխառյալ՝ ինչի մասնիկով, որը ավելացնում են քանակական թվականների վրա՝ հինկինչի, վիցինչի, երեմն կ՝ միայն թուրքերն և քանակականը, և՝ դասականը՝ իրինչի (երկրորդ), ուչունչուր (երրորդ), բէշինչի (հինգերորդ), ալթընչի (վեցերորդ), յէղինչի (յոթերորդ): Իրինչի գընիզն է, ուչունչուր պուլուզն է:

Հաճախ դասականի իմաստով գործածվում են եռչի (առաջին), օրթանջորլ (միջին), սօնքի (վերջին) բառերը, որոնցից երկրորդը օրթանջորլ

թուրքերնի օրտա (մեջտեղ, միջին), երրորդը՝ թուրքերնի սոն (վերջին) սոնկի բառերից են փոխառյալ:

Մեծ մասամբ այս երեք թասականները գործածվում են զավակների հերթականությունը թվարկելիս, օրինակ՝ Էռջի զավօգը Ափօն էր, օրթանջը՝ ախպարը՝ Բնդրուսը, սօնքին՝ քիրը՝ Մայրումը:

Բարբառս բաշխական թվականների համար հատուկ ձև չունի: Բաշխական թվականների իմաստը արտահայտում է բացարձակ քանակականների և տասնավորների կրկնության միջոցով, երբեմն էլ միանում է նրանց հօդ (հատ) բառը. ըրգու-ըրգու, վիշ-վիշ, չուրս-չուրս, դոս-դոս, իրիք-իրիք, հերիք-հերիք, իստուն-իստուն, իրիք-իրիք հօդ, ըրգու-ըրգու հօդ, չուրս-չուրս սրբ զանգըմօն ին և այլն:

Բազմապատկան թվականները բարբառում կազմվում են հեղ > յադ (անգամ) բառի օգնությամբ: Յադ-ը ավելանում է պարզ, բարդ և բաղադրյալ թվականներին. իրիք յադ, հինկ յադ, հազօր յադ, դոսնըհինկ յադ:

Ծրգուր (երկու) պարզ թվականը բարբառում վերջում ունի *p*: Այդ *p*-ն պահպանվում է, եթե ըրգուր-ը կազմում է բաղադրյալ թվականի եզրի անդամը և սղվում է, եթե կազմում է առաջին կամ միջին անդամը քրսոնըրգուր, դոսնըրգուր. բայց ըրգու հերիք քրսօն, ըրգու հազօր ըրգու հերիք:

ԴԵՐԱՆՈՒՆ

Բեյլանի բարբառն ունի 10 տեսակի դերանուն. անձնական, ցուցական, ստացական, հարցական, հարաբերական, փոխադարձ, անդրադարձ, որոշյալ, անորոշ, ժխտական:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անձնական դերանուններն են՝ եզակի՝ իս, տուն, էնի, ինք, հողնակի՝ մինք, տուր, էնունք, իրունք:

Անձնական դերանունները բարբառում հոլովվում են հետևյալ կերպ.

Եզակի թիվ

ուղղ.	իս	տուն	էնի	ինք
սեռ.	իս, իմիս	սկին	էնուր	իրին

տր.	ընծի	քիզի, բոկի	էնուր	իրին
հայց.	ընծի	քիզնիզ	էնուր	իրին, զինքի
բաց.	ընծնէ	քիզնէ	էնզէ	իրմէ
գործ.	ընծընօվ	քիզնօվ	էնիզօվ	իրմօվ

Հոգնակի թիվ

ուղղ.	մինք	տուր	էնունք	իրունք
սեռ.	միր	ծիր	էնունց	իրունց
տր.	միզի	ծիզի	էնունց	իրունց
հայց.	միզնիզ	ծիզնիզ	էնունց	իրունց
բաց.	միզնէ(թ)	ծիզնէ(թ)	էնունցմէ	իրունցմէ
գործ.	միզնօվ	ծիզնօվ	էնունցօվ	իրունցօվ

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ցուցական դերանուններն են. եզակի՝ էսի, էղի, էնի, ըսօ, ըդօ, ընօ: Հոգնակի՝ էսունք, էղունք, էնունք:

Ցուցական դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

Եզակի

ուղղ.	էսի	էտի	էնի
սեռ.	էսուր	էտուր	էնուր
տր.	էսուր	էտուր	էնուր
հայց.	էսուր	էտի	էնի
բաց.	էսուրնէ, էտուրմէ	էտուրնէ, էտուրմէ	էնուրնէ, էնուրմէ

Հոգնակի

ուղղ.	էսունք	էտունք	էնունք
սեռ.	էսունց	էտունց	էնունց
տր.	էսունց	էտունց	էնունց
հայց.	էսունց	էտունց	էնունց

բաց.	էսունցնէ	էտունցնէ	էնունցնէ
	էսունցմէ	էտունցմէ	էնունցմէ

Այդպես են հոլովկում նաև ըսօ, ըդօ, ընօ ցուցական դերանունները:
Էսրան (այստեղ), Էտրան (այդտեղ), Էնրան (այնտեղ), Իինթէս (այսպես), Իինդէր (այդպես), Իիննէն (այնպես), Էսդրոր (թթք. kadar-չափ) – այսքան, Էտորդրոր/այդքան, Էնդրոր-այնքան, Միգէլ/մուս բառերը գործածվում են որպես ցուցական դերանուններ: Այս դերանունները իրենց կազմում ունեն և, ու, ն դերանվանական բաղաձայնական արմատները: Ցուցական դերանունների մեծ մասը, ունենալով հատկանիշի, տեղի կամ քանակի խմաստներ, հոլովման չի ենթարկվում: Չեն հոլովկում նաև ցուցականների մեջ մեծ թիվ կազմող փոխառությունները: Գոյականների հետ ցուցական դերանունները գործածվում են նախադաս և չեն համաձայնվում, անկախ գործածվելիս ենթարկվում են դերանվանական հոլովման: Ե՛վ անձնական, և՝ ցուցական դերանունների հոգնակիի համար ունենք միևնույն ձեերը: Երկու դեպքում էլ բացառական հոլովը կազմվում է սեռական-տրականի ձևից, իսկ հոգնակիում սեռականն ու տրականը նույն կազմությունն ունեն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հանդիպում է նաև ըսիգէց (այստեղից) ձեր, ինչպես ունենք առածներում՝ ըսիգէց կացինք պէտ մը մախօթ, իզինք, դահօ պէթէր, աղօնք սախօթ:

Տեղ ցույց տվող ցուցականների հոլովման հարացույց.

ուղղ.	Էսրան	Էտրան	Էնրան
սեռ.	Էսրանցօց	Էտրանցօց	Էնրանցօց
տր.	Էտրանցօց	Էտրանցօց	Էնրանցօց
հայց.	Էսրան	Էտրան	Էնրան
բաց.	Էսրանէն, Էտրանցօց	Էտրանէն, Էտրանցօց	Էնրանէն, Էնրանցօց
գործ.	Էսրանով	Էտրանով	Էնրանով

ԱՍԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

Բեյլանի բարբառում անձնական դերանունների սեռական հոլովները ծառայում են որպես ստացական դերանուններ (իմ, իմիս, սկին, էնուր,

միր, ծիր): Լինելով սեռականի ձևեր, սրանք ուղղական հոլով չեն ունենում: Բացառականը կազմվում է տրականի հիմքին ավելացնելով նշանակությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Իմ դերանվան երկրորդական իմիս ձեր գործածվում է որոշյալ առման դեպքում, բայց սա չի խանգարում, որ դարձյալ որոշիչ հոդ ստանա՝ իմին:

Ստացական դերանունները Բեյլանի բարբառում հոլովվում են հետևյալ կերպ:

Եզակի

ուղղ.	-	-	-
սեռ.	իմ, իմիս	սկին	էնուր
տր.	իմինին	քինիտ	էնուրին
հայց.	իմինին	քինիտ	էնուրին
բաց.	իմնէ	քիննէ	էնուրնէ

Հոգնակի

ուղղ.	-	-
սեռ.	միր	ծիր
տր.	միրին	ծիրին
հայց.	միրին	ծիրին
բաց.	միրնէ	ծիրնէ

ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

Բեյլանի բարբառի հարցական դերանուններն են. ի՞վ (ո՞վ), ի՞նչ, ընչօ՞ց (ինչպէ՞ս), ու՞ր, ի՞ի (ե՞րբ), ինչի՞ր (ինչե՞ր), քօնի՞՛, ի՞նչ դրդը (որքա՞ն):

Հարցական դերանունները Բեյլանի բարբառում հոլովվում են հետևյալ կերպ:

ուղղ.	ի՞վ
սեռ.	ու՞մ
տր.	ու՞մ

հայց.	<i>ի՞վ</i>
բաց.	<i>ումէն, ումնէ՞</i>
գործ.	<i>ումօ՞վ</i>

Ի՞վ հարցական դերանվան հոգնակին կազմվում է իվ դերանվանը ավելացնելով -դէր հոգնակերտ մասնիկը՝ իվդէ՞ր:

ուղղ.	<i>իվդէ՞ր</i>
սեռ., տր., հայց.	<i>իվդու՞ց</i>
բաց.	<i>իվդուցնէ՞</i>

Մյուս հարցական դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

	եզակի	հոգնակի
ուղղ.	<i>ի՞նչ</i>	<i>ինչի՞ր</i>
սեռ., տր.	<i>ընչի՞ն</i>	<i>ինչիրու՞ն</i>
հայց.	<i>ի՞նչ</i>	<i>ինչիրու՞ն</i>
բաց.	<i>ընչէ՞ն</i>	<i>ինչիրէ՞ն</i>
գործ.	<i>ընչօ՞ն</i>	<i>ինչիրօ՞ն</i>

Ընչօ՞ն, ու՞ր, ի՞նչ հարցական դերանունները չեն հոլովվում: Դրանցից երկուսը ունեն միայն բացառականի ձև՝ *ուրգէ՞՞ն, իվու՞ց*:

Ի՞նչդրոք, ի՞նչօփի բաղադրյալ հարցական դերանունները հոլովվում են այնպես, ինչպես նրանց կազմության մեջ մտնող եզրի անդամները՝ *դրդըր(ի), չօփ(ի)* բառերը:

Հարցական դերանունների շարականական գործառությունները շատ բազմազան են՝ խնդիրներ, պարագաներ, որոշիչ, ստորոգելիսկան վերադիր և այլն:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Բեյլանի բարբառում որպես հարաբերական դերանուններ ծառայում են նույն հարցական դերանունները՝ առանց հարցական նշանների: Հարաբերական դերանունները հոլովվում են հարցական դերանունների նման:

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Բարբառիս փոխադարձ դերանուններն են. *մէզրզմէզու*, իրօր: Այս դերանուններին բնորոշ չէ հոգնակի-եզակի հակադրությունը, չունեն նաև ուղղական հոլով: Փոխադարձ դերանունները հոգնակի իմաստ ունեն և բարբառին բնորոշ օրինաչափությամբ՝ իբրև հոգնակի թվի անձնանիշ բառեր, ենթարկվում են ու արտաքին հոլովման: Մյուս հոլովաձերը կազմվում են սեռականից:

Փոխադարձ դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

ուղղ.	-	-
սեռ.	<i>մէզրզմէզու</i>	<i>իրօր</i>
տր.	<i>մէզրզմէզու</i>	<i>իրօրու</i>
հայց.	<i>մէզրզմէզու</i>	<i>իրօրու</i>
բաց.	<i>մէզրզմէֆէ</i>	<i>իրօրէ, իրօրմէ</i>
գործ.	<i>մէզրզմէզօւ</i>	

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ուշագրավ է դիտարկել բարբառում գոյություն ունեցող անձնական դերանունների ուղղական և նոյն դերանունների տրական հոլովների հարադրությամբ կազմված դերանունները, որոնք ունեն անդրադարձության իմաստ և ավելի են շեշտում անձնանիշության իմաստը: Դրանք են՝ *իս-ընծի, տուն-քիզի, ինք-իրին, մինք-միզի, տուր-ծիզի, իրունք-իրունց*:

Անձնական դերանունների նման, դերանվանական այս խմբին բնորոշ է եռաշարք հակադրությունը: Անդրադարձ դերանունները կազմությամբ բարդ բառեր են. հոլովվում են նրանց երկրորդ բաղադրիչները: Այս դերանունները սովորաբար ուղղական և սեռական հոլովներ չեն ունենում, գործառվում են իբրև պարագաներ, խնդիրներ.

Եզակի թիվ

ուղղ.	-	-	-
սեռ.	-	-	-
տր.	<i>իս ընծի</i>	<i>տուն քիզի</i>	<i>ինք իրին, ինք զինքի</i>
հայց.	<i>իս ընծի</i>	<i>տուն զիզի</i>	<i>ինք իրին, ինք զինքին</i>

բաց.	իս ընծնէ	տուն քիզնէ	ինք իրմէ, ինք զինքէ
գործ.	իս ընծնօվ	տուն քիզնօվ	ինք իրմօվ, ինք զինքօվ

Հոգնակի թիվ

ուղղ.	–	–	–
սեռ.	–	–	–
տր.	մինք մրգի	տուր ծիզի	իրունք իրունց
հայց.	մինք մրգնիզ	տուր ծիզնիզ	իրունք իրունց
բաց.	մինք մրգնէ	տուր ծիզնէ	իրունք իրունցմ
գործ.	մինք մրգնօվ	տուր ծիզնօվ	իրունք իրունցօվ

ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

Բարբառիս որոշյալ դերանուններն են. ամմէն (ամեն), միզէլ (մյուս) և հայփ (թրք. hep – ամբողջ, թում (թրք. tum – բոլորը), ալայդէքք (թրք. alay մյուսները, ուրիշները), հայր (թրք. her – ամեն, յուրաքանչյուր), հայր փօն (ամեն բան), որոնք փոխառություն են թուրքերնից: Սրանք թվային հակադրություն չունեն, հոգնակի իմաստ են արտահայտում, ունեն անվանական գործառություններ և ենթարկվում են անվանական հոլովման: Գոյականների հետ հարադրվելիս չեն հոլովվում. հոլովառությունը կրում է գոյականական բաղադրիչը՝ ամմէն մէզը-ամեն մէկը, հայր իսսօնն-ամեն մարդուց, հայփ զինօղդուցք-բոլոր մնացողներին և այլն:

Որոշյալ դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

ուղղ.	ամմէն	հայփ
սեռ.	ամմընուն	հայփուն
տր.	ամմընուն	հայփուն
հայց.	ամմէնը	հայփուն
բաց.	ամմընէն	հայփուննէ
	եզակի	հոգնակի
ուղղ.	միզէլ	միզէլիր
սեռ.	միզէլին	միզէլնիրուն

տր.	միզէլին	միզէլնիրուն
հայց.	միզէլիր	միզէլնիրը
բաց.	միզէլին	միզէլնիրին

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

Բեյլանի բարբառի անորոշ դերանունն է մը, մէզ: Անորոշ դերանունը գոյականի հետ կարող է դրվել թէ՝ նախադաս, թէ՝ վերջադաս: *Մէզ մօրթ, մօրթ մը:* Ինչպես նշել ենք, մը անորոշ դերանունը վերածվել է անորոշ հոդի: Եթե անորոշ մը հոդին հաջորդող գոյականը սկսվում է ձայնավորով կամ բաղաձայնով, ապա ը-ն պահպանվում է. *Մօրթ մը ինծի դիսօվ:* Այսին մը տուրս իլլօվ:

Որպես անորոշ դերանուն բարբառում գործ է ածվում նաև մէզ (մեկ) թվականը, որը գոյականի հետ դրվում է թէ՝ նախադաս, թէ՝ վերջադաս: Նախադաս դրվելիս այն պահանջում է գոյականի ուղղական, իսկ վերջադաս դրվելիս՝ տրական հոլովը՝ *մէզ մօրթ, մօրթուն մէզը:*

Մէզը որպես անորոշ դերանուն գործ է ածվում նաև մը, մ. մէ-ի հետ միասին. մէզ մօրթ մը դիսօ, մէզ մօրթ մը իզիր կամ մօրթ'մ իզիր:

ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

Բեյլանի բարբառի ժխտական դերանուններն են՝ *հէչ* (թրք. heç – ոչինչ), *հէչ փօն* (ոչ մի բան), *հէչսէզ* (ոչ ոք), նէ (ոչ): Հէչ և նէ ժխտականները չեն հոլովվում և չունեն հոգնակի թիվ: Հոլովման ժամանակ հոլովվում են միայն նրանց բաղադրյալները, որոնք գոյականներ են և դերանուններ և ունեն իրենց որոշակի հոլովիչները:

ուղղ.	հէչ փօն
սեռ.	հէչ փօնի
տր.	հէչ փօնին
հայց.	հէչ փօն
բաց.	հէչ փօնէ
գործ.	հէչ փօնօվ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվել է, դերանունները բարբառում հոլովկում են մասնակի դերանվանական հոլովմամբ կամ անվանական հոլովման հիմունքներով: Սակայն ընդհանրապես կարելի է ասել, որ դերանունների մի մասն է միայն հոլովկում, իսկ մի մասը ընդհանրապես թերված ձևերով չի օգտագործվում:

Փոխառյալ դերանունների թիվը բառապաշտում մեծանալով՝ մոռացության է մատնել բառապաշտի դերանունները:

Կան անհոգնական, միայն եզակի օգտագործվող դերանուններ կամ հոլովման ընթացքում եզակիի պակաս հոլովների փոխարեն օգտագործվում են հոգնակիի ձևերը՝ Էստա, Էստանոց, Էստանով և այլն:

ԲԱՅ

Հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում բայն աչքի է ընկել ձևախմաստային առանձնահատկություններով, քերականական կարգերի դրսերումների բազմազանությամբ: Այն ունի արտահայտության երկու ձև՝ դիմավոր և անդեմ:

Եթե դիմավոր ձևերին բնորոշ են դեմքի, թվի, եղանակի ու ժամանակի քերականական կարգերը, ապա անդեմ ձևերն ունեն միայն սերի քերականական կարգ:

Բեյլանի բարբառում ևս բայն ունի դիմավոր և անդեմ ձևեր, որոնք ունեն դրսերման ընդգծված տարրերություններ ինչպես ժամանակակից հայոց լեզվի, այնպես էլ բարբառների համեմատությամբ:

ԴԵՐԲԱՅՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բայի անդեմ ձևերը՝ դերբայները յոթն են.

անորոշ	խումբ	խաղօլ
ապառնի	խումբու	խաղրլու
վաղակատար	խումիր	խաղցիր
հարակատար	խումմօն	խաղցրմօն, խաղօլու
ենթակայական	խումօղ	խաղօղ
ժխտման	(չիմ) խումէ	(չիմ) խաղօլ

ընթացքի շարունակական	մեջ գտնվող	կամ	խումբէն	խաղրլէն:
-------------------------	---------------	-----	---------	----------

Արդի հայերենի համեմատությամբ բարբառում բացակայում է անկատար դերբայի հիմնական ձևը՝ ում և երկրորդական ձևերը՝ էլիս, այս վերջավորություններով: Այդ իմաստները արտահայտվում են նկարագրական եղանակով. այն է՝ ապառնի դերբայով (խումբու, խաղրլու) և վօխտ բառով. գարբերու վօխտ-կարդալիս, ըրթըլու վօխտ – գնալիս:

Գրաբարյան չորս՝ ե(լ), ա(լ), ի(լ), ու(լ) լծորդություններից Բեյլանի բարբառը պահպանել է երկուսը՝ ա(լ)-ը և ի(լ)-ը: ե(լ)-ը և ու(լ)-ը չկան, իսկ ա(լ)-ը բարբառի հնչյունական առանձնահատկության պատճառով վեր է ածվել օ(լ)-ի, այսինքն՝ շեշտի տակ ա-ն դառնում օ.

Օլ – արթըննօլ, զիշդանօլ, զարթօլ, մրնօլ և այլն:

Իլ – արծիլ, ասղընդիլ, բաքնիլ, ավիրիլ, անձրեկիլ, ըրընդիլ, բողզիլ, ըսրանիլ, ըսրասիլ, թառիլ, թաթիսիլ, թալլիլ, ընզիլ և այլն:

Ա. Ղարիբյանը գրում է. «Բեյլանի բարբառում կա երեք խոնարհում՝ ա (մրնօլ), ու (դիսնուլ), ի-է (կըրիլ)»: «Հայ բարբառագիտություն», էջ 420:

Սակայն իր բերած օրինակներում չկան ո՛չ է լծորդության, ո՛չ էլ ու լծորդության բայեր:

Մեր գրի առած բոլոր օրինակներում էլ առկա են միայն երկու՝ օ և ի լծորդություններ, իսկ դիսնուլ բայը, որ բերված է 420 էջում, բազմիցս բարբառակիրների կողմից արտասանվել է դիսնօլ: Ուրեմն բերված այդ միակ օրինակը անձշտության, թյուրիմացության հետևանք է: Մեր կարծիքով ու լծորդության միակ բայը գրաբարյան առնուլ բայն է:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Անորոշ դերբայը Բեյլանի բարբառում ունի իլ, օլ վերջավորությունները՝ կըրիլ, ուղիլ, խաղօլ, զարթօլ, աղիլ, պըռնիլ, ըկկիլ, ըրթիլ, պանիլ, ըննիլ, թուղիլ և այլն:

Ն սոսկածանց ունեցող որոշ բայերի անորոշ դերբայները հանդես են գալիս դերբայական զուգահեռ՝ իլ, օլ վերջավորություններով. տըռնիլ-տըռնօլ, կըդնիլ-կըդնօլ, իչնիլ-իչնօլ, մըդնիլ-մըդնօլ, դիսնիլ-դիսնօլ, հէձնիլ-հիձնօլ:

Այս և նման այլ բայեր խոնարհվում են ի, օ խոնարհիչներով:

Ն սոսկածանցավոր բայերի մի մասն էլ հանդես է զալիս բացառապես

միայն իլ կամ օլ դերբայական վերջավորություններով. պուսնիլ, մնոնիլ, տառնօլ, սիվնօլ:

Միևնույն դերբայի տարբեր վերջավորություններով հանդես գալը նկատված է և զքարարում: Միջին հայերենում այն ավելի քան նկատելի է. օրինակ՝ իշնել, իշնուլ, իշանել, իշանիլ և այլն:

Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս, ժամանակակից հայերենի նման, ենթարկվում է ու հոլովման:

Անորոշ դերբայի բացառական հոլովի ձևերից մեկը նման է շարունակական դերբային (ըրթըլէն, կըրթըլէն) և խոսքի մեջ կիրառվում է որպես ձևի, երբեմն նաև որպես պատճառի պարագա. այդ ձևերի դիմաց գրական հայերենը կիրառում է անորոշ դերբայի գործիական և բացառական հոլովները. օրինակ՝ Պուլուզը ուղըլէն հիվլնտցով (Երեխան ուտելուց հիվանդացավ) և Ախճինը հօցը ուղըլէն զա խաղօր (Աղջիկը ուտելով խաղում էր):

Անորոշ դերբայը ժխտական խոնարհման ժամանակ, եղանակավորիչ զանում բարի հետ խոնարհվելիս, հաճախ գործ է ածվում առանց դեմքի վերջավորությունների.

շիմ զանօ խուսօ	շինք զանօ խուսօ
շիս զանօ խուսօ	շիք զանօ խուսօ
շը զանօ խուսօ	շին զանօ խուսօ

Գալ և լալ անորոշ դերբայներից առաջ Բեյլանի բարբառում որպես ածական ավելանում է ք ձայնավորը, և այդ դեպքում բայերը հանդես են զալիս ըկկիլ, ըլիլ ձևերով:

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Ապառնի դերբայը բարբառում ունի ու վերջավորությունը, որը, բոլոր դեպքերում ավելանում է անորոշ դերբայի վրա. ըրթօլ-ըրթըլու, խաղօլ-խաղըլու, մըդնօլ-մըդնըլու, զարթօլ-զարթըլու:

Բեյլանի բարբառում չափազանց տարածված է ապառնի դերբայի իր վերջավորությամբ ձեր. ըսսրլիր-ասելու, էնըլիր-անելու, զարթըլիր-կարդալիր, կըրթըլիր-զրելիր և այլն:

Ապառնի դերբայը Բեյլանի բարբառում կարող է մասնակցել բայի եղանակային ձևերի կազմությանը և օժանդակ բայի համապատասխան ձևերի հետ միասին կազմել ապառնիի ներկա և անցյալ ժամանակները.

ԱՊԱՌՆԻ

եզակի	հոգնակի
իս ըրթըլու իմ	մինք ըրթըլու ինք
տուն ըրթըլու իս	տուր ըրթըլու իք
էնի ըրթըլու էն	էնունք ըրթըլու ին

ԱՊԱՌՆԻ ԱՆՑՅԱԼ

իս ըրթըլու ի դի	մինք ըրթըլու ինք դի
տուն ըրթըլու իք դի	տուր ըրթըլու իք դի
էնի ըրթըլու էր	էնունք ըրթըլու ին դի

Սակայն այս ձևը բարբառում տարածված կիրառություն չունի: Այդ իմաստը բարբառում հիմնականում արտահայտվում է բըդը մասնիկով և ըղձական եղանակի համապատասխան ձևերով:

Ապառնի դերբայը բարբառում լայն կիրառություն ունի որպես ուղըլու հօց, խումըլու ձուր, զարթըլու դրդո. սա միաժամանակ անորոշի սեռական հոլովածն է:

ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Վաղակատար դերբայի վերջավորությունն է իր. կըրիր (զրել), խումիր (խմել), իկկիր (եկել), լացիր (լացել), էրիր (արել), մէռիր (մեռել) և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բարբառի վաղակատար դերբայի իր վերջավորությունը համապատասխանում է զքարարի անցյալ դերբայի եալ վերջավորությանը: Այն առաջացել է եա > ի հնչյունափոխության հետևանքով, որը բարբառում ընդհանրացված, օրինաչափ երևույթ է, և լ > ր փոփոխությամբ:

Վաղակատար դերբայը բարբառում կազմվում է ներկայի և անցյալ կատարյալի հիմքից:

Ի(լ) դերբայական վերջավորության և բայածանց չունեցող բայերի վաղակատար դերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա իր

Վերջավորությունը ավելացնելու միջոցով. կրրիլ-կրրիր, խումիլ-խումիր, բսսիլ-բսսիր, խուսիլ-խուսիր:

Կրավորական և բազմապատկական ածանց ունեցող բայերի վաղակատար դերբայները կազմվում են բայածանց չունեցողների սկզբունքով. ձրովիլ-ձրովիր, ձագվիլ-ձագվիր, գրդրդիլ-գրդրդիր:

Սոսկածանց ունեցող բայերի վաղակատար դերբայր կազմվում է կատարյալի հիմքի վրա իր վերջավորությունը ավելացնելու միջոցով. հասնել-հասիր, դիսնօլ-դիսիր, մրդնօլ-մրդիր, մանիլ-մանիր, թրոնիլ-թրոիր:

Օ(վ) խոնարհման բայերի վաղակատար դերբայր կազմվում է անցյալ կատարյալի հիմքին դերբայի իր վերջավորությունը ավելացնելու միջոցով. խաղօլ-խաղօց-խաղօցիր-խաղօցիր, մընօլ-մընօց-մընօցիր, զարրօլ-զարրօց-զարրօցիր:

Պատճառական բայերի վաղակատար դերբայր բոլոր դեպքերում կազմվում է անցյալ կատարյալի հիմքին դերբայի իր վերջավորությունը ավելացնելու միջոցով. քէցընիլ-քէցուց-քէցըրից-քէցըցիր, խումըրնիլ-խումցուց-խումցըրից-խումցուցիր-խումցըցիր, հարցընիլ-հարցուց-հարցըրից-հարցըցիր-հարցըցիր:

Վաղակատար դերբայր մասնակցում է բայի եղանակային ձևերի կազմությանը և օժանդակ բայի հետ հարադրվելով կազմում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները:

ՆԵՐԿԱ

Եղակի	հոգնակի
իս կրրիր իս	մինք կրրիր ինք
տուն կրրիր իս	տուրք կրրիր իր
էնի կրրիր էն	էնունք կրրիր ին

ԱՆՑՅԱԼ

Եղակի	հոգնակի
իս կրրիր ի դի	մինք կրրիր ինք դի
տուն կրրիր իր դի	տուրք կրրիր իր դի
էնի կրրէր էր	էնունք կրրիր ին դի

ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Հարակատար դերբայր բարբառում կազմվում է մօն և օձ դերբայական մասնիկների միջոցով:

Հարակատար դերբայր բարբառում կազմվում է ներգործական և չեզոք սեռի բայերից. կրրիլ-կրրօծ-կրրմօն, խումիլ-խումօծ-խումմօն, թափիլ-թափօծ-թափմօն, խըխտիլ-խըխտրմօն-խըխտօծ:

Ներգործական սեռի բայերի հարակատար դերբայները առանց վածանցի արտահայտում են նաև կրավորական իմաստ: Հարակատար դերբայր բարբառում, սովորաբար, վ կրավորական ածանց չի ստանում:

Թեև հարակատար դերբայր բարբառում հանդէս է զալիս մօն և օձ վերջավորություններով, բայց ավելի տարածված է մօն-ը: Դերբայական այս ձևերը գործ են ածվում նաև ածականի նշանակությամբ:

Այսպիսի վերջավորությամբ դերբայներ (ավելի ճիշտ՝ ման վերջավորությամբ) առկա են բազմաթիվ այլ բարբառներում էլ:

Դերբայական այս վերջավորության ծագումը հետաքրքրել է լեզվաբաններին: Այսպիսին է Ա. Այտընյանի կարծիքը.

«...Պարսկածն դրման (դրված), կարգման (կարգված), բայց ասոնցմէ գոնէ հետքը, թեև շատ ցանցար, կը գտնուի ստորին դարերու մէջ:

...Պարոնդրուստր կարգման եղան (ԾԳ դար): Այս վերջինս կերեւայ թէ կարգումն բայանուան սեռականն ըլլայ...: Նույն պարսկական ման անցեալը կը տեսնուի մինչև հիմայ լման ածականին վրայ, որ (լի, լնու բառերէն էլած) կը նշանակէ լրացած, ամբողջ, կատարեալ, ուստի կելլն լրմնուի, լրմնցընել ածանցները»: (Ա. Այտընյան «Քննական քերականութիւն արդի հայերեն լեզուի», էջ 104):

Մօն վերջավորությամբ դերբայական ձևը Բեյլանի բարբառում ներգործական նշանակությամբ չի գործածվում. կիրառելի է կրավորական և չեզոք իմաստով. կրդնըմօն իմ, դըրմօն ն, զադմօն իմ, ուսնըմօն ն, շինմօն իմ, քիշտըմօն իս և այլն:

Հարակատար դերբայով և համապատասխան օժանդակ բայով բարբառ արտահայտում է նաև վաղակատարի (ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի) իմաստները: Այս դեպքում կիրառելի է միայն օձ վերջավորությունը. Դըննէն իգօծ է (Տնից է եկել): Միր քօյէն ախճին հավնօծ է (Մեր գյուղից աղջիկ է հավանել):

Եթե վաղակատար դերբայր համապատասխան օժանդակ բայերի հետ հարադրվելով կազմում է վաղակատար, անցյալի վաղակատար

ժամանակները միայն, ապա հարակատար դերբայը նույն եղանակով բայի հարակատար, անցյալի հարակատար ժամանակները կազմելիս միաժամանակ արտահայտում է վաղակատար, անցյալի վաղակատար ժամանակների իմաստներ, ինչպես նաև հանդես է գալիս որպես որոշիչ:

Ի(Ղ) լծորդության պարզ, կրավորական, ինչպես և բազմապատկական բայերի հարակատար դերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա դերբայի մօն, օձ վերջավորությունները ավելացնելու միջոցով, կամ, այլ կերպ ասած, անորոշ դերբայի վերջավորության փոխարեն հարակատար դերբայի վերջավորությունը դնելու միջոցով. կրիլ-կրոմօն-կրօծ, խումիլ-խումմօն-խումօծ, ըստիլ-ըստրմօն-ըստօծ, ձրուիլ-ձրումօն-ձրուօծ:

Ն սուկածանց ունեցող բայերի հարակատար դերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա -մօն և կատարյալի հիմքի վրա -օձ վերջավորությունները ավելացնելով. մրդնօլ-մրդնրմօն-մրդօծ, դիսնօլ-դիսնրմօն-դիսօծ:

Էն սուկածանց ունեցող բայերի հարակատար դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքի վրա դերբայի մօն, օձ վերջավորությունները ավելացնելով. խարվնօլ-խարվրցմօն-խարվրցօծ, մօղնօլ-մօղրցօլ-մօղրցմօն-մօղրցօծ:

Անկանոն բայերի վաղակատար, ինչպես և հարակատար դերբայները կազմվում են անցյալ կատարյալի հիմքի վրա դերբայի համապատասխան վերջավորությունները ավելացնելու միջոցով. դոլ-դրվից-դրվմօն-դրվօծ, ըկիլ-ըկկրմօն-ըկօծ:

Օ(Ղ) լծորդության պարզ բայերի հարակատար դերբայը կազմվում է դերբայի մօն, օձ վերջավորությունները անցյալ կատարյալի հիմքի վրա ավելացնելու միջոցով. խաղօլ-խաղօց-խաղցմօն-խաղցօծ, մընօլ-մընօց-մընացմօն-մընցօծ:

Պատճառական բայերի հարակատար դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքի վրա հարակատարի մօն, օձ վերջավորությունները ավելացնելու միջոցով. քէլցրնիլ-քէլցուց-քէլցրմօն-քէլցրօծ, նըսղընիլ-նըսղցուց-նըսղցմօն-նըսղցօծ:

Հարակատար դերբայը մասնակցում է բայի եղանակային ձևերի կազմությանը և օժանդակ բայի հետ կազմում սահմանական եղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակները. զարմօն իմ, շարվօծ է, խաղմօն է. Հարակատար դերբայը որպես փոխանուն գործածվելիս ենթարկվում է ի հոլովման:

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Ենթակայական դերբայը Բելյանի բարբառում, ինչպես աշխարհաբարում և հայերենի բարբառների մեծ մասում, կազմվում է -օղ վերջավորությամբ:

Ի(Ղ) լծորդության բայածանց չունեցող բայերի ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքի վրա դերբայի օղ վերջավորությունը ավելացնելու միջոցով. կրիլ-կրող, խումիլ-խումօղ, սիրիլ-սիրօղ, քրնիլ-քրնօղ:

Ըն սուկածանց ունեցող բայերի ենթակայական դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքի վրա դերբայի -օղ վերջավորությունը ավելացնելու միջոցով. խառվնօլ-խառվրցօղ, մօղնօլ-մօղրցօղ, նէղնօլ-նէղրցօղ:

Ի(Ղ) լծորդության կրավորական և բազմապատկական ածանց ունեցող բայերի ենթակայական դերբայը կազմվում է սուկածանց ունեցողների ձևով՝ անորոշ դերբայի իլ վերջավորության փոխարեն դերբայի -օղ վերջավորությունը դնելու միջոցով. ձրովիլ-ձրովօղ, գողրդիլ-գողրդրօղ, գողրդվիլ-գողրդվօղ և այլն:

Ն սուկածանց ունեցող բայերի ենթակայական դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ իլ, օղ վերջավորությունները դերբայի օղ վերջավորությամբ փոխարինելու միջոցով. մրդնիլ-մրդնօղ, կրդնիլ-կրդնօղ, դիսնօլ-դիսնօղ:

Օ(Ղ) խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքի վրա -օղ վերջավորությունը ավելացնելու միջոցով. զարրօլ-զարթրցօղ, մընօլ-մընրցօղ, խաղօլ-խաղրցօղ:

Պատճառական բայերի ենթակայական դերբայը կազմվում է անորոշ դերբայից իլ վերջավորության փոխարեն -օղ դնելու միջոցով. քէլցրնիլ-քէլցրնօղ, նըսղընիլ-նըսղցնօղ, խաղցընիլ-խաղցընօղ, զարթրցնիլ-զարթրցնօղ:

Անկանոն բայերի ենթակայական դերբայը Բելյանի բարբառում կազմվում է երկու եղանակով: Ներգործական սեռի բայերի համար՝ ներկայի հիմքի վրա դերբայի -օղ վերջավորությունը ավելացնելու միջոցով. ուղիլ-ուղօղ, էնիլ-էնօղ, դանիլ-դանօղ, տընիլ-տընօղ: Չեզոք սեռի բայերի համար՝ անցյալ կատարյալի հիմքի վրա -օղ վերջավորությունը ավելացնելու միջոցով. լոլ-լացօղ, ըրթօլ-կընօց, կացօղ, մընօլ-մընօց-մնացօղ կամ մացօղ և այլն:

Ենթակայական դերբայները հաճախ գործածվում են գոյականաբար, և նրանցից առավել գործածականները հոգնակին կազմում են հետևյալ կերպ:

ուղղ.	<i>ընօղղեք</i>
սեռ.	<i>ընօղղուց</i>
տր.	<i>ընօղղուցը</i>
հայց.	<i>ընօղղուցը</i>
բաց.	<i>ընօղղուցմ</i>

Ենթակայական դերբայը, փոխանվանաբար գործածվելիս, հոլովվում է, ենթարկվում ի հոլովման:

Ենթակայական դերբայը եղանակային ձևերի կազմությանը չի մասնակցում: Այն բարբառում, ինչպես և զրական հայերենում, խոսքի մեջ լայն տարածում ունի որպես որոշիչ, ուղղող, խուման մօրթ է (ուտող, խմող մարդ է), էնող, տարցօղ զընիգ է (անող, դնող կնիկ է):

ԺԽՍՄԱՆ ԴԵՐԲԱՅՑ

Ժխտման դերբայը Բեյլանի բարբառում ունի *ի, օ, է* վերջավորությունները:

Օ վերջավորություն են ունենում *օ(լ)* լծորդության բայերի ժխտման դերբայները. խաղօլ – (չիմ) խաղօ, խուսօլ – (չիմ) խուսօ, մընօլ – (չիմ) մընօ, ըրթօլ – (չիմ) ըրթօ, զարթօլ – (չիմ) զարթօ:

Է վերջավորություն են ունենում *ի(լ)* լծորդության չեզոք և ներգործական սերի բայածանց չունեցող բայերի ժխտման դերբայները:

Այդ վերջավորությունները, որպես կանոն, ավելանում են բայի ներկայի հիմքի վրա. այսպես՝ *քէլիլ – (չիմ) քէլէ, քընէլ – (չիմ) քընէ, նըսդիլ – (չիմ) նըսդէ, կըրիլ – (չիմ) կըրէ, խումիլ – (չիմ) խումմ, ուդիլ – (չիմ) ուդէ, բսսիլ – (չիմ) բսսմ*:

Օ(լ) լծորդության պարզ բայերի, սուկածանց ունեցող բայերի, *ի* խոնարհման կրավորական և բազմապատկական ածանց ունեցող բայերի ժխտման դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ *իլ, օլ* վերջավորությունների փոխարեն *ի, օ դնելու միջոցով*: Օրինակ՝ խաղօլ – (չիմ) խաղօ, զարթօլ – (չիմ) զարթօ, մընօլ – (չիմ) մընօ, մըդնօլ – (չիմ)

մըդնօ, դիսնօլ – (չիմ) դիսնօ, իլլիլ – (չիմ) իլլի, ձրովիլ – (չիմ) ձրովի, զօդրոդիլ – (չիմ) զօդրոդի:

Ժխտման դերբայը գործ է ածվում միայն օժանդակ բայի ժխտմական ձևի հետ և մասնակցում է բայերի ժխտմական խոնարհման սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության մեջ:

ՇԱՐՈՒԻՆԱԿԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՑ

Շարունակական դերբայը բարբառում համապատասխանում է աշխարհաբարի անորոշ դերբայի գործիական հոլովին և արտահայտում է նույն իմաստը, այն տարբերությամբ, որ այն, օվ վերջավորությունից բացի, բարբառում ունի նաև *էն վերջավորությունը*:

Օվ վերջավորությունը ավելանում է առանց բացառության բոլոր բայերի անորոշ դերբայներին. *ըրթօլ-ըրթրլօվ, զարթօլ-զարթրլօվ, ուդիլ-ուդրլօվ* և այլն:

Էն դերբայական մասնիկը նույնպես ավելանում է անորոշ դերբայի վրա. *կըրիլ-կըրթրլէն, ուդիլ-ուդրլէն, խաղօլ-խաղթրլէն, վազզիլ-վազզրլէն*:

Շարունակական դերբայը եղանակային ձևերի կազմությանը չի մասնակցում:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բեյլանի բարբառում բայերը ունեն երկու խոնարհիչ՝ *ի, օ*:

Ի խոնարհմանն են պատկանում հետևյալ բայերը՝ *շալզիլ* (շալակել), *պըզզնտիլ* (բզկտել), *քիշտիլ* (զարնել), *ձիձիլ* (ծեծել), *խումիլ* (խմել), *թափիլ* (թափել), *փըչիլ* (փչել), *զըռձիլ* (կրծել), *հիսսիլ* (հյուսել), *քաշիլ* (քաշել), *բըլլիլ* (բաթաթել), *լազիլ* (լակել), *ըադրզիլ* (մաքրել, խտակել), *քարիլ* (նետել), *հընդըրիլ* (ընտրել), *փաշիլ* (փոխել), *սիթրիլ* (վեր առնել), *էջըրթիլ* (տրորել), *զիփչիլ* (կաչել), *խէթիլ* (խայթել), *խաձնիլ* (խածել, կծել), *լափիլ* (լափել), *իփիլ* (եփել), *մաշիլ* (մաշել), *ծըրմըրիլ* (ճմկտել), *գաշիլ* (կոխել), *սարընիլ* (սապոնել), *փիրիլ* (բերել), *կընտիլ* (գնդել), *խաչիլ* (խաչել), *խաշիլ* (խաշել), *ցուլիլ* (ցողել) և այլն:

Օ խոնարհման բայերն են՝ *պանօլ* (բանալ), *տուղտուղօլ* (դողդողալ), *բընանօլ* (բնել), *վըլանօլ* (լվանալ), *խընտօլ* (խնդալ), *դարնօլ* (տարանալ),

ամընչոլ (ամաշել), կուղնօլ (գողանալ), սաղնօլ (սաղնալ, առողջանալ), խունօլ (խլանալ), մինձնօլ (մեծանալ), բրդրզնօլ (պտտիկանալ), թօննօլ (կուրանալ), հազզօլ (հազար), թընդօլ (թնդալ, շարժվել), բվլնօլ (ավելանալ), նէղանօլ (նեղանալ), զիշդանօլ (կշտանալ), ըրթօլ (երթալ), զարթօլ (կարդալ) և այլն:

Բարբառու ունի բայի հետևյալ եղանակային ձևեր՝ սահմանական, իրամայական, ըղձական, պայմանական, հարկադրական:

Սահմանական եղանակը բարբառում ունի ինը ժամանակ՝ ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար, անցյալ կատարյալ:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակի սկզբից զա, զու, զի, զը եղանակիները ավելացնելու միջոցով:

Միջին հայերենը (12-րդ դարից սկսած) ստեղծեց և կիրառեց ներկա և անցյալ անկատարի համար բոլորովին նոր ձև՝ գրաբարյան ներկա-անկատար ձևերի վրա ավելացնելով կու մասնիկը, իսկ գրաբարյան ներկան ու անցյալ անկատարը օգտագործեց ստորադասական եղանակի իմաստով:

Կու մասնիկի առաջացումը շրջադարձային երևույթ է, որ գրադեցրել է շատ հայագետների՝ Հր. Աճառյան, Ա. Այտընյան, Պետերման, Մ. Աբեղյան, Ալ. Մարգարյան և այլոք:

Ա. Այտընյանը ենթադրաբ գտնում է, որ «հնոց կու մասնիկը՝ կայ ու բառերուն բաղադրութիւնն է, եւ թէ ամփոփմամբ ըստած է կ'ու նայի՝ փոխանակ կայ ու նայի, կ'ու ուտէ փիսկ. կայ եւ ուտէ և այլն»¹⁴:

Մ. Աբեղյանը կարծում է, որ ««կոյ» մասնիկը սկզբնապես եղել է մի անկախ բառ «ահա» նշանակությամբ, ինչպես և մինչև այժմ մնում է զանազան բարբառների մեջ կո, կյո, զո, զոյ ձևերով»¹⁵:

Հր. Աճառյանը անվերապահորեն ընդունում է Ա. Այտընյանի՝ կու մասնիկի մասին արած ենթադրությունը և որպես ուժեղ կովան բերում Կեսարիայի բարբառի ձևերը՝

չկամ կարդամ	չեմ կարդում
չկար գրէի	չէի գրում
չկաս գրէիր	չէր գրում

¹⁴ Ա. Այտընյան, «Քննական բերականութիւն», Վիեննա, 1866, էջ 75–76:

¹⁵ Մ. Աբեղյան, «Աշխարհաբարի բերականութիւն», Վաղարշապատ, 1906, էջ 114:

և ճշտորեն եզրակացնում. «Կասկած չկա, որ այս բոլորի մեջ չկամ, չկաս, չկար զանազան խոնարիյալ ձևերն են կալ «կենալ» բայի, որից ածանցված է կայ ու կու»¹⁶:

Իրոք, Կեսարիայի բարբառում ներկան կազմվում է զա մասնիկով, որ բարբառի խազուրկ հնչյունական համակարգին համապատասխան պետք է առաջացած լինի կայ(յ) ձևից: Կա–ով ներկա են կազմում նաև Ամասիան, Բեյլանը, Մարաշը, Սվեդիան և Զեյթունը: Ա ձայնավորի կրած ընդհանուր հնչյունափոխությանը համապատասխան ունենք զօ (Մարաշ, Բեյլան), զու (Սվեդիա), զու (Զեյթուն):

Սակայն առավել զորավոր փաստը ներկա ժիստականի կազմությունն է, որ կունենա հետևյալ պատկերը՝

Կեսարիա	Բեյլան
չիքամ գիրէմ	չրօս խում
չիքաս գիրէս	չրօս խում
չիքա գիրէ	չրօ խում
չիքանք գիրէնք	չրօնք խում
չիքաք գիրէք	չրօք խում
չիքան գիրէն	չրօն խում

Դժվար չէ համոզվել, որ չիքամ, չիքաս, չիքա, չիքանք, չիքաք, չիքան առաջացել են չ + կամ, չ + կաս, չ + կայ, չ + կամք, չ + կայք, չ + կան ձևերից՝ չ–ի ազդեցությամբ կատարված կ > թ հնչյունափոխությամբ, այլև չ–ից հետո ի հնչյունի հավելումով, որ ընդհանուր երևույթ է մեր բարբառներում: Բեյլանի բարբառի չիքաք ձևն այլ բան չէ, բան չ + կայք: Կ > թ հնչյունափոխությունն ու ի հնչյունի հավելումը կատարված են վերևում մեր բացատրած պատճառով, իսկ այ > ա հնչյունափոխությունը կատարված է ա–ի հնչյունափոխությանը համապատասխան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Եթե բայի առաջին հնչյունին հաջորդող հնչյունը ա է կամ ա, սահմանական եղանակի մասնիկը լինում է զա կամ գա՞՝ զարթօմ – զա զարթօմ, թաշիմ – գա՞ թաշիմ, վառիմ – զա վառիմ, եթե օ է, ներկայի մասնիկը լինում է զը՝ կօհանօմ – զը կօհանօմ,

¹⁶ Հր. Աճառյան, «Լիակատար բերականութիւն», 4-րդ հատոր, էջ 393:

Եթե *ի* է, ներկայի մասնիկը լինում է *գի՝ սիրիմ* – *զի սիրիմ*, և եթե *ու* է լինում՝ դառնում է *զու՝ խումիմ* – *զու խումիմ*:

ԸՆԴԱԿԱՆ

Եղակի	հոգնակի
<i>կրրիմ</i>	<i>կրրինք</i>
<i>կրրիս</i>	<i>կրրիք</i>
<i>կրրէ</i>	<i>կրրին</i>
<i>զարթօմ</i>	<i>զարթօնք</i>
<i>զարթօս</i>	<i>զարթօր</i>
<i>զարթօ</i>	<i>զարթօն</i>

ԱՆՀԻՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱ

զա կրրիմ	զա կրրինք
<i>զա կրրիս</i>	<i>զա կրրիք</i>
<i>զա կրրէ</i>	<i>զա կրրին</i>
<i>զա զարթօմ</i>	<i>զա զարթօնք</i>
<i>զա զարթօս</i>	<i>զա զարթօր</i>
<i>զա զարթօ</i>	<i>զա զարթօն</i>

Զայնավորով սկսվող բայերին *զա*, *գայ*, *զու*, *զը*, *զի* եղանակիչներն ավելացնելիս, վերջիններիս *ա*, *այ*, *ու*, *ը*, *ի* ձայնավորները կրճատվում են (*զա ամըշօմ* – *զ’ամըշօմ*, *գայ էնիմ* – *զ’էնիմ*) և սահմանական եղանակի ներկան կազմելիս բայց ունենում է երկու եղանակիչ՝ *զա գ’ուսնիմ*, *զա գ’ամըշօմ*, *զա զ’արթօննօմ*, *զա զ’առնում* և այլն:

զա գ’ուսնիմ	զա գ’ամըշօմ	գայ զ էնիմ
<i>զա գ’ուսնիս</i>	<i>զա գ’ամըշնօս</i>	<i>գայ զ էնիս</i>
<i>զա գ’ուսնէ</i>	<i>զա գ’ամըշնօ</i>	<i>գայ զ էնէ</i>
<i>զա գ’ուսնինք</i>	<i>զա գ’ամըշնօնք</i>	<i>գայ զ էնէնք</i>

զա գ’ուսնիք	զա գ’ամըշնօք	գայ զ էնէք
<i>զա գ’ուսնինք</i>	<i>զա գ’ամըշնօնք</i>	<i>գայ զ էնէնք</i>

Գա, գայ, զու, զը, *զի* եղանակիչները բարբառում, առանց բացառության և շեղման, դրվում են բայից առաջ:

Հայտնի է, որ միջին հայերենն ու արևմտահայ գրականը սահմանականի և պայմանականի ներկա-անցյալի համար նույն ձևերն են օգտագործում: Եվ ընդհանրապես այս երևույթն ուղեկցել է հայերենին իր գոյության ամբողջ ժամանակարնթացքում:

ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Անցյալ անկատար ժամանակում դեմքի վերջավորություններն են. եղակի՝ *ի*, *իր*, *էր*, *հոգնակի՝ ինք*, *իք*, *ին*:

Այս վերջավորությունները բոլոր լծորդությունների բայերի համար ընդհանուր են: Այս վերջավորությունները ավելանում են բայահիմքին: Բացի այս, անցյալի զաղափարն ուժեղացնելու համար ավելանում է դի մասնիկ-բառը: Եղակի երրորդ դեմքը այդ մասնիկը չի ունենում:

զա կրրի դի	զա զարթի դի
<i>զա կրրիր դի</i>	<i>զա զարթիր դի</i>
<i>զա կրրէր</i>	<i>զա զարթէր</i>
<i>զա կրրինք դի</i>	<i>զա զարթինք դի</i>
<i>զա կրրիք դի</i>	<i>զա զարթիք դի</i>
<i>զա կրրին դի</i>	<i>զա զարթին դի</i>

Սահմանական եղանակի ապառնի իմաստը բարբառում հիմնականում արտահայտվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայով:

ԱՊԱՐՆԻ

կրրըլու իմ	զարթըլու իմ
<i>կրրըլու իս</i>	<i>զարթըլու իս</i>
<i>կրրըլու է</i>	<i>զարթըլու է</i>
<i>կրրըլու ինք</i>	<i>զարթըլու ինք</i>

կրրլու իր	զարթրլու իր
կրրլու ին	զարթրլու ին

Սպառնու անցյալի ձեւքը կազմվում էն նույն սկզբունքով, ինչպես և նույն եղանակի ներկա ձեւքը.

կրրլու ի դի	զարթրլու ի դի
կրրլու իր դի	զարթրլու իր դի
կրրլու էր	զարթրլու էր
կրրլու ինք դի	զարթրլու ինք դի
կրրլու իր դի	զարթրլու իր դի
կրրլու ին դի	զարթրլու ին դի

Սահմանական եղանակի վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի ներկայով.

կրրիր իմ	զարթրցիր իմ
կրրիր իս	զարթրցիր իս
կրրիր է	զարթրցիր է
կրրիր ինք	զարթրցիր ինք
կրրիր իր	զարթրցիր իր
կրրիր ին	զարթրցիր ին

Սահմանական եղանակի անցյալ վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի անցյալով.

կրրիր ի դի	զարթրցիր ի դի
կրրիր իր դի	զարթրցիր իր դի
կրրիր էր	զարթրցիր էր
կրրիր ինք դի	զարթրցիր ինք դի
կրրիր իր դի	զարթրցիր իր դի
